1960 - ական թվականների խորհրդահայ պատմագրության մեջ կարևորագույն տեղ է զբաղեցրել Մերձավոր և Միջին Արևելքի հայկական համայնքների պատմության ուսումնասիրության հիմնախնդիրը: Խնդրո առարկա ժամանակաշրջանում, հայկական համայնքների պատմության պատմագրությունը գրեթե զերծ էր հրապարակախոսական, գաղափարախոսական-քարոզչական նկարագրից: Ճիշտ է, նրա տեսական հիմքում նախկինի պես ընկած էին մարքսիզմ-լենինիզմի համապատասխան դրույթները, բայց մարքսիզմ-լենինիզմ դասականների գործերից բերված քաղվածքները հաճախ արգելք չէին հանդիսանում գնահատականների օբյեկտիվության համար, առավել ևս, երբ խնդիրը վերաբերում էր այդ համայնքների ձևավորման ու զարգացման առավել վաղ ժամանակահատվածի գնահատությանը:

Այս տասնամյակում լույս տեսած աշխատությունները, չնայած խորհրդային գաղափարախոսության պարտադրանքներին, փորձում են ավելի օբյեկտիվորեն գնահատել հայկական համայնքների պատմությունը: Դրանք ունեն գիտական և գիտա-մեթոդական կարևոր նշանակություն հայկական համայնքների պատմության նորովի ուսումնասիրության համար:

**Բանալի բաներ.** Մերձավոր և Միջին Արևելք, պատմագրություն, աշխատություն, հողված, հայկական համայնք, հայկական սփյուռք, գաղթօջախ, սփյուռքահայ, կուսակցություն, աշխատանքային կողմնաբան, ազգային-ազատագրական շարժում, դեմոկրատական շարժում, բուրժուազիա, մարքսիզմ-լենինիզմ, գաղութարար, միջազգային իմպերիալիզմ, առաջադիմական և հետադիմական ուժեր:

1950-ական թթ. կեսերից, մասնավորապես ԽՄԿԿ XX համագումարից հետո, ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում պատմագրությունը թևակոխում է զարգացման նոր փուլ, ինչը նշանավորվում է նաև հայկական գաղթավայրերի պատմությանը նվիրված նոր և արժեքավոր ուսումնասիրությունների ստեղծումով: Հանդես է գալիս երիտասարդ, նորարար պատմաբանների մի սերունդ, որը երկրի կյանքում տեղի ունեցող բարեբար փոփոխությունների ազդեցության ներքո սկսում է ուսումնասիրության առարկա դարձնել Սփյուռքի պատմության հիմնահարցերը՝ Հր. Ռ. Միմոնյան, Կ. Լ. Դավլաթյան, Ջ. Ս. Կիրակոսյան, Լ. Ա. Խուրշուդյան, Հ. Վ. Հակոբյան, Հ. Ու. Մելիքսեթյան, Ն. Հ. Հովհաննիսյան, Մ. Ա. Բաբլոյան, Հ. Խ. Թոփուզյան և այլք: Ընդ, որում, հայկական համայնքների պատմության ուսումնասիրությունն ընթանում էր գաղթավայրերի ամենատարբեր հիմնախնդիրների ընդգրկման ճանապարհով, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ուղղությունները.

Առաջին. Հայկական համայնքների ձևավորման և զարգացման ամբողջական պատմությունը ներկայացնող աշխատություններ:

Երկրորդ. Պատմական զարգացման կոնկրետ ժամանակահատվածում հայկական համայնքների պատմությանը նվիրված աշխատություններ:

Երրորդ. Աշխատություններ, որոնցում հայկական համայնքների պատմությունը ներկայացված է տեղի ժողովուրդների՝ օտար տիրապետության դեմ մղած ազատագրական պայքարի ուսումնասիրության համատեքստում:

Չորրորդ. Հայկական համայնքների սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին, ինչպես նաև տարբեր երկրների մշակութային կյանքում և տնտեսությունների մասնաբաժնում հայերի ունեցած դերի ու ազդեցության լուսաբանությանը նվիրված աշխատություններ:

Հինգերորդ. Հայկական համայնքներում գործող հայ քաղաքական կուսակցությունների գործունեությանը նվիրված աշխատություններ և այլն:

Անշուշտ, չենք կարող պնդել թե քննության ենթակա ժամանակաշրջանում հայկական համայնքների խորհրդահայ պատմագրությունն իր գնահատականների մեջ եղել է անաչառ և անկողմնակալ: Ասվածը մասնավորապես վերաբերում է քաղաքական կուսակցությունների գործունեությանը տրված գնահատականներին: Բայց, ընդհանուր առմամբ, այն արձանագրել է նաև լուրջ հաջողություններ: Կարծում ենք, սա անժխտելի փաստ է:

Հարկ ենք համարում շեշտել, որ հատկապես 1960-ական թթ. սկսած, ինչպես ընդհանրապես խորհրդահայ, այնպես էլ հայկական համայնքների պատմության պատմագրությունը գրեթե զերծ էր հրապարակախոսական, գաղափարախոսական-քարոզչական նկարագրից: Ճիշտ է, նրա տեսական հիմքում նախկինի պես ընկած էր մարքսիզմ-լենինիզմի համապատասխան դրույթները, բայց մարքսիզմ-լենինիզմի դասականների գործերից բերված քաղվածքները հաճախ արգելք չէին հանդիսանում գնահատականների օբյեկտիվության համար, առավել ևս, երբ խնդիրը վերաբերում էր այդ համայնքների ձևավորման ու զարգացման առավել վաղ ժամանակահատվածի գնահատությանը:

Փորձենք վերլուծել քննության ենթակա ժամանակահատվածում խորհրդահայ պատմագրության կողմից ստեղծված Մերձավոր ու Միջին Արևելքի հայկական համայնքների պատմությանը նվիրված ուսումնասիրությունները:

Խնդրին վերաբերող առաջին ուսումնասիրություններից մեկը Ջ. Կիրակոսյանի և Հ. Հակոբյանի գրքույկն է<sup>1</sup>: Թեև վերջինս գրվել էր Դաշնակցության դեմ գաղափարական պայքարի նկատառումով, բայց նրա ուշադիր և մանրակրկիտ ուսումնասիրությունը օգնում է օբյեկտիվ պատկերացում կազմելու այդ տարիներին Մերձավոր Արևելքի երկրներում հայկական համայնքների տնտեսական, մշակութային և քաղաքական գոյավիճակի մասին: Աշխատությունը զարգանում է հետևյալ տրամաբանությամբ: Նախ գովերգվում է Մերձավոր Արևելքի մի շարք երկրների (Սիրիա, Լիբանան, Եգիպտոս և այլն) պայքարն ընդդեմ ամերիկյան գլոբալ-ֆրանսիական գաղութարարների: Ըստ հեղինակների, արաբական երկրի բնակչությունն, անկախ դասակարգային պատկանելությունից, միավորվել էր ազգային-ազատագրական պայքարի խնդրի շուրջ: Բայց պայքարի հաջող ելքից հետո, անջրպետվել էին ժողովրդի տարբեր շերտերի շահերը: Այսինքն, բուրժուազիան, ի վերջո, դավաճանել էր աշխատավորության շահերին:

<sup>1</sup> Տե՛ս *Կիրակոսյան Ջ., Հակոբյան Հ.*, Դաշնակներն իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր Արևելքում, Երևան, 1960:

Սա այն հայեցակարգային մոտեցումն է, որը պարտադրում էր կոմունիստական գաղափարախոսությունը: Նման հարցադրումն, անշուշտ, արհեստական էր և այն պատճառով, որ եթե այդ «բուրժուազիան» մերժում էր զարգացման խորհրդային ուղին, ապա՝ դա ամենևին չէր նշանակում, թե նա դավաճանում էր սեփական ժողովրդին կամ «աշխատավորությանը»:

Սակայն, ըստ աշխատության հեղինակների, երբ այդ պայքարը պսակվում է հաջողությամբ և «ազգային բուրժուազիան» հասնում է իշխանության, իր երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ճանապարհին վարում է «նեղ դասակարգային քաղաքականություն», արդեն համագործակցում է հակաժողովրդական ուժերի հետ և մերձեցման ուղիներ գտնում իր երեկվա թշնամիների հետ: Արդյունքում սրվում են դասակարգային ներքին հակասությունները: Հարկավ սա լենինյան թեզի կրկնությունն էր: Ստեղծված իրավիճակից ելքը, բնականաբար, պրոլետարիատի գլխավորությամբ հեղափոխական պայքարի ծավալումն էր՝ ընդդեմ ապազգային բուրժուազիայի, որը հայրենասեր էր այնքանով, որքանով առաջնորդում էր պայքարն ընդդեմ իմպերիալիզմի լծի:

Միանգամայն հասկանալի է, որ հրամցվող այս տեսության հետևում առկա էին խորհրդային Միության քաղաքական նպատակները, որոնցից գլխավորը աշխատավորության դրության շահարկման ճանապարհով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում իր ազդեցության ոլորտների ընդլայնումն էր:

Տեսական այս ընդհանրացումները միանգամայն հասկանալի են, և բնական է, որ դրանց հիմքով պետք է մշակվեին հայեցակարգեր Մերձավոր Արևելքի հայկական համայնքներում ընթացող քաղաքական գործընթացների վերաբերյալ: Ամենևին պատահական չէ, որ այս առումով հիմնական սևեռակետը դարձյալ պետք է հանդիսանար Հ. Յ. Դաշնակցությունը:

Մեր համոզմամբ, եթե Դաշնակցությունն, ընդհանուր առմամբ ուներ հակախորհրդային կողմնորոշում, ապա՝ դրանից ամենևին չի հետևում, որ նա արևմտյան գաղութարարների կամակատարն էր: Ի վերջո, երբ այսօր արդեն չկա խորհրդային Միությունը, կարծում ենք, ակնհայտ է այն ճշմարտությունը, որ սոցիալիզմի քողի ներքո ոչ պակաս գաղութարար էր և ԽՍՀՄ-ը: Չպետք է անտեսել նաև այն, որ հիշյալ աշխատությունը գրելու պահին դրա հեղինակները չէին կարող ավելին ասել, մինչդեռ արաբ ժողովրդի մի ստվար մասը ԽՍՀՄ-ը համարում էր այն երկիրը, որն ապավինում էր «մասնավորապես հետադիմական, պահպանողական տարրերուն, քանդելու համար տվյալ երկրի ազգային միությունը»<sup>2</sup>:

Հայկական համայնքների մշակութային կյանքը ներկայացնող մի ուրվագիծ կարելի է համարել Մ. Գասպարյանի ժամանակի համար բավականին ուշագրավ աշխատությունը<sup>3</sup>: Այն հիմնականում նվիրված է 1959-1960թթ. Ծավալված մշակութային իրադարձությունների լուսաբանությանը: Օգտագործելով սփյուռքահայ մամուլում այդ տարիներին հրապարակված նյութերը, հեղինակն ըստ մայրցամաքների և երկրների այբբենական կարգով դասավորել է դրանք: Նյութերի որոշ մասը նա հավաքել է գաղթավայրեր կատարած իր պաշտոնական շրջագայությունների ժամանակ: Աշխատության նշանակության և հետապնդած նպատակի մասին պատկերացում են տալիս հեղինակի հետևյալ տողե-

<sup>2</sup> *Գիրակոսյան Ջ.*, Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 18:

<sup>3</sup> Տե՛ս *Գասպարյան Մ.*, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962:



րը. «Ներկա աշխատությունն ամփոփ տեղեկություններ է պարունակում արտասահմանի հայ գաղութների հասարակական կյանքի, մշակութային կազմակերպությունների, պարբերական մամուլի և այլ հիմնարկների մասին: Գաղութների առաջացման ու զարգացման վերաբերյալ նյութերը տրվում են միայն ավելի ամբողջական գաղափար տալու համար»<sup>4</sup>: Հեղինակի հաղորդած տեղեկությունները վերաբերվում են ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բրազիլիայի, Կանադայի, Ուրուգվայի, Թուրքիայի, Իսրայելի, Իրանի, Լիբանանի, Կիպրոսի, Հնդկաստանի, Հորդանանի, Հեռավոր Արևելքի (Ավստրալիա և Խաղաղ օվկիանոսի երկրներ), Եվրոպայի, Եգիպտոսի, Սիրիայի, Սուդանի, Անգլիայի, Ավստրիայի, Բուլղարիայի, Իտալիայի, Հունաստանի, Ռումինիայի, Ֆրանսիայի հայկական գաղթօջախներին:

Աշխատության վերջում հակիրճ տեղեկատվություն է տրվում «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության մասին, վիճակագրական տեղեկություններ են ներկայացվում արտասահմանում ապրող հայերի մասին:

Ընդհանրացնելով, նշենք Ս. Գասպարյանի ուսումնասիրության գնահատելի կողմերը.

ա) Աշխատությունն ունի աղբյուրագիտական նշանակություն, քանզի հավաստի և հարուստ տեղեկություններ է հաղորդում Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներում տիրող իրավիճակի վերաբերյալ (հատկապես մշակութային):

բ) Աշխատության մեջ կարևորվում է տեղի հայկական համայնքների մշակութային զարգացման անհրաժեշտությունը և վերջինիս դերը հայության ինքնության պահպանման խնդրում:

գ) Աշխատությունը թեպետ գերծ չէ քաղաքական-քարոզչական միակողմանի մեկնաբանումներից, սակայն կարևոր տեղեկություններ է հաղորդում ըստիությունքահայ գաղթօջախների 1958-1962 թթ. պատմության վերաբերյալ: Այն Սփյուռքի իրավիճակը լուսաբանելու առաջին հաջողված փորձն էր և հայտնի չափով իթանեց սփյուռքագիտության զարգացմանը խորհրդահայ պատմագրության մեջ:

Սփյուռքին առնչվող խնդիրներ են շոշափվում Ս. Գասպարյանի մի այլ ուսումնասիրությունում, ուր դարձյալ ուշագրավ անդրադարձներ կան Մերձավոր և Միջին Արևելքի հայկական համայնքների վերաբերյալ<sup>5</sup>: Այստեղ հեղինակը հպանցիկորեն անդրադառնում է Մերձավոր և Միջին Արևելքի համայնքների քաղաքական կյանքին, փորձում զատորոշել առաջադեմ և հետադիմական ուժերին: Հասկանալի է, որ առաջինները, նրա կարծիքով այն ուժերն էին, որոնք դրականորեն էին կողմնորոշված դեպի Խորհրդային Հայաստանը, իսկ հետադիմականը, բնականաբար, Դաշնակցությունը:

Այս առումով, հարկ ենք համարում շեշտել մեկ այլ հանգամանք: Խորհրդահայ պատմագրությունը միշտ էլ փորձել է ստեղծել այն տպավորությունը, թե Դաշնակցությունը դեմ էր Խորհրդային Հայաստանի ընդհանուր զարգացմանը: Դա ամենևին էլ ճիշտ չէ: Հիմնավորված չէ Ս. Գասպարյանի այն տեսակետը, թե Դաշնակցությունը «փորձում է վկայակոչել ցարական կառավարության պաշտոն-

<sup>4</sup>Նույն տեղում, էջ 9:

<sup>5</sup> *Գասպարյան Ս.*, Սփյուռքը հայրենիքի կողքին, տե'ս «Լենինյան ուղի», N 5, 1963, էջ 44-52:

նական քաղաքականությունը, Վորոնցով-Դաշկովների, Լոբանով-Ռոստովսկիների, Նելիդովների քաղաքականությունը» և դրանով վերաբերմունք առաջացնել ԽՍՀՄ-ի նկատմամբ<sup>6</sup>: Պարզապես, պատմական փորձից ելնելով, այդ կուսակցությունը համոզված էր, որ խորհրդային համակարգը երբեք չի կարող նպաստել հզոր Հայաստանի ստեղծմանը:

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հայկական համայնքների քաղաքական դիրքորոշումներին վերաբերող հարցերն իրենց քննարկումն են գտել Կ. Դալլաքյանի աշխատությունում<sup>7</sup>: Աշխատության վերնագիրը հուշում է, որ հեղինակը հենց սկզբից փորձել է իրարից տարանջատել հայկական համայնքներում գործող կազմակերպությունները, որից ինքնին պարզ է դառնում, որ նա սփյուռքահայ առաջադիմական կազմակերպություններ ասելով հասկանում է խորհրդամետ կողմնորոշում ունեցողներին:

Մեջբերումներ կատարելով Սփյուռքում հրատարակվող գանազան թերթերից, որոնք գովերգում էին ԽՍՀՄ խաղաղասիրական քաղաքականությունը, խորհրդա-ամերիկյան հարաբերություններում նկատվող ձևալը, Կ. Դալլաքյանը միաժամանակ հղումներ է անում նույն թերթերի հակադաշնակցական հոդվածներից, ապա կատարում հիմնական եզրակացությունը. «դաշնակցությունը միջազգային իմպերիալիզմի գործակալն է»: Ավելին, նա այն կարծիքն է հայտնում, որ արևմտյան երկրների հետախուզությունները մեկը մյուսի հետևից դավադրություններ են կազմակերպում արաբական աշխարհում, որոնց հրահրման մեջ, իբր անմասն չեն դաշնակցականները: Մնում է ենթադրել, թե Խորհրդային Միության հետախուզությունը միանգամայն հեռու է եղել նման դավադրություններից:

Հասկանալի է, որ Կ. Դալլաքյանի շոշափած հարցերը լոկ մեկ ենթատեքստ ունեին՝ ցույց տալ ԽՍՀՄ խաղաղասիրական էությունը և Արևմուտքի հակաժողովրդական դիրքորոշումը, ուստի, հարկ չենք համարում շարունակել նրա կողմից դաշնակցությանը տված գնահատականների վերլուծությունը:

Նույն հարցադրումներին և գնահատականներին հանդիպում ենք նաև Կ. Դալլաքյանի մեկ այլ աշխատությունում<sup>8</sup>:

Որպես ամփոփում նշենք, որ Կ. Դալլաքյանի գրքույկները, բխում էին ԽՄԿԿ քարոզչական, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հայությանը դեպի ԽՍՀՄ-ը կողմնորոշելու նպատակներից: Այնուհանդերձ, դրանք շահեկան կարող են լինել բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են Մերձավոր Արևելքում կոմունիստական շարժման ձևավորման պատմությամբ: Թերևս ավելի ճիշտ կլինեք գրքույկը կոչել «Միրիայի և Լիբանանի հայկական դեմոկրատական մամուլի պատմությունից», որովհետև այնտեղ քննության են առնված սիրիահայության շրջանում կոմունիստական շարժումների սկզբնավորման հարցերը:

Գաղափարական-քաղաքական որոշակի բնույթ և ուղղվածություն ունի Լ.Ա. Խուրշուդյանի աշխատությունը<sup>9</sup>: Ճիշտ է, առաջին հայացքից այն անմիջականորեն չի առնչվում մեր ուսումնասիրության հետ, բայց նրանում տեղ գտած

<sup>6</sup>Նույն տեղում, էջ 50:

<sup>7</sup> *Դալլաքյան Կ. Լ.*, Սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, Երևան, 1962:

<sup>8</sup> *Դալլաքյան Կ. Լ.*, Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, 1964:

<sup>9</sup> Տե՛ս *Խուրշուդյան Լ.*, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964:

շատ գնահատականներ կարևոր են, հատկապես երբ հարցը վերաբերում է սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքին: Խնդիրը նրանում է, որ աշխատության ստեղծման պահին ամենահոծ հայկական համայնքները գտնվում էին հենց Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում: Ուստի անվանի պատմաբանի արտահայտած տեսակետները վերաբերում էին նաև այդ տարածաշրջանի հայ համայնքների հասարակական-քաղաքական կյանքին: Հեղինակն իր վերլուծությունները կատարում է փաստական հարուստ նյութի և սփյուռքահայ մամուլի մանրագնին ուսումնասիրության հիման վրա:

Հարկ է նշել, որ աշխատության մեջ, հայ պատմագիտության մեջ թերևս առաջին անգամ արտացոլվել է Հնչակյան և Ռամկավար-ագատական կուսակցությունների դրական գործունեությունը, թեպետ Դաշնակցության գնահատականները դարձյալ տրված են շեշտված քննադատական դիրքերից:

Հեղինակը լուսաբանում է Հնչակյան կուսակցության ու ՌԱԿ-ի գործունեությունը սփյուռքում և այն գնահատում որպես առաջադիմական՝ շեշտելով վերջինիս դրական վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի հանդեպ:

Բոլորովին այլ է Լ. Խուրշուդյանի վերաբերմունքը Դաշնակցություն կուսակցության նկատմամբ: Տուրք տալով պատմագիտության մեջ տասնամյակներ շարունակ իշխող կարծրատիպերին, Խուրշուդյանը նույնպես ՀՅԴ-ին համարում է իմպերիալիզմի գործակալ: Գրքում այն կարծիքն է հայտնվում, որ Դաշնակցություն կուսակցությունը խեղաթյուրված է ներկայացնում խորհրդային իրականությունը, սփյուռքահայության շրջանում վարում է պառակտողական քաղաքականություն, դեմ է խաղաղությանը և ժողովրդավարությանը: Ճիշտ է, նա հետագայում ավելի մեղմ և գիտականորեն ընդունելի դիրքերից մեկնաբանեց դաշնակցության գործունեությունը<sup>10</sup>, բայց 1960-ական թվականների կեսերին նրա գրած աշխատությունը հասկանալի պատճառներով չէր կարող գերծ լինել գաղափարական շեղումներից:

Ընդհանրացնելով նշենք, որ Լ. Խուրշուդյանի աշխատության մեջ անշուշտ նորովի էր գնահատվում Հնչակյան և Ռամկավար կուսակցությունների գործունեությունը: Այն գերծ էր 1920-ական թթ. ձևավորված և խորհրդային պատմագիտությանը հատուկ գնահատականներից: Մինչդեռ, ՀՅԴ-ի հարցում մոտեցումները մնում էին գրեթե նույնը: Խորհրդային գաղափարախոսական պարտադրանքը թույլ չէր տալիս առավել անաչառ հիմնավորել և գնահատել ՀՅԴ ունեցած դերը գոնե հայապահպանման գործում:

Հետագոտության առարկա հիմնախնդրի ուսումնասիրության բնագավառում ուշագրավ երևույթ պետք է համարել նույն 1965 թվականին Մոսկվայում ռուսերենով լույս տեսած Լորետա Տեր-Սկրտչյանի «Հայերը Մերձավոր Արևելքի երկրներում» ուսումնասիրությունը<sup>11</sup>: Մոսկվայում լույս տեսնելու հանգամանքն արդեն ինքնին մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Հեղինակը հարցերը դնում և լուծում է ավելի իրատեսական դիրքերից, քան երևանյան հրատարակությունների շատ հեղինակներ: Առաջին անգամ միութենական ընթերցողը հնարա-

<sup>10</sup>Տե՛ս *Хуршудян Л. А.*, К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн, 1988, N 7, с. 12-31.

<sup>11</sup> *Тер-Мкртчян Л.*, Армяне в странах Ближнего Востока на современном этапе, М., 1965.

վորություն ստացավ ծանոթանալու Մերձավոր Արևելքի հայկական համայնքների պատմությանը: Աշխատությունում բավականին մանրամասն և օբյեկտիվ տվյալներ կան տարածաշրջանի հայության սոցիալ-տնտեսական վիճակի, մշակութային ու հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ:

Գաղափարաքաղաքական նպատակաուղղվածությունն առկա է նաև ակադ. Ն. Մինոյանի հեղինակած երկու մենագրություններում<sup>12</sup>: Չնայած դրանք առավելապես վերաբերում են սփյուռքահայ համայնքների սոցիալ-քաղաքական կյանքին, այնուհանդերձ, դրանցում կարևոր դիտարկումներ կան մեր կողմից հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ: Քանի որ առաջին մենագրության հիմնական տեսակետներն ավելի ամփոփ իրենց արտահայտությունն են գտել երկրորդում, ուստի հարկ ենք համարում անդրադառնալ միայն վերջինում զարգացված տեսակետներին:

Մենագրության մեջ պատմական համառոտ ակնարկով ներկայացվում է հայ ժողովրդի ողբերգական անցյալը և հիմնավորվում է այն ճիշտ եզրահանգումը, որ Սփյուռքը ցեղասպանությունից հետո աշխարհով մեկ սփռված և թուրքական յաթաղանից փրկված հայության համախմբումն է օտար երկրներում: Աշխատության մեջ նաև նշվում է, որ աշխարհի 30-ից ավելի երկրներում գոյություն ունեցող հայկական համայնքներում ստեղծվել են ազգային քաղաքական, մշակութային, կրթական և այլ հաստատություններ, և նրանք տարբեր բնագավառներում զգալի նվաճումների են հասել: Անշուշտ, ճիշտ է անվանի պատմաբանի այն կարծիքը, թե սփյուռքահայությունը չէր կարող իրեն հեռու պահել հյուրընկալված երկրների հասարակական-քաղաքական կյանքին մասնակցությունից, ինչի արդյունքում գաղթօջախներում տեղի է ունենում սկզբունքային սուր պայքար առաջադիմական ու հետադիմական ուժերի և նրանց սպասարկող քաղաքական կազմակերպությունների միջև: Բնարկե անժխտելի է, որ Սփյուռքում այդ պայքարը գոյություն ունի և կլինի մշտապես: Մեզ համար, սակայն, կարևորն այն է, թե ինչ սահմանազատում է դրվում այդ ուժերի միջև, այլ խոսքով՝ առաջադիմական և հետադիմական ուժերի ճշգրտման խնդիրն է:

1960-1980-ական թվականներին Մերձավոր և Միջին Արևելքի հայկական համայնքների պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ է գրել արևելագետ Ն. Թովուզյանը: «Հայ աշխատավորության մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-դեմոկրատական շարժումներին 1947-1952 թվականներին» վերտառությամբ հոդվածում այն միտքն է շեշտվում, թե իբր հայ աշխատավորությունը Սիրիայի և Լիբանանի աշխատավորության հետ մեկտեղ պայքար էր մղում ժողովրդավարական կառավարման համակարգ ստեղծելու համար՝ ընդդեմ անգլո-ամերիկյան իմպերիալիզմի<sup>13</sup>: Մինչդեռ, հեղինակի ներկայացրած իրադարձությունների խորքային դրդապատճառն իրականում ոչ թե դա էր, այլ ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ու Արևմուտքի առճակատում իրենց քաղաքական ազդեցության ընդլայնման համար, ինչն, իր հերթին պայմանավորված էր տնտե-

<sup>12</sup> *Մինոյան Հր.*, Դաշնակցությունը հակակոմունիզմի ծառայության մեջ, Երևան, 1966, տե՛ս նաև նույնի՝ Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1968:

<sup>13</sup> *Թովուզյան Ն.*, Հայ աշխատավորության մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-դեմոկրատական շարժումներին 1947-1952 թվականներին, տե՛ս Արևելագիտության ժողովածու, Երևան, 1964, էջ 65 – 86:

ասկան շահերով: Բոլոր այն ուժերը (հայ և արաբ), որոնք պայքարում էին անգլո-ամերիկյան ձեռնարկումների դեմ, բնականաբար, որակավորվում էին որպես առաջադիմական և ժողովրդավարական, իսկ ԽՍՀՄ-ի ձեռնարկումների դեմ պայքարողները՝ հետադիմական և հակազգային:

Հոդվածում ներկայացված է 1947-1952 թթ. արաբ ժողովրդի մղած պայքարը անգլո-ամերիկյան ծրագրերի դեմ, որոնք սպառնում էին Սիրիայի և Լիբանանի անկախությանը և նպատակաուղղված էին «Մեծ Սիրիայի» ծրագրի իրականացմանը: Մյուս կողմից, ԱՄՆ-ը մշտապես ճնշում էր գործադրում Սիրիայի և Լիբանանի վրա, պահանջելով Պարսից ծոցից Միջերկրական ծով նավերի անարգել փոխադրում:

Հ. Թոփուզյանի հաջորդ հոդվածը նվիրված է աշխատանքային կոդեքսի համար Լիբանանի արաբ և հայ աշխատավորության մղած պայքարին<sup>14</sup>: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Լիբանանի աշխատավորության մղած պայքարի արդյունքում, առաջ քաշվեց աշխատանքային կոդեքս ստեղծելու խնդիրը: Այդ պայքարը տևեց գրեթե երկու տարի՝ 1945-1946 թվականներին և ավարտվեց աշխատավորների հաղթանակով:

Ամփոփելով վերը շարադրվածը, արձանագրենք, որ ընդունելի և անընդունելի եզրահանգումներով հանդերձ, Հ. Թոփուզյանի սույն աշխատանքը լիբանանահայ համայնքի պատմության դրվագներից մեկը ներկայացնող փոքրածավալ, բայց ուշագրավ ուսումնասիրություն է: Հոդվածում առկա փաստական նյութը թույլ է տալիս երկու հետևություններ կատարելը.

ա) Արաբ և հայ աշխատավորությունը պայքարել են իրենց իրավունքների համար և այդ պայքարն ուներ սոցիալ-տնտեսական ուղղվածություն:

բ) Լիբանանի կոմկուսը՝ ստանալով ԽՍՀՄ աջակցությունը, ձգտում էր քաղաքականացնել այդ պայքարը, թեպետ հեղինակը այդ պայքարի քաղաքականացումը կապում էր առաջին հերթին Անգլիայի հետ, ինչը խորհրդային պատմագրությանը բնորոշ միտում էր:

Հ. Թոփուզյանը հիմնարար աշխատությունը նվիրված է Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և ժողովրդավարական շարժումներին հայերի մասնակցությանը<sup>15</sup>: Դրանում ամփոփված են ոչ միայն հեղինակի վերոհիշյալ երկու հոդվածները, այլև նրա կողմից հավաքված նոր նյութերը: Ժամանակագրական առումով աշխատությունն ընդգրկում է Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներից մինչև 1958 թվականը, երբ Սիրիան Եգիպտոսի հետ կազմում է Արաբական Միացյալ Հանրապետությունը, իսկ Լիբանանում սկսվում են քաղաքացիական կռիվները:

Որպես ամփոփում նշենք, որ Հ. Թոփուզյանի արտահայտած շատ տեսակետներ, այսօր միանգամայն այլ մեկնաբանություններ ունեն, բայց, դրանով հանդերձ, նրա աշխատությունը կարևոր ներդրում էր Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների 1925-1958 թթ. հակասական ժամանակաշրջանի պատ-

<sup>14</sup> Տե՛ս **Թոփուզյան Հ.**, Լիբանանի արաբ և հայ աշխատավորության համատեղ պայքարը աշխատանքային կոդեքսի համար, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Արաբական երկրներ, Երևան, 1964, էջ 110 – 134:

<sup>15</sup> Տե՛ս **Թոփուզյան Հ.**, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին 1947-1952 թվականներին, Երևան, 1968:

մության լուսաբանման գործում: Կարծում ենք, այդ հարցում չի կարող երկու կարծիք լինել:

Իրանում հայերի տեղաբաշխման վերաբերյալ հետաքրքիր ժողովրդագրական տվյալներ է քննարկում Հ. Մարտիրոսյանն իր հոդվածում<sup>16</sup>: Հայերն Իրանում հիմնականում տեղաբաշխված էին երկրի հյուսիսային և հյուսիսարևմտյան գավառներում: 1603-1608 թթ. շահ Աբաս I-ի հայերի վերաբնակեցման քաղաքականության հետևանքով նոր գաղթօջախներ են առաջանում երկրի հարավային և կենտրոնական գավառներում: Այլ խոսքով՝ բռնագաղթի հետևանքով Իրանի հայ գաղութը բաժանվում է երկու՝ հյուսիսային (Թավրիզ կենտրոնով) և հարավային (Նոր Ջուղա կենտրոնով) մասերի, «որոնք միմյանցից տարբերվում են մի շարք՝ պատմական, աշխարհագրական, էթնիկական, կազմակերպական և այլ առանձնահատկություններով»<sup>17</sup>: Այս բաժանումը պահպանվում է մինչև XX դարի 40-ական թվականները, երբ հայության նոր հոսք է շարժվում դեպի Թեհրան, որի հետևանքով առաջանում է երրորդ՝ կենտրոնական գաղթօջախը: Հեղինակն այնուհետև հերթականությամբ և ըստ բնակավայրերի, քննարկում է հայության թիվն այս երեք շրջաններում: Գնահատելին այն է, որ հեղինակը փաստական հարուստ նյութի (պարբերական մամուլ, տարեցույցեր, մարդահամարի տվյալներ, աշխատություններ) հիման վրա, մանրամասն ներկայացնում է Իրանում հայերի տեղաբաշխման ճշգրիտ պատկերը, քննարկում այն պատճառները, որոնց հետևանքով շատ հայեր ստիպված են լինում թողնել իրենց բնակավայրերը և գաղթել դեպի Թեհրան:

Հ. Մարտիրոսյանի ուսումնասիրությունը կարևոր է այն առումով, որ հստակ պատկերացում է տալիս Իրանում հայկական համայնքների տեղաբաշխման, դրանց փոփոխման պատճառների և իրանահայերի թվի վերաբերյալ: Ուստի այն միշտ կպահպանի իր արդիական նշանակությունը իրանահայության պատմությանը նվիրված մյուս ուսումնասիրությունների շարքում:

Կասկածից վեր է, որ հայկական համայնքներում մշակույթի զարգացումը հայապահպանության կարևոր գրավականներից է: Այդ խնդրում իր ուրույն դերն ունի մամուլը: Կասկածից վեր է, որ հայկական համայնքներում լույս տեսած մամուլի ուսումնասիրությունը նույնպես կարևոր նշանակություն ունի համայնքների պատմությունը համակողմանի ներկայացնելու համար: Այս առումով կարևորվում է Մերձավոր և Միջին Արևելքի հայկական համայնքների մամուլի պատմությանն նվիրված Մ. Բաբլոյանի աշխատությունը<sup>18</sup>: Հեղինակը հատկապես մանրամասնորեն է ներկայացնում լիբանանահայ պարբերականներից մեկի՝ «Անի»-ի պատմությունը: Մ.Բաբլոյանի բնութագրմամբ՝ «Անի»-ն իր կյանքը սկսում է «հայ ժողովրդի ապրած մեծ ողբերգությունից ավելի քան երեք տասնամյակ հետո»<sup>19</sup>, երբ սփյուռքահայ գրականությունն ապրում էր դժվարին և մաքառումներով լի կյանք: Ամսագրի խմբագիրն էր բանաստեղծ Վահե Վահանյանը, ով ծնունդով արևմտահայ էր: Ներկայացնելով նրա կենսագրությունը՝ Մ.

<sup>16</sup> *Մարտիրոսյան Հ.*, Հայերի տեղաբաշխումն Իրանում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Իրան, Երևան, 1969, էջ 150 – 173:

<sup>17</sup> Նույնը, էջ 150:

<sup>18</sup> Տե՛ս Բաբլոյան Մ., Սփյուռքահայ մամուլի պատմությունից: «Անի» (1946-1955), Երևան, 1955:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 12:

Բարձրյանն այնուհետև անդրադառնում է խմբագրության որդեգրած նպատակներին ու առաջնահերթություններին, հայկական համայնքներում հայրենիքի նկատմամբ վստահության մեծացման, հայրենիք-սփյուռք կապերի զարգացման, նոր գրականության ձևավորման խնդիրներին և այլն:

Մերձավոր Արևելքի երկրների հայկական համայնքների պատմության ուսումնասիրության առումով լավագույն գործերից է պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի երկհատոր աշխատությունը<sup>20</sup>: Անտարակույս, մեծ ջանքեր ու նախանձելի ջանասիրություն է պահանջվել հեղինակից նման աշխատություն գրելու համար: Ավելի քան երեսուն հայկական գաղթավայրերի պատմություն ընդգրկող այս աշխատությունը գրված է փաստական հարուստ նյութի հիման վրա: Միանգամայն ճիշտ է նկատված, որ Ա. Աբրահամյանն իր աշխատության մեջ «սփյուռքահայության պատմությունը ներկայացրել է իր սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքով, հայ գաղթավայրերում ստեղծված ակնառու արժեքներով»<sup>21</sup>:

Ա. Աբրահամյանի աշխատությունը առավել զերծ է մարքս-լենինյան տեսական հիմնավորումներից, ինչը հանդիսանում է մենագրության գլխավոր արժանիքներից մեկը: Մենագրության առավելություններից է նաև այն, որ հեղինակը հայկական համայնքների պատմությունը չի ներկայացրել հյուրընկալող երկրի պատմական միջավայրից առկախ, այլ քննարկում է այդ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի ենթախորքի վրա:

Բացի վերոնշյալ աշխատություններից և հոդվածներից 1960-ական թվականներին խորհրդահայ մամուլում լույս են տեսել նաև գիտական և քարոզչական բնույթի այլ հոդվածներ, որոնցում այս կամ այն կերպ անդրադարձ կա նաև Մերձավոր և Միջին Արևելքի հայկական համայնքների տարբեր հիմնախնդիրների<sup>22</sup>:

Ամփոփելով նշենք, որ 1960-ական թվականներին Մերձավոր և Միջին Արևելքի հայկական համայնքների պատմագրությունը նկատելի զարգացում է ապրել և գաղափարական-քարոզչական միտումից համեմատաբար զերծ գործերը գիտական կարևոր նշանակություն ունեն հայկական համայնքների պատմության ուսումնասիրության գործում:

**Кристине Яхсян – Исследование истории армянских общин стран Ближнего и Среднего Востока в 1960-х годах.** – В армянской советской историографии 1960-х годов важнейшее место занимала проблема исследования истории армянских общин Ближнего и Среднего Востока. В исследуемый период историография истории армянских общин была почти свободна от публицистического, идеологически-проповеднического описания. Правда, в её

<sup>20</sup> Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, հտ. Ա., Երևան, 1967, հտ. Բ:

<sup>21</sup> **Հարությունյան Շ. Ռ.**, Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում 1964-1988, Երևան, 1967, էջ 216:

<sup>22</sup> **Խրչայան Գ.**, Սփյուռքի մի քանի հիմնական խնդիրների մասին, տե՛ս «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1963 թ., N 8, էջ 63-76, Գևորգյան Ա., Ֆաշիզմի դեմ սփյուռքահայության մղած պայքարի պատմությունից, տե՛ս «Երիտասարդ գիտաշխատող», Երևան, 1969, N 8-9, էջ 38-44 և այլն:

теоретической основе, как и прежде, лежали соответствующие положения марксизма-ленинизма, но выдержки из трудов классиков марксизма-ленинизма часто не являлись препятствием для объективности оценок, тем более, когда вопрос касался оценки формирования и наиболее раннего периода развития этих общин.

Труды, вышедшие в свет в это десятилетие, несмотря на принуждение советской идеологии, пытаются более объективно оценить историю армянских общин. Они имеют важное научное и научно-методическое значение для нового подхода к исследованию истории армянских общин.

***Kristine Yakhshyan –Research of the history of the Armenian Communities in the Near and Middle East in the 1960s.*** – In the 1960s the problem of researching history of the Armenian communities in the Near and Middle East had a most important place. The researching period of the historiography of armenian communities' history was almost devoid of public speaking, ideological-preaching description in the period in question. Even though the respective provisions of Marxism-Leninism lay on its theoretical basis as before, extracts from Marxism-Leninism classics' works were not often an obstacle for objectivity of evaluation, especially when the problem concerned evaluation of those communities' formation and earlier periods of their development.

Despite obligations of soviet ideology, researches published in this decade make an attempt to evaluate the Armenian communities' history more objectively. They are of high academic and academic-methodological importance for anew research of Armenian communities' history.



---

---

**ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԱՐՑԱԽՈՒՄ 1639-1700ԹԹ.  
(համառոտ ակնարկ)**

**ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Այսպիսով, չնայած պատմական բարդ ժամանակաշրջանին, Արցախում շարունակվել է զարգանալ գիտակրթական կյանքը (1639-1700 թթ.): Հանրակրթական դպրոցներին զուգահեռ գոյություն են ունեցել վանական և եկեղեցական դպրոցներ: Գանձասարի, Դադի, Խաղոյի, Գոչա, Սբ. Հակոբի վանական համալիրներին զուգահեռ, գործում էին Սբ. Ստեփանոսի (Շոշ գյուղում, 1655), Սբ. Գևորգի (Ղազանչի գյուղում, 1671), Սբ. Աստվածածին (Կուսապատ գյուղում, 1686), Սբ. Ստեփանոսի (Հաղրութ, Ջրակույս գյուղում, 1698), ինչպես նաև Երիցմանկանց վանքի (1691) և այլ եկեղեցիների դպրոցները: Վերջիներս հանդիսանում են ոչ միայն կրթական, այլև գիտահետազոտական կենտրոններ: Շնորհիվ բազմաթիվ գիտական աշխատությունների, գիտության բնագավառի տարբեր ներկայացուցիչներ իրենց մեծ ներդրումն ունեցան գիտության զարգացման բնագավառում:

**Բանալի բառեր.** Արցախ, Պետրոս Խանձքեցի, Ամենափրկիչ վանք, Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցի, Ս. Ստեփանոսի թաղակապ եկեղեցի, Վարանդա, գրչություն, դպրոց, ուսումնագիտական կենտրոն, <<Քերականության>> դասագիրք, Ավետարան:

Հոդվածում հիմնականում անդրադառնում ենք սույն պատմական բարդ ժամանակաշրջանի ազգային մշակութային արժեքներից երկուսին՝ կրթությանն ու գիտությանը: Այդ հայ ժողովրդի համար քաղաքական ծանր իրադարձություններով և փորձություններով լի մի ժամանակահատված է, որի հիմնական սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառները բխեցվում են հայկական պետականության կորստից<sup>1</sup>: Հոդվածի նպատակն է հրապարակի վրա եղած գրականության, արխիվային նոր նյութերի և պարբերական մամուլում լույս ընծայված ուսումնասիրությունների հիման վրա նորովի ներկայացնել ընդգծված ժամանակաշրջանի Արցախում գիտակրթական կյանքի ընդհանուր նկարագրությունը (ի դեպ նշենք, որ սույն ժամանակաշրջանի այդ ոլորտը քիչ է ուսումնասիրված):

---

<sup>1</sup> 1375թ. Կիլիկյան հայկական թագավորության անկումից հետո, հայոց երկիրը հայտնվեց ծանր կացության մեջ, որն իր լուրջ բացասական հետևանքները թողեց նաև հայկական մշակութային բնականոն զարգացման վրա: Սյնուհետև, 14-15-րդ դարերում Լանկ-Թամուրի, կարա-կոյունլու ու ադ-կոյունլու թուրքմենական ցեղերի արյունարբու արշավանքների հետևանքով շարունակվեց հայկական մշակութային արժեքների ոչնչացումը: Իսկ XVI դարի սկզբներից մինչև XVII-րդ դարի 30-ական թվականների վերջերը, Հայաստանը այս անգամ ռազմական թատերաբեմ էր դարձել Առաջավոր Ասիայում քաղաքական առաջնության ձգտող Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև: Թուրք-պարսկական բախումները ավարտվեցին 1639թ. Կասր ի Շիրիսի (Կասրե-Շիրիս) հաշտության պայմանագրով: Հայաստանը կրկին երկատվեց. Պարսկաստանին անցան Հայաստանի արևելյան նահանգները Գուգարքը, Շիրակը, Արշարունիքի մի մասը, Արարատյան դաշտը, Սյունիքն ու Արցախը, Վասպուրականի արևելյան հատվածը: Իսկ Օսմանյան Թուրքիային՝ Հայաստանի արևմտյան տարածքները: Այս պայմանագրի կնքումից հետո, համեմատաբար առաջացան որոշ սոցիալ, տնտեսական, քաղաքական գործոններ, որոնք էլ խթան հանդիսացան հայկական մշակութային արժեքների զարգացման համար:

Հողվածը ունի ուսումնամեթոդական նշանակություն, քանզի ուսումնասիրությունում հակիրճ ներկայացվում են սույն ժամանակաշրջանում Արցախում տիրող կրթական համակարգի, ուսուցման ընթացքի, խնդիրների, որոշ մեթոդների, ուսումնագիտական հաստատությունների դերի ու նշանակության հետ առնչվող որոշ տեղեկություններ:

Հայկական կրթությունն ունի հազարամյակների պատմություն և բոլոր պատմական դարաշրջաններում դիտվել է որպես հայ ժողովրդի մշակութային առաջընթացի, ազգային ինքնուրույնության դրսևորման և գոյապահպանման կարևորագույն գործոն: Հայկական կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր ու մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Չնայած հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական ծանր իրավիճակին, 1639-1700 թթ Արցախում, ինչպես նաև Արևելյան Հայաստանի մյուս տարածքներում և հայկական գաղթօջախներում, մշակույթի գործիչները փորձում են շարունակել նախորդ դարաշրջանների կրթական ավանդույթները և դրանց զուգահեռ ստեղծել նոր մշակութային արժեքային համակարգ: Միաժամանակ նրանք առավել սերտորեն առնչվում են եվրոպական քաղաքակրթության նվաճումների հետ, որը կարևոր նշանակություն է ունենում հայկական մշակույթի արժեքային համակարգի հարստացման համար:

1639-1700 թթ. Արցախի կրթության և գիտության օջախների ստեղծման ու կայացման ամբողջական համակարգում իր առանձնահատուկ տեղն ունի Հայոց եկեղեցին: Տարբեր եկեղեցական և վանական համալիրները դրսևորվել են ոչ միայն որպես գիտակրթական կենտրոններ, այլ նաև ազգային-հասարակական կյանքի և գիտամշակութային առաջադիմության խոշորագույն օջախներ: Այդ ուսումնագիտական հաստատությունները հսկայական դեր են ունեցել ոչ միայն հայոց մշակութային գանձերը ոչնչացումից փրկելու, ուսուցիչների, բժիշկների, նկարիչների, երաժիշտների, շինարարների և այլ գիտության ներկայացուցիչների պատրաստման ասպարեզում, այլև հայ ժողովրդին կործանման վտանգից փրկելու գործում:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Ինչպես փաստում են գիտական ուսումնասիրությունները<sup>2</sup>, մինչև 19-րդ դ. դպրոցների մեծ մասը Արևելյան Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում (նաև Արցախում)<sup>3</sup> գտնվում էին եկեղեցիներին կից, որոնք մինչև 18-րդ դարի վերջերը կոչվում էին եկեղեցական, իսկ դրանից հետո՝ ծխական դպրոցներ: Հետևաբար, սույն ժամանակաշրջանում Արցախում ևս գործում էին **հասարակական, մասնա-**

<sup>2</sup> Ա. Ալպոլյան, Պատմություն հայ դպրոցի, Կահիրե, 1946: Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (10-15 -րդ), Երևան, 1958: Մ. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964: Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, /1870-1905/, Երևան, 1970: Ց. Սիմոնյան, Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության, Երևան, 1971: Գ. Հարությունյան, Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, Ստեփանակերտ, 2000 և այլն:

<sup>3</sup> Ղարաբաղ, 1911, թ. 2, էջ 2:

**վոր, եկեղեցական, վանական** տիպի դպրոցներ: Այս դպրոցները գտնվում էին տարբեր նյութական պայմաններում. դրանցից մի քանիսի՝ հատկապես հասարակական և մասնավոր տիպի դպրոցների նյութական կարգավիճակը ավելի ծանր էր: Ընդգծենք, որ դպրոցի վիճակով էր պայմանավորված ուսուցչի նյութական ու բարոյական վիճակը, նրա հասարակական դիրքն ու հեղինակությունը:

**Հասարակական** տիպի դպրոցները երբեմն շատ քիչ քանակով, երբեմն էլ մասնավորի անվան տակ շարունակում էին գործել նույնիսկ հայ ժողովրդի պատմության համար ամենաձար պայմաններում:

**Մասնավոր** դպրոցների դասընթացները հիմնականում անցկացվում էին հայ հասարակությունում հայտնի իշխաների տներում: Հայկական դպրոցները թշնամիներից թաքցնելու և ավելի ապահովելու համար, նրանց հաճախ դարձնում էին վանքերին ու եկեղեցիներին կից, որոնցից շատերը գտնվում էին հեռավոր խուլ ձորերում, ազգաբնակչությունից հեռու լեռների ծերպերում, այրերում և մենաստաններում: Նման պայմաններում մեծանում էր վանական և եկեղեցական տիպի դպրոցների թիվը:

**Վանական և եկեղեցական** տիպի դպրոցները գործում էին եկեղեցիներին ու վանքերին կից: Այսինքն, վանքերն բացի եկեղեցիների հիմնական շենքերից, ունեին նաև ժողովատներ, մեծ սրահներ, հանրակացարաններ, գրատներ, լսարաններ (ճեմարան) և դպրոցական շենքեր: Այս տիպի դպրոցները պատրաստում էին ոչ միայն եկեղեցական-հոգևորական գործիչներ, այլ նաև աշխարհիկ կյանքի համար պետական, հասարակական գործիչներ, ուսուցիչներ գրագիրներ, գրիչներ, նկարիչներ, գրքեր ձևավորող մանրանկարիչներ, գիտության այլ բնագավառի ներկայացուցիչներ:

Արցախի վերոնշյալ բոլոր տիպի դպրոցները պահվել են ժողովրդի միջոցներով ու գտնվել են նրա մշտական հոգատարության ու խնամքի ներքո: Դպրոցներում չկար կրթական մեկ ընդհանուր համակարգ (նաև Հայաստանի մնացած վայրերում)<sup>4</sup>: Կրթական համակարգից բխող համապատասխան դրույթները կազմել են վանական, եկեղեցական դպրոցները, որոնք իրենց էությանը կրել են միջնադարյան-ֆեոդալական բնույթ:

Այս մասին է վկայում նաև Վ. Երկանյանը, ով հավելում է նաև, որ Հայաստանի երկու հատվածներում էլ մինչև 19-րդ դ. գոյություն ունեցած սակավաթիվ եկեղեցական ու վանական դպրոցներում տիրապետում էր այսպես կոչված ուսուցման միջնադարյան-սխոլաստիկ, խալֆայական ձևը: Աշակերտները սովորում էին մեխանիկորեն, անգիր անելով, չկար որոշակի կարգ ու կանոն, մարմնական պատիժը համարվում էր ուսուցման պրոցեսի անբաժան մասը: Խիստ սահմանափակ էր յուրացվող գիտելիքների շրջանակը: Շատ ավելի տարածված էր խալֆաների, վարպետների, տիրացուների, քահանաների նախաձեռնությամբ կազմակերպվող տնային, մասնավոր, անհատական ուսուցում, որը ոչ մի հսկողության չէր ենթարկվում: Հաղորդվող գիտելիքների չափն ու բովանդակությունը կախված էր վարժապետի խղճից ու կարողությունից<sup>5</sup>:

Աշակերտները դպրոցներում անցնում էին հիմնականում գրագիտություն, թվաբանություն, աշխարհագրություն, աստղաբաշխություն, բնագիտություն,

<sup>4</sup> Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 324:

<sup>5</sup> Վ. Երկանյան, Հայկական դպրոցը 1800-1870թթ, <<Լրաբեր հասարակական գիտությունների>>, 1970, թ. 10, էջ 32:

երկրաչափություն, երաժշտություն, նկարչություն, քերականություն, կրոն և այլ առարկաներ:

Արցախում գիտակրթական հիմնարկների առաջնահերթ հիմնախնդիրներից են՝ շարունակել նախորդ դարաշրջաններից եկող գիտական բարձր մակարդակի ապահովումը և մատաղ սերնդին զինել ժամանակին համահունչ նոր փիլիսոփայական ու իմաստասիրական առավել զարգացած գաղափարներով: Այդ նկատառումով էլ Արցախի իշխանավորները, ինչպես նաև բարձր դասի հոգևորականներն իրենց զավակներին ուսման էին ուղարկում Հունաստան, Իտալիա, Ֆրանսիա, Ռուսաստան և այլ առավել զարգացած երկրներ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում (երբեմն որոշ ընդհատումներով) շարունակում էին գործել Ամարասի, Գանձասարի<sup>6</sup>, Դադի վանքի (նաև Դադոյի), Խաթրավանքի (նաև Խադարի, Խադայի կամ Խադոյի), Գոչավանքի (հնում՝ Քթիշ, հետագայում՝ Կոխչ, Գոխչ, իսկ նոր ժամանակներում մելիքանիստ Տոդ գյուղի անունով՝ Տոդ), Ս. Հակոբի վանքի դպրոցները<sup>7</sup>: Գործող դպրոցների կողքին 1639-1700 թթ. Արցախ աշխարհում կառուցվեցին Ս. Ստեփանոսի (Ասկերանի շրջան-*XVII*դ.), Սպիտակ Խաչ վանքի<sup>8</sup>, Ս. Հարությունի (Հաղորթի շրջան-*XVII*դ.), Շոշ գյուղի Ս. Ստեփանոսի (1655թ.), Ս. Գևորգի (Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղում-1671թ.)<sup>9</sup>, Ս. Աստվածածինի (Մարտակերտի շրջանի Կուսապատ<sup>10</sup> գյուղում-1686թ.), Երից մանկանց վանքի (Մարտակերտի շրջան, Ջրաբերդի մոտ, Թարթառի վտակ Թրդի գետակի ափին գտնվող եկեղեցին-1691թ.)<sup>11</sup>, Ջրակույս գյուղի Ս. Ստեփանոսի (Հաղորթի շրջան-1698թ.)<sup>12</sup> եկեղեցիների դպրոցները:

Արցախում գիտակրթական կյանքի կազմակերպման ու հետագա զարգացման գործում մեծ է եղել Գանձասարի Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի (կաթողիկոս՝ 1653-1675<sup>13</sup> /1678<sup>14</sup>թթ.) դերը: Նա ծնունդով Վարանդա գավառի հյուսիսում գտնվող Խանձք գյուղից է<sup>15</sup>: Նրա ջանքերով մեծ թափ ստացավ կիսավեր վանքերի վերականգնումը և նոր եկեղեցիների կառուցումը: Վերականգնվեց Վարանդայի եպիսկոպոսական կենտրոն Ամարասը<sup>16</sup>: Կառուցվեցին Խաչեն գավառի Առաջածոր գյուղի Սուրբ Աստվածածին (1668թ.)<sup>17</sup>, Խանձք գյուղի Սուրբ Ստեփանոս (1673թ.)<sup>18</sup>, Վարանդայի Հերիեր գյուղի Սուրբ Գրիգորիս (1667)<sup>19</sup>, Փառիսոսի

<sup>6</sup> *Յ. Միմոնյան*, նշվ. աշխ., էջ 82:

<sup>7</sup> Մանրամասն տե՛ս *Մ. Բարխուդարեանց*, Արցախ, Բաբու: 1895, Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 1993: *Հ. Ոսկեան*, Արցախի վանքերը, Վիեննա, 1953: Բ. Ոլուբաբյան, Արցախի պատմություն, Երևան, 1994:

<sup>8</sup> Դիվան հայ վիմագրություն, պր. 5 (Արցախ), Երևան, 1982, էջ 187:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>10</sup> *Ս. Ջալալյան*, Ճանապարհորդությունն ի Մեծն Հայաստան, հ. Ա, Տփղիս, 1848, էջ 180:

<sup>11</sup> *Խաչիկ Մ.* վարդապետ Դատեան, Երկերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2007, էջ 35:

<sup>12</sup> Դիվան հայ վիմագրություն, էջ 172:

<sup>13</sup> Ա. Մաղալյան, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը, <<Պատմաբանասիրական հանդես>>, 2008, № 3, էջ 270:

<sup>14</sup> *Լ. Մկրտումյան*, Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցու օրոք (1653-1678), <<Լրաբեր հասարկ. գիտությունների>>, 2000, № 1, էջ 88:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 143:

<sup>16</sup> Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 240, վավ 132: Նաև տե՛ս *Մ. Բարխուդարյան*, Արցախ, Բաբու 1895, էջ 74: Ս. Հասրաթյան, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Եր., 1992, էջ 17:

<sup>17</sup> Դիվան հայ վիմագրության, էջ 87:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 143:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 164:

Հին Փիփի գյուղի (1670թ.) եկեղեցիները<sup>20</sup>: Պետրոս Խանձքեցու շինարարական գործունեության շնորհիվ, գործող եկեղեցական, վանական դպրոցների գուգահեռ բացվեցին նոր դպրոցներ Արցախի տարբեր վայրերում կառուցված վերոնշյալ եկեղեցիներում: Նրա դերը նշանակալի է եղել նաև գիտության բնագավառում: Պետրոս կաթողիկոսի պատվերով Արցախի տարբեր գիտակրթական օջախներում գրվել և ընդօրինակվել են մի շարք ձեռագիր աշխատություններ, որոնցից մի մասը, ավաղ, չեն պահպանվել:

Ուսումնակրթական կենտրոնները միևնույն ժամանակ ծառայել են որպես հայ գրչության և գիտության նշանավոր օջախներ, որոնք իրենց մեջ ամփոփել են դեռևս նախորդ դարերում գործող Արևելյան Հայաստանի տարբեր վայրերի մի շարք նշանավոր գիտակրթական կենտրոնների՝ Տաթևի, Գլաձորի (նաև համալսարանների), Գոշավանքի, Սանահինի, Հաղպատի, Հաղարծինի, Բջնիի, Էջմիածնի, Այրիվանքի և այլ դպրոցների գիտական ու արվեստի բարձր արժեքները և անմիջապես կրել նրանց ազդեցությունը (նշված դպրոցների մեծ մասը շարունակել էին իրենց բեղմնավոր գործունեությունը նաև այդ ժամանակաշրջանում)<sup>21</sup>: Այդ գիտակրթական կենտրոններում գրվել, ծաղկազարդվել են, ինչպես նաև պահպանվել շատ արժեքավոր ձեռագիր մատյաններ: Այդ հայկական ձեռագիր մատյանների շնորհիվ ոչ միայն շարունակում է զարգանալ գիտակրթական կյանքը (թեպետ որոշ ընդհատումներով), այլև իրավական հիմք հանդիսանալ Արցախում գոյություն ունեցող հարուստ մշակութային ժառանգության համար: Մյուս կողմից էլ ավելի վաղ և ուսումնասիրվող ժամանակաշրջանում գրված և ընդօրինակված հայկական բազմաթիվ ձեռագրերը<sup>22</sup> հաստատում են Հայաստանի երկու հատվածներում (արևմտյան և արևելյան) տարբեր պատմական փուլերում գոյություն ունեցող գիտական օջախների մասին: Սակայն ցավով նշենք, որ Արցախ աշխարհում գրված և ընդօրինակված հայկական ձեռագրերից առավել ցայտուն էր դրսևորվել շատ քչերի պատմական ճակատագիրը: Արցախի մի շարք վայրերի հայ գրչության պատմական ժառանգությունը գրեթե չի պահպանվել:

Ինչպես նշում է Մ. Բարխուդարյանը, Խաչենի հայրենասեր մեղիքները Գանձասարի, Ծարա, Խոթա, Մայրաքաղաքի, Ջրվշտիկի Եղիշե առաքյալի և այլ վանքերի ու եկեղեցիների դպրատների ձեռագրերը բարբարոսներից փրկելու համար խնամքով երեք մասի են բաժանել ու թաքցրել մի մասը Գանձասարի ու Խոթա վանքերի մեջտեղում՝ մի քարայրի մեջ, երկրորդ մասը՝ Ջրաբերդի մոտակայքում՝ մի ստորերկրյա տեղում, իսկ երրորդ մասը՝ Գյուլիստան գավառի Հոռեկա վանքի տարածքում: Սակայն այս ձեռագրերից՝ հիմնականում Գանձասա-

<sup>20</sup> **Լ. Մկրտումյան**, Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի օրոք (1653-1678թթ), <<Լրաբեր հասարակ. գիտությունների>>, Եր., 2000, թ. 1, էջ 96:

<sup>21</sup> **Յ. Միմոնյան**, նշվ. աշխ., էջ 82-83:

<sup>22</sup> Ձեռագրերը հնադարյան ոչ տպագիր գրքեր կամ մատյաններ են՝ գրված աղյուսի, կավե սալիկի, պապիրուսի, մագաղաթի, թղթի վրա, որոնք ստեղծվել են հիմնականում վանքերին ու մենաստաններին, եպիսկոպոսարաններին ու դպրոցներին կից գրատներում: Դրանք պարունակում են արժեքավոր տեղեկություններ գրիչների, մատյանների ստղծման հանգամանքների, ինչպես նաև ժամանակաշրջանի պատմական կարևոր իրադարձությունների մասին:

րում պահված մասն է հայտնաբերվել Բաղդասար մետրոպոլիտի օրոք (1775-1854թթ.)<sup>23</sup>:

Գանձասարը իր կառուցման ժամանակից ի վեր (XIII) եղել էր հայ գրչության<sup>24</sup>, գիտության և արվեստի<sup>25</sup> նշանավոր կենտրոններից մեկը: Ըստ Լեոյի՝ այստեղ գործում էր ձեռագրերով հարուստ մատենադարան<sup>26</sup>: Այս գրչատան գիտնական վարդապետների, գրիչների, ծաղկողների վերաբերյալ որոշակի տեղեկություններ են հաղորդում վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմերին ու խաչքարերի վրա պահպանված վիմագիր արձանագրություններն ու ձեռագիր հիշատակարանները: Վանքն ուներ իր մատենադարանը և ձեռագրերի հարուստ հավաքածուն, որոնցից բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր կամ ոչնչացվել են, կամ էլ թալանվել բարբարոս թշնամիների կողմից: Չնայած այդ ծանր հանգամանքներին, ինչպես նախորդ դարերի, այնպես էլ քննարկվող ժամանակաշրջանի հայ մշակույթի ականավոր գործիչների կողմից ստեղծված արժեքավոր ձեռագիր մատյանները պահպանվել և հասել են մեզ: Հարկ է նշել, որ դրանք հիմնականում 15-18-րդ դարերի ընդօրինակություններ են, որոնք պահպանվում են Մաշտոցի անվան Մատենադարանում<sup>27</sup>:

Քննարկվող ժամանակաշրջանում ուշագրավ է Ռստակես հոգևորականի կողմից կազմած մատյանը որն օրինակվել է<sup>28</sup> Գանձասարում դեռևս 1420թ. գրված մատյանին<sup>29</sup> :

Գիտության բնագավառում բարձր է գնահատվում Գրիգոր երեցի դերը, ով 1657թ-ին Պետրոս Կաթողիկոսի պատվերով օրինակել է մի ձեռագիր մատյան: Նա օրինակել է Երուսաղեմի Սրբոց Հակոբանց վանքի ձեռագիրը՝ «Խորհրդատետր»-ը<sup>30</sup>: Հայրապետը ոչ միայն Գրիգորիին պատվիրել է գրել մատյանը, այլ նաև ծաղկազարդել, ինչը սիրով է կատարել գրիչը:

Ուշադրության արժանի է Մ. Մատենադարանում պահպանվող արժեքավոր մեկ ձեռագրում հիշատակված «Ավետարան»-ը, որը գրվել է Ավետիս քահանայի կողմից 1659 թ.: «Ավետարանի» ստացողներն եղել են Հախում Պասակերցին և Բարսեղ քահանան<sup>31</sup>: Ընդգծենք, որ Ավետիս քահանան այն գրել ու նկարազարդել է տանուտեր Հախում Պասակերցու խնդրանքով: Տեղացիներն այն կոչել են Կարմիր Ավետարան՝ «քրիստոսախօս եւ տիեզերալոյս սուրբ Կարմիր Աւետարանս»: Ավետիսը հիշատակարանի սկզբում նշում է իր ուսուցչին՝ «քաջաբան

<sup>23</sup> Մ. Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Էջմիածին, 1902, էջ 197:

<sup>24</sup> Մանրամասն տե՛ս Օ. Մ. Եգանյան, Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, Էջմիածին, Դ, 1971:

<sup>25</sup> Հ. Հակոբյան, Արցախի միջնադարյան արվեստը, Եր., 1991, էջ 11-12:

<sup>26</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2-րդ, Եր., 1973, էջ 446 :

<sup>27</sup> Մատենադարան, Կաթող. Դիվան, թղթ. 240, վավ. 132: Տե՛ս նաև Թ. Մինայան, Գանձասարի գրչության կենտրոնը, Բանբեր մատենադարանի, № 20, էջ 228:

<sup>28</sup> Ի դեպ նշենք, որ ձեռագիր մատյանների ընդօրինակման ու պատկերազարդման աշխատանքները սկզբնավորվել են դեռևս վաղ միջնադարում: Մ. Կաղանկատվացիի վկայում է, որ աղանդավորության դեմ պայքարի ընթացքում VII դարում բազմաթիվ գրքեր թափվել են Տրտու (Թարթառ) գետը (մանրամասն տե՛ս Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, գիրք Գ.):

<sup>29</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 4004, թերթ 452:

<sup>30</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 2273: Տե՛ս նաև Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբեանց, հ. VII, Երուսաղեմ, 1974, էջ 366:

<sup>31</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 3542:

տեր Մխիթարին՝ աննման վարդապետին», տեր Սարգիս վարդապետին և տեր Հակոբ շնորհազարդ քահանային<sup>32</sup>:

Մատենադարանի մեկ այլ փաստաթղթում հիշատակվում է Հովհաննես Ապահունեցու անունը, ով ընդօրինակել էր «Քերականության» դասագիրքը: 1659թ Հովհաննես Ապահունեցի երեցը «ի գեղջեն Ապահինում» եկել է «սուրբ աթոռն Գանձասար»՝ քերականություն սովորեցնելու եւ իր ցանկությամբ օրինակել է Թովմա Իտալացու Քերականությունը<sup>33</sup>: Ապահունեցին դա բացատրում է նրանով, որ ձեռքի տակ ստույգ և ընտիր օրինակ չի ունեցել և գրել է թերացումներով, ինչի համար թողություն է խնդրում. «Աղերսեմ զձեզ, ով ոք, որ հանդիպեք սմա վերծանելով կամ օրինակելով, թողութիւն շնորհեցեք սակս վրիպմանացս կամ խոշոր եւ վատ գրոցս, քանզի կար մեր այս էր<sup>34</sup>»: Այս փաստը ևս վկայում է այն մասին, որ Գանձասարի դպրոցի ուսուցման ծրագրերում կարևոր մաս է կազմել քերականության ուսուցումը, և այդ նպատակով հատուկ ուսուցիչներ են հրավիրվել ու քերականական դասագրքեր ընդօրինակվել: Հարկ է նշել, որ Արցախի գրեթե բոլոր դպրոցներում քերականության նկատմամբ հետաքրքրությունը բխում էր ձեռագիրը ճիշտ վերարտադրելու, ուղղագրությունը բարելավելու պահանջներին:

17-րդ դարի երկրորդ կեսի Արցախի գիտակրթական կյանքի զարգացման գործում իր մեծ ներդրումն ունի Սիմոն գրիչը, ով Ամարասի վանքի արքեպիսկոպոս Բարսեղի խնդրանքով 1664թ. օրինակել է Մովսես Կաղանկատվացու «Աղուանից պատմութիւն» արժեքավոր աշխատությունը<sup>35</sup>: Գլխավոր հիշատակարանում նա հիշատակում է Պետրոս Աղվանից կաթողիկոսին, ընդգծում վերջինիս կողմից ծավալված լուսավորական և շինարարական գործունեության մասին: Այնուհետև լայն պատկերացում է տալիս Արցախ, Ուտիք աշխարհների պատմաքաղաքական, մշակութային իրադարձությունների մասին:

Ուշագրավը այն փաստն է, որ Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի մեկ վավերագրում<sup>36</sup> նշվում է, որ «Աղուանից պատմութիւն» գրչագրի վրայի հիշատակարանը հետագայում՝ 1889 թ. փետրվարի 25-ին, արտագրվել է Շահբուլաղում (Ներկայիս՝ ԼՂՀ-ում):

Արժեքավոր է նաև Մկրտիչ աբեղայի՝ 1654թ-ին Կաֆայում (Ղրիմում) սկսված և 1667թ-ին Գանձասարում ավարտված ձեռագիր մատյանը: Վերջինս Կաֆայում գրել է ձեռագրի մի մասը՝ «Տոնացույցը» և «Հայսամվուրքի ցանկը<sup>37</sup>»: Հիշատակարաններից մեկում Մկրտիչը արձանագրել է 16-17-րդ դարերի պատմական կարևոր փաստեր: Այնուհետև ժամանակագրության ցանկն ավարտում է իրեն վերաբերող մի քանի կենսագրական տվյալներով, ըստ որի 1656թ. նա օծվել է քահանա, 1660 եկել է Գանձասար և 1667թ-ին արդեն եպիսկոպոս էր:

Հայկական կրթության և գիտության արժեքային համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում Մ. Խորենացու և Եղիշեի պատմությունները, որոնք

<sup>32</sup> Նույն տեղում, ձեռ. 3542, թ. 299ա-300ա:

<sup>33</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 2277, թ. 235:

<sup>34</sup> Նույն տեղում, թ. 154ա:

<sup>35</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 2561, թ. 264:

<sup>36</sup> Մատենադարան, Կաթող. Դիվան, թղթ. 240, վավ. 132:

<sup>37</sup> Տե՛ս «Արդ, գրի Տոնացույցս և ցանկ Այսամուրաց կարգին համառոտաբար ի թվականիս Հայկական սեռի ՌՃԳ(1654)»:

գրվել են դեռևս վաղ միջնադարում: Իսկ 1689թ. այդ ձեռագրերը բերվել են Գանձասար և պահվել վանքի ձեռագրատանը<sup>38</sup>: Շնորհիվ այդ աշխատությունների, Արցախի դպրոցների սաները ծանոթացել են հայ ժողովրդի պատմության ուշագրավ էջերին:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Գանձասարի ձեռագրատան հավաքածուի մեջ են մտել նաև Գրիգոր Տաթևացու մեկնությունները (1655թ.-ընդօրինակված)<sup>39</sup>, Գևորգ Սկևռացու Նարեկացու լուծմունքը (17-րդ.-ընդօրինակված)<sup>40</sup>, Դիոնիսոս Արիսպագացու (1664թ. կազմող գրիչ Բարսեղը)<sup>41</sup> և Պետրոս Արագունացու (1680թ. ստացող Մովսես վրդ.)<sup>42</sup> մատենագրությունները:

Արցախի գիտակրթական օջախներից ուրվագծվում է Գուշավանքի դերը: Այստեղ 17-րդ. դարի երկրորդ կեսին գիտակրթական կյանքի կազմակերպման գործը իր վրա էր վերցրել Աղվանից կաթողիկոս Պետրոս Խանձքեցու եղբայր Մատթևոս քահանան (1653-1675թթ.): Վերջինս իր եղբոր համար մի «Ավետարան» է ընդօրինակել (1668թ.)<sup>43</sup>: Վանքի հոգևոր-լուսավորական գործունեության մասին են վկայում նաև Դիզակ գավառի տարբեր գյուղերում 17-րդ. դարի երկրորդ կեսին գրված «Շարականոց» -ը (1665թ.)<sup>44</sup> և «Ավետարան»-ը (1673թ.)<sup>45</sup>:

Արցախի հոգևոր կյանքի հետ առնչվող առանձին դրվագներ արտացոլվել են գրիչ Եսայի երեցի «Ավետարանում» (1663թ.), որը գրվել է Ծարա կերում: Ըստացողը եղել էր Միմեռնը<sup>46</sup>:

Ս. Ջալալյանը բարձր է գնահատում Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում (1668թ.) պահվող երկու ինքնատիպ ձեռագիր մատյանների՝ «Ավետարան»-ի և «Աստվածաշնչ»-ի առկայությունը, որոնք ունեին կարևոր հիշատակարաններ<sup>47</sup>: Շնորհիվ «Աստվածաշնչ»-ի հիշատակարանի, եկեղեցու դպրոցի սաները լայն պատկերացում են կազմում հայկական գյուղերի, հովիտների անունների վերաբերյալ:

1639-1700 թթ. Արցախի գիտակրթական կյանքի զարգացման գործում իրենց ներդրումն են ունեցել գրիչ Մարտիրոս Խնձորեկցին, ով 1653-1654թթ գրել է «Ավետարան», (ծաղկող-կազմող Մովսես Երեց), Պաղտասար դպիրը (1666թ. գրել է Հարար գյուղի «Մաշտոց ձեռագ»-ի հիշատակարանը, պատվիրող՝ Մարտիրոս քահանա), գրիչ Վառվառեն (1684թ. ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը», Ծարում, ծաղկող՝ Տեր Բարսեղ, ստացող՝ Պետրոս վրդ.), և ուրիշներ: Պաղտասար դպիրի ձեռքով 1671թ. գրված (Հարար գյուղում) մեկ այլ ձեռագիր պահվում է Լոնդոնի «Վելքոմ» ինստիտուտի գրադարանում<sup>48</sup>:

<sup>38</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910, էջ 20:

<sup>39</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 4055:

<sup>40</sup> Նույն տեղում, ձեռ. 4383:

<sup>41</sup> Նույն տեղում, ձեռ. 3829

<sup>42</sup> Նույն տեղում, ձեռ. 4048:

<sup>43</sup> Տե՛ս **Ղևոնդ Այիջան**, Միսակյան, Վենետիկ, 1898, էջ 270:

<sup>44</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 2464: Տե՛ս նաև **Թ. Մինասյան**, Գուշավանքի և Դիզակ գավառի ձեռագրական ժառանգությունը, <<Հայկազյան Հայագիտական հանդես>>, հատ. Լ.Դ, Բեյրութ, 2014, էջ 418, 420:

<sup>45</sup> **Հ. Ոսկեան**, նշվ. աշխ., էջ 20:

<sup>46</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 4053: Ցուցակ ձեռագրաց, հ. Ա, Եր., 1965, էջ 1138:

<sup>47</sup> Տե՛ս **Ս. Ջալալյան**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տիֆլիս, 1858, էջ 240-241:

<sup>48</sup> ՄՄ, ձեռ. 2067: Տե՛ս նաև **Վ. Բալայան**, Արցախի պատմություն, Եր., 2002, էջ 212:



Բացի ընդգծվածները, ուսումնասիրվող ժամանակաշրջանում գործող մնացած եկեղեցիներն ու վանքերը այս կամ այն չափով ևս ունեն իրենց ներդրումը հայոց աշխարհի գիտակրթական համակարգի զարգացման համակարգում:

Ընդհանրացնելով, նշենք, որ վերոնշյալ տեղեկությունները ևս մեկ անգամ փաստում են պատմական այն ճշմարտությանը, որ տվյալ բարդ պատմափուլում հայ մշակույթի գործիչները ոչ միայն ջանացել են պահպանել դարերից եկող հայկական մշակութային արժեքների ժառանգությունը, այլև նրան զուգահեռ ստեղծել նոր մշակութային գոհարներ: Նրանց եռանդուն ջանքերի շնորհիվ, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Արցախում (թեև որոշ ընդհատումներով) շարունակվում է զարգանալ գիտակրթական կյանքը:

*М. Арутюнян- Научно-образовательный жизнь в Арцахе 1639-1700 гг. (краткий обзор).* - Таким образом, несмотря на трудный исторический период, образование и наука продолжали развиваться в Арцахе (1639-1700 гг.). Помимо государственных школ, существовали также типы церковных и монастырских школ. Параллельно со школами монастырей Гандзасар, Дади (Дадиванк), Хадо (Хатраванк), Гтча (Гтчаванк), Св. Якова, в Арцахе были открыты также новые школы. Это были школы церквей Св. Степаноса (в деревне Шош, 1655), Св. Геворга (в деревне Газанчи, 1671), Св. Девы Марии, (в деревне Кусapat, 1686), Св. Степаноса, (в деревне Джракуис, Гадрут , 1698), а так же Монастырь Ериц Манканца (в 1691) и так далее. Они являлись не только образовательными, но и научно-исследовательскими центрами. Благодаря многим научным работам, представители различных отраслей науки вложили большой вклад в развитие науки.

*М. Harutyunyan- Scientific and educational life in Artsakh in 1639-1700 (sketch).*- Thus, despite difficult historical period, education and science continued to develop in Artsakh (1639 to 1700). Besides public schools, there were also the types of church and monastery schools. New schools were opened in Artsakh in parallel schools of monasteries of Gantzasar, Dadi (Dadivank), Khadoi (Khatravank), Gtcha (Gtchavank), St. Jacob; the schools of churches of St. Stepanos (in Shosh village, 1655), St. Gevorg (in Ghazanchi village, 1671), St. Astvatsatsin (in Kusapat village, 1686), St. Stepanos, (in Jrakuys village of Hadrut, 1698) as well as Yeritsmankants Monastery (in 1691) and so on. Ones were not only educational, but also scientific centers. Due to a number of scientific works, representatives of the various branches of science have invested their great contribution to the development of science.

# Գ Ր Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

### ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

*Բանալի բառեր.* գրողի նամականի, ներաշխարհի բացահայտում, ուսուցման գործընթաց, ապրումներ, կենսագրական ակունքներ, քնարական հերոս, սիրային հազեցվածություն, եզրահանգումներ, գրական պլաններ:

Գրողի գրական ժառանգության անբաժան մասն են կազմում նրա նամակները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու արվեստագետի ստեղծագործական աշխարհի առանձնահատկությունները, ներաշխարհը՝ միաժամանակ նաև պատկերացում տալով հեղինակի անհատականության, կյանքի, գործունեության, անգամ հույզերի և ապրումների մասին: Այդ տրամաբանությամբ Վահան Տերյանի նամակներն ընթերցողին գրավում են իրենց անկեղծությամբ, բովանդակային հարստությամբ, գաղափարական և գեղարվեստական ընդհանրացումներով:

Ուսուցման գործընթացում բանաստեղծի նամակների ուսումնասիրումը ենթադրում է համապատասխան նախապատրաստական աշխատանքի կազմակերպում: Ուսուցանողը պետք է նախապես ուսումնասիրի հեղինակի կենսագրությունը, կարդա թեմայի հետ առնչություն ունեցող նյութերը, գրականագիտական հոդվածները, նամակները և դրանցից բխող տրամադրությունների ու հոգեվիճակների արտացոլումները գտնի բանաստեղծությունների մեջ: Նամակներում տեղ գտած անձնական բնույթի առանձին խոստովանություններն անհայտության մշուշից փրկում են գրողի կենսագրությունից դուրս մնացած շատ փաստեր, իսկ այդ ուսումնասիրությունն օգնում է ստեղծագործությունները քննել այլ տեսանկյունից՝ հետաքրքրական դարձնելով կենսագրական և բանաստեղծական նյութի յուրացումը:

Դասընթացի ուսուցումն սկսելուց առաջ նպատակահարմար է ուսանողներին հանձնարարել ընթերցել բանաստեղծի նամակները, առանձնացնել այն բանաստեղծությունները, որոնք անկայտ կերպով նամակների տրամադրությունների արձագանքն են և Տերյանի համար բանաստեղծական ներշնչանք են դարձել: Այս ամենի կազմակերպված ընթացքը կնպաստի սովորողների շրջանում ինքնուրույն վերլուծական մտածողություն զարգացնելուն և եզրահանգումներ կատարելուն:

Նամակների ուսուցումն առավել արդյունավետ և հետաքրքիր անցկացնելու համար դասախոսը կարող է նամակների ընթերցման և նամակ-բանաստեղծություն զուգահեռ վերլուծության միջոցով ցույց տալ գրողի ներաշխարհի, նրա հուզապրումների անմիջական ազդեցությունը ստեղծագործություններում:

Տերյանի նամակներն ուսումնասիրելիս շատ ընդհանրություններ ենք նկատում հեղինակի անձնական զգացումների և քնարական հերոսի հոգեկան

ապրումների միջև: «Նրա «լիրիկական հերոսի» և բանաստեղծի անձի միջև չկա որևէ տարածություն: Նա խոսում է իր անունից, արտահայտում իր սեփական զգացմունքներն ու հույզերը»<sup>1</sup>: Այս իմաստով հետաքրքիր է հենց իր՝ Տերյանի դիտարկումը նամակի մասին. «Բանն այն է, որ նամակ գրելը ես համարում եմ մի գրույց, իսկ ընկերական և մտերմական գրույցի ժամանակ խոսքերը չեն ընտրում, չեն աշխատում խոսել տրամաբանորեն ու «խելոք», այլ գրուցում ես անբռնագրասիկ, ազատ առանց վախենալու և քաշվելու: Ահա թե ինչու ես ասում եմ, որ նամակը պետք է միայն այն մարդը կարդա, ում գրված է նա...»<sup>2</sup>: Տերյանն այնքան ազատ է իր շարադրանքում, որ թեև իր խոսքը համարում է խառն ու շփոթ, բազմազույն, բայց, միևնույն է, ուղարկում է այդ նամակները:

Կանանց ուղղված նամակների շարքում առանձնակի ուշադրություն են գրավում Նվարդ Թումանյանին հասցեագրված նամակները: Թեև վերջինիս հետ նամակագրությունը կարճ է տևել, բայց այնուամենայնիվ այդ նամակներն իրենց բովանդակությամբ ամենահարուստն են թե՛ գեղագիտական ամենատարբեր խնդիրների վերաբերյալ մեկնաբանություններով, թե՛ այլ հարցերի քննարկումներով: Նվարդին ուղղված մի նամակում Տերյանը գրում է. «Իսկ պաշտոնական կամ կիսապաշտոնական նամակագրությունից գրեթե զգվում եմ: Դրա համար ես կուզեի նամակագրության ժամանակ ինձ միանգամայն ազատ զգալ և անպատասխանատու, ինչպես ինքս իմ առջև»<sup>3</sup>: Այս կերպ նա ընդհանրապես պարզում է նամակի բովանդակության վերաբերյալ իր նախընտրությունը:

Տերյանի նամակները միշտ չէ, որ ունեն բովանդակային միակերպություն և վերաբերում են որևէ կոնկրետ երևույթի կամ հարցի: Ավելի հաճախ նրանցում համատեղվում, իրար հաջորդում են տարբեր հարցերի վերաբերյալ դիտարկումներ: Ստացվում է այնպես, որ անձնական ապրումների, տրամադրությունների բացահայտումները հաճախ ընդմիջվում են ազգային-հասարակական հարցերի քննությամբ: Օրինակ՝ Նվարդին ուղղված մեկ այլ նամակում ցավով գրում է. «Վերջիվերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու: Դա մի հիվանդագին սեր է, դա մի անհաղթելի մոլություն է - դրա պրիզմայով է բացվում մեր առջև աշխարհը - այդ չափով ենք մոտենում մենք ամեն ինչի և գուցե դրա համար անգոր ենք դառնում ու մեռնում ենք վաղ»<sup>4</sup>: Իսկ, օրինակ, Ալ. Ծատուրյանին ուղղված նամակներից մեկում, խոսելով բանաստեղծի և քնարական հերոսի մասին, Տերյանն ինքնախոստովանության պես գրում է. «Մենք գիտենք տատասկոտ ու փշոտ հայ բանաստեղծի ճանապարհը: Եթե ուրիշ ազգերի մեջ բանաստեղծ լինելու համար հարկավոր է միայն աստվածային կայծ ունենալ, մեր իրականության մեջ բանաստեղծը պետք է նաև հերոս լինի»<sup>5</sup>: Այս ընդգծումը, անշուշտ, կարևոր է. չէ՞ որ բանաստեղծությունը գրողի հոգու և երազների արձագանքն է, իսկ նամակների ուշադիր քննությունը նպաստում է հեղինակի կերպարի ամբողջացմանը:

<sup>1</sup> *Կամար Գրիգորյան*, Վահան Տերյան, Երևան, 1983, էջ 96:

<sup>2</sup> *Վահան Տերյան*, Երկերի ժողովածու, հատոր 4, Երևան, 1979, էջ 160:

<sup>3</sup> *Վահան Տերյան*, Երկեր, Երևան, 1989, էջ 518:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 529:

<sup>5</sup> *Վահան Տերյան*, Երկերի ժողովածու, հատոր 3, Երևան, 1963, էջ 222:

Նվարդ Թումանյանին ուղղված գրեթե յուրաքանչյուր նամակում Տերյանը խոսում է իր հոգեկան վիճակի, գործերի, թարգմանությունների, բանաստեղծական ժողովածուների մասին, նաև այն մասին, թե դրանք ստեղծագործական որ փուլում են գտնվում: Նվարդին ուղղված նամակներում պոետը խոսում է ոչ միայն իր գործերի, այլև «Մշակ»-ում լույս տեսնող հոդվածների մասին՝ անդրադառնալով ուրիշ գրողների ստեղծագործությունների: 1915 թվականի սեպտեմբերին Նվարդին հասցեագրված մի նամակում Տերյանը բնորոշում է արևելահայ արձակը. «Մեր պրոզան սարսափելի կերպով պրիմիտիվ է, երբեմն մարդ շժմած է մնում, թե ինչպես են այնքան միամիտ և պարզամիտ մեր գրողները: Բոլորը գրված են կիսագրագետ մարդկանց համար...»<sup>6</sup>:

Նվարդի նկատմամբ նուրբ զգացողություններն ու հուշերն ամեն անգամ նոր կյանք էին առնում, ու ծնվում էին նորանոր տողեր՝ բխած հեղինակի կարոտած սրտից. «Ես մի քանի տրիոլետ էի գրել Ձեզ համար, իմ սիրելի և լավ Նվարդ, բայց ուղղելու կարիք կա, ուստի չդրկեցի: Ուզում էի, որ «տրիոլետների մանյակ» լինի դա, բայց ամեն անգամ երբ նստում էի Ձեզ գրելու, միտս էին ընկնում այդ կիսատ մնացած տրիոլետներս և գրելու տրամադրությունս փախչում էր»<sup>7</sup>.

Սրտիս հուշերը բարի են դեռ,  
Եվ քո անվամբ է, անուշ Նվարդ,  
Որ մայիսին այս դառն ու անվարդ  
Սրտիս հուշերը բարի են դեռ:  
Թեև իջնում է հոգուս վրա սուվեր  
Եվ չեմ սպասում գալիքից վարդ  
Սրտիս հուշերը բարի են դեռ  
Քո քնքուշ անվամբ, անուշ Նվարդ:

1920 թ. ապրիլին ծնվեց Տերյանի առաջնեկը, ով կրում էր պոետի մտերիմներից Նվարդի անունը: Հետագայում Նվարդ Թումանյանն իր հուշերում գրում է. «Նրա հոգին նուրբ էր ու քնքուշ, իր Գանձայի ծաղիկների նման՝ նրբին ու զգայուն: Միտը՝ ջերմ ու հուր, իր երկրի սարերի նման՝ կրակ ու հրաբուխ ու էդ սարերի նման էլ «լայն ու բաց», բայց միշտ մի թախճոտ տխրությամբ համակված, ինչպես իր հայրենի սարերը մշուշապատ»<sup>8</sup>:

Վահան Տերյանի կյանքում թերևս ճակատագրական է եղել Անթառամ Միս-կարյանի հետ հանդիպումը: Առաջին հայացքից վերջինս լավ տպավորություն է թողել բանաստեղծի վրա, տպավորություն, որը հետագայում վերաճել է սիրո: Իր սիրելի Անետային ուղղված նամակներից մեկում Տերյանը գրում է. «...Առաջին տպավորությունն ինձ համար ունի եթե ոչ վճռական, ապա, համենայն դեպս, հսկայական նշանակություն: Չեմ կարող ձեզ հետ համաձայնել, որ մեծ մասամբ պատահական հանդիպումներն ու ծանոթություններն են «հաճելի լինում»»<sup>9</sup>: Անթառամի հետ հաճելի հանդիպումն ու ծանոթությունը լավ բարեկամության հիմք են դառնում՝ սկզբնավորելով նրանց երկարատև, հետզհետե մտերմացող նամակագրությունը (1908 թ. հոկտեմբերից 1916 թ. հուլիս): «Տեր-

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 557:

<sup>7</sup> *Վահան Տերյան*, Երկեր, Երևան, 1989, էջ 537:

<sup>8</sup> *Վահան Տերյանը* ժամանակակիցների հուշերում, Երևան, 1964, էջ 67:

<sup>9</sup> *Վահան Տերյան*, Նամակներ, Երևան, 1972, էջ 61:

յանի առաջին նամակը Խարկով Անթառամ Միսկարյանին թվագրված է՝ 1908-ի հոկտեմբերի 19»<sup>10</sup>:

Հաճախ Անթառամին ուղղված նամակներից բառացի տողեր կարելի է տեսնել գրողի բանաստեղծություններում: Մա նշանակում է, որ Անթառամը Տերյանի համար սրտակից ընկեր է եղել, ում հետ գրուցելիս պոետն անկեղծացել է իր տրտմության, թախծի, թաքուն երազների, անձնական ապրումների մասին: «Ինչ-որ անտարբեր վիճակ է: Առանձնապես ոչ մի բան չեմ ուզում: Կամագրկություն է: Էհ, Անտյա, ճշմարիտ, ինքս էլ չգիտեմ, այս ինչ է կատարվում ինձ հետ: Միայն մի բան եմ ուզում՝ պառկել, պառկել անվերջ, անվերջ պառկել ու նայել առաստաղին: Աննպատակ պառկել: Աննպատակ պառկել: Մոռանալ ամեն ինչ, ամեն ինչ մոռանալ և ոչինչ ու ոչ ոքի մասին չմտածել: Իմ մասին էլ չմտածել հանգստանալ»<sup>11</sup>.

Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,  
Ամենին մոռանալ.  
Չըսիրել, չխորհել, չափսոսալ և  
Հեռանալ...

1909 թ. Անթառամին հասցեագրված մեկ այլ նամակում կարդում ենք . «Մենության անապատից վերադառնալ մարդկանց մեջ նորոգված ու լուսավոր, սերը սրբտում և կյանքի, աշխատանքի ծարավով: Ես այս ամենը գրում եմ իմ մասին, բայց ինձ թվում է, որ դա մասամբ եթե ոչ ամբողջովին, վերաբերում է և ձեզ, սիրելի Անտյա»<sup>12</sup>: Նրբագգաց քնարերգուի այս հոգեվիճակն ու տրամադրությունը նույնատիպ դրսևորվել են 1911 թ. գրված «Մենության խավար գնդանից կրկին...» բանաստեղծության մեջ.

Մենության խավար գնդանից կրկին  
Ես վերադարձա հզոր ու հպարտ,  
Եվ ինձ ողջունեց աղմուկը զվարթ,  
Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին...

Այն, որ Անթառամի հետ նամակագրությունն առանձնահատուկ էր գրողի համար, երևում է նաև նրա՝ Անթառամին ուղղված մի նամակից ևս. «Ձեր նամակները ես միշտ կարդում եմ հսկայական բավականությամբ և դրանք գատում եմ իմ ստացած բազմաթիվ նամակներից: Դուք գրում եք միայնության, տրտմության, շրջապատի չհասկացողության մասին: Հավատացեք, Անտյա, ես հասկանում եմ ձեզ, շատ լավ եմ հասկանում և ամբողջ սրտով կուզենայի ձեր բարեկամը լինել»<sup>13</sup>:

Սուսաննա Պախալովայի հետ ամուսնանալուց հետո Տերյանը շարունակեց Անթառամի հետ նամակագրությունը: Այդ հանգամանքը թերևս փաստում է Անթառամին սիրահարված լինելու իրողության մասին:

Ճակատագիրը բանաստեղծի տաղանդի հարցում շոյալ էր գտնվել, սակայն անձնական կյանքում նա դժբախտ էր: Սուսաննայի և Տերյանի համատեղ կյանքը չստացվեց: Թեև Անթառամն էլ էր ամուսնացել, բայց Տերյանը շարունակում էր

<sup>10</sup> *Նինա Հարությունյան*, Կանայք Տերյանի կյանքում, Երևան, 2005, էջ 12:

<sup>11</sup> *Վահան Տերյան*, Նամակներ, Երևան, 1972, էջ 95:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 93:

վերջինիս հետ նամակագրությունը. նրանք դեռ հույսեր ունեին: 1909 թ. Անթառամին հասցեագրված մի նամակում կարդում ենք. «Ամենից առաջ շնորհավորում եմ ձեր նշանդրեքը և հղում եմ ձեզ լավագույն ցանկություններս այդ առթիվ, թեև չեմ հավատում, որ իրոք նշանվել եք: Բայց ասում եմ, խելացի մարդիկ ոչ մի բանի վրա չպիտի զարմանան այս պաղ լուսնի ներքո, որովհետև ոչ մի անհնարին բան չկա այս աշխարհում»<sup>14</sup>:

Անձնական կյանքի իր երջանկությունը բանաստեղծը փորձում էր գտնել արվեստում.

...Եվ կյանքս բոլոր մի երկարատև  
Նինջ թվաց հոգուս, մի քաղցր երագ,  
Նրբին մի համբույր հեռու օրերում,  
Մանկական մի երգ, որ չունի անուն...

Սուսանայի հետ բաժանումից հետո Տերյանն ամուսնացավ Անահիտ Շահիջանյանի հետ, ով բանաստեղծի կողքին եղավ նրա ծանր հիվանդության ժամանակ և ժառանգ պարգևեց: Մակայն Տերյանը երբեք չմոռացավ Անթառամին: Մահվան մահճում նրա շուրթերը շարունակ Անթառամի անունն էին տալիս, թեպետ կողքին էր Անահիտը:

Գրողի նամակների ուշադիր քննությունը բացահայտում է պոետի խառնվածքը, աշխարհայացքը, հուզաշխարհը և վեր հանում նրա հոգու տազնապները: Նամակների ուսումնասիրությունն ավարտելուց հետո դասախոսը կարող է եզրահանգումներ անել՝ կապված բանաստեղծի քնարական հերոսի և հեղինակի անձնական ապրումների հետ:

Վահան Տերյանի՝ խորապես սիրային հազեցվածություն ունեցող բանաստեղծությունները կենսական ակունքներ ունեն: Մեկը մյուսի հետևից ստեղծված նրբանուրբ երգերը դարման դարձան սիրելիին չհասած բանաստեղծի կսկծացող սրտին՝ ստեղծելով երազային պատրանք:

**Анна торосян - Статья посвящена изучению эпистолярного жанра Вагана Теряна.**- Среди этих писем выделяются письма женщинам, которые в автора имели судьбоносное значение. Посредством параллельного анализа письма-стихотворения мы попытались показать непосредственные проявления личных переживаний автора.

**Anna Torasyan - This article relates to the teaching of Vahan Teryan's epistolary.** - In the range of the epistolary especially those letters are considered that were written to the women who had crucial role in the poet's life. Through parallel analysis of letter-poem, we have tried to show the direct manifestation of the personal experiences of the author.

---

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 105 -106:

---

---

## ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

### ԷՄՄԱ ՆԻԿՈՑԱՆ

Հողվածում անդրադարձել ենք Ս.Այվազյանի «Ճակատագիրն հայոց» և «Առավոտ լուս» վեպերին, որոնք նվիրված են Հայաստանում 18-րդ և 19-րդ դարերի 1-ին տասնամյակում տեղի ունեցած դեպքերին: Այդ վեպերում սոցիալ-քաղաքական իրադարձությունների լայն համապատկերում ներկայացված են Իսրայել Օրու և Խ.Աբովյանի կենսապատումները:

**Բանայի բառեր** . ճակատագիր, կենսապատում, կողմնորոշում, գոյամարտ, հոգևոր մաքառում, իրադարձություններ:

Ինչպես ավագ դպրոցի, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատությունների բակլավրիատի ու մագիստրատուրայի ուսումնական ծրագրերում անչափ քիչ տեղ է հատկացված 1950-60-ական թթ. արձակին, նրա թեմատիկ բազմազանությանը, լեզվաոճական առանձնահատկություններին, պրոբլեմատիկային, որը խիստ արդիական է նաև մեր օրերում:

Մեր աշակերտներն ու ուսանողները համարյա չեն ճանաչում այնպիսի գրողների, ինչպիսիք են Բ.Սեյրանյանը, Զ.Դարյանը, Հովհ. Դուկասյանը, Վ.Խեչումյանը, Գ.Դերիկյանը, Հ.Խաչատրյանը, Մ.Շաթիրյանը և ուրիշներ, ովքեր մնայուն արժեքներ են ստեղծել, բայց, ցավոք սրտի, դուրս են մնացել ուշադրությունից: Հատկապես ուշագրավ են և մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործում մեծ դեր կարող են ունենալ նշված գրողների՝ պատմական թեմայով գրված ստեղծագործությունները, որոնք, արժարժեղով հայոց պատմության տարբեր շրջանների իրադարձությունները, ողբերգական ու հերոսական դրվագները, պատմության դասերի յուրացման հիանալի օրինակներ են տալիս սերունդներին:

Այդ գրողներից է նաև Սուրեն Այվազյանը, որի «Ճակատագիրն հայոց» և «Առավոտ լուս» վեպերը նվիրված են 18-րդ և 19-րդ դարերի առաջին տասնամյակներում Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին: Այս վեպերում հեղինակը ներկայացնում է «Ճանապարհն հայոցի» վերաբերյալ իր պատկերացումները, փորձում հիմնավորել հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումների ուղղությամբ իր տեսակետը, գոյապահպանման համար մղվող պայքարում հոգևոր մաքառումների, այդ ճանապարհով՝ ազգային դիմապատկերի ու հոգեկերտվածքի պահպանման, ազգային արժանապատվության գերակայության գիտակցման անգնահատելի նշանակությունը:

«Ճակատագիրն հայոց» վեպը նվիրված է Սյունյաց աշխարհում բռնկված ազգային-ազատագրական պայքարին, որը սկսվեց Խնձորեսկում ու ընդգրկեց Վայոց Ձորի ու Շահապունիքի ողջ գավառները և Իսրայել Օրու՝ եվրոպական երկրներ ու Ռուսաստան կատարած առաքելությունը:

Ազատագրական շարժումը տարածաշրջանում բռնկված ապստամբության երկրորդ փուլն էր, որը, ճիշտ է, իր թափով ու մասշտաբներով զիջում էր Դավիթ

Բեկի գլխավորությամբ դարասկզբի համագային շարժմանը, բայց հույժ կարևոր էր պայքարի շարունակականության ու մարտական ոգու պահպանման առումով:

Իր անմատչելի լեռները քաշված Խնձորեսկի հերոսական ժողովուրդը մի անգամ ևս ցույց է տալիս, որ իր մեջ դեռ արթուն է Մխիթար Սպարապետի ոգին, անկոտրում կամքը, ազգային ու մարդկային արժանապատվության բարձր զգացումը:

«Մեռնել ու այլևս չտանել թշնամու ստորացումը»,<sup>1</sup> - սա էր ապստամբության դրոշն առաջինը բարձրացրած խնձորեսկցիների նշանաբանը, որ ոտքի հանեց Շահապունիքի, Անգեղակոթի, Ձագեձորի, Կոռնիձորի, Բոլորաբերդի ու տասնյակ այլ շեների բնակչության բոլոր խավերին, անգամ «խաղաղասիրությամբ» տրամադրված հոգևորականությանը:

Համաժողովրդական ազատագրական պայքարի համապատկերում գեղարվեստական մեծ վարպետությամբ է գծված Իսրայել Օրու հոր Շահապունիքի մելիք Իսրայելի կերպարը: Մելիքը քաջ գիտակցում է, որ պարսիկ խաների հիմնական նպատակը կրոնափոխությունը և ավարառությունները չեն: Ամենից մտահոգիչը նրա համար հողի կորուստն էր, որովհետև «ամեն կորուստ մոռացվում է, հողը՝ երբեք: Նա մեռելին անգամ կենդանություն է տալիս և ուժ»<sup>1</sup>:

Հայրենիքի նկատմամբ անբեկանելի զգացմունքներով է դաստիարակում մելիք Իսրայելը իր որդիներին, հատկապես՝ Օրուն, որի հետ մեծ հույսեր է կապում: Ուշագրավ են նրա պատգամները որդուն՝ եվրոպական երկրներ դիվանագիտական առաքելություն մեկնելուց առաջ. «Այլ են հոգսերն այն աշխարհների մարդկանց, որ դու պիտի լինես, և այլ են նրանց հայացքները: Դու ունես միայն ու միայն մի հոգս՝ դա քո ժողովրդի մեծ հոգսն է, ու միայն մի հաճույք, որ ժողովուրդը քեզ է ապավինել իր ճակատագրի հարցը», ուրեմն՝ «երդվիր Պռոշյան տոհմի այն անուններով, որ հանուն ժողովրդի նահատակվեցին ու սրբացան: Երդվիր մորդ կաթով...»<sup>2</sup>:

Նա համոզված է, որ որդին այդ առաքելությունից կվերադառնա «որպես հայոց աշխարհին գարուն ավետող ծիծեռնակ», «կտոնի իր ձեռքը Շահապունիքի մելիքությունը, կծաղկեցնի որպես Պռոշը ծաղկեցրեց Գեղարդա ձորը, կապրեն բոլոր մելիքները միաբան, մի ընդհանուր դրոշի տակ, որ կկոչվի հայոց արքայական դրոշ»<sup>3</sup>:

Ժողովուրդը միասնական ուժերով հերոսական գոյամարտ է մղում պարսկական կանոնավոր զորքերի դեմ, հերոսականության ու անձնագոհության բազմաթիվ օրինակներ է ցուցաբերում, բայց ծանրության նժարն աստիճանաբար թեքվում է պարսիկների կողմը: Հրկիզվում ու ավերակների են վերածվում բազմաթիվ գյուղեր, նոսրանում են ազատամարտիկների շարքերը, սպառվում են զինամթերքի պաշարները: Ժամանակն աշխատում է պարսիկների օգտին: Բոլորը լավ են հասկանում, որ ինչքան էլ միաբան լինեն մելիքներն ու ժողովուրդը, ինչքան էլ ամուր կանգնած լինեն մայր հողին, միևնույնն է, ուժերն անհավասար են, թշնամին շատ է ուժեղ: Ի՞նչ կարող էր անել թեկուզ և անառիկ լեռներին կառչած

<sup>1</sup> *Այվազյան Մ.*, Ճակատագիրն հայոց, Երևան, 1976, էջ 328:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 243:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 245:



մի բուռ ժողովուրդը տասնապատիկ, հարյուրապատիկ անգամ շատ ու լավ զինված կանոնավոր զորագնդերի դեմ: Ուրեմն՝ ինչ-որ ելք պիտի փնտրել, ճկուն քաղաքականություն պիտի վարել, քրիստոնյա աշխարհի ուշադրությունը հրավիրել հայոց աշխարհում կատարվող սահմուկեցուցիչ դեպքերի վրա: Իրավիճակը հուշում էր, որ «ուժեղ թշնամու դեմ կռիվ տալու ժամանակ զենքից առավել խելք, խորամանկություն պիտի բանեցնել: Կովից առավել՝ դիվանագիտություն»<sup>4</sup>:

Եվրոպական քրիստոնյա երկրներում Բարայել Օրին խորին հիասթափություն է ապրում՝ բախվելով անտարբերության, կեղծ ու ստահող խոստումների պատին: 1701թ. նա մեկնում է Մոսկվա՝ հանգելով այն մտքին, որ միայն քրիստոնյա Ռուսաստանը, որպես տարածաշրջանում հետաքրքրություններ ունեցող երկիր, կարող է և ի վիճակի է տրամադրել աջակցություն հայերին: Նա ներկայացնում է մի ծրագիր, որը հավանության է արժանանում կայսեր ու նրա պալատական շրջապատի կողմից:

Պատմության ընթացքի մասին Յավրին իր յուրատեսակ պատկերացումներն ունի: Ազգովին միաբանվելու, հարկ եղած դեպքում ազգովին՝ հանուն արժանապատվության զոհվելու հոր մտորումներին նա հակադարձում է. «Մի ամբողջ ժողովրդի մահ, ինչ տեսակ էլ որ լինի, հերոսական չի լինի, որովհետև կենդանի մնացածներն են հերոսացնում նահատակներին: Եվ հետո այն մահը, որ կյանք չի ստեղծում, չի կարող հերոսական կոչվել: Այդպիսի համազգային մահը տապանագրի պես մի քանի բառ միայն կարող է թողնել աշխարհի օտարատառ պատմության մեջ. «Եղել է մի ժողովուրդ, նրան հայ են կոչել...» և վերջ»<sup>5</sup>:

Ուշագրավ են Եվրոպա մեկնելուց առաջ նրա օրագրում արված խորհրդածությունները. «Կա՞ աշխարհում ավելի մեծ ուժ, քան հայրենիքն է: Եթե անհայրենիք մարդն անառագաստ նավ չէ՝ մատնված ծովի անափ, փոթորկուն տարածությունը, ապա քծնանք է մարմնավորված: Իսկ եթե փոխում է նա ազգությունը, հենվելու, հարմարվելու համար, ապա նա միշտ ապրում է տան ընտելացած այն վայրի կենդանու կյանքով, որ տիրոջը դուր գալու համար միշտ կրկնում է աղավաղված մարդկային շարժումները:

Բարձր պահիր գլուխդ, ո՞վ հայ և քո կոչումը, զի մեռնելն ավելի լավ է, քան ապրելը կապկելով»<sup>6</sup>:

Հանուն հայրենիքի Յավրին պատրաստ է հոր փոխարեն մեկնել Եվրոպա, դեգերումների ընթացքում լուռ ու մունջ տանել բոլոր ստորացումները, չարչարանքները և հայրենիք չվերադառնալ՝ առանց աշխարհի արդար դատին հանձնելու հայոց հարցը: Ու բոլորովին էլ պահի ազդեցությամբ ու պաթետիկ չեն հնչում հորն ուղղված նրա երդման խոսքերը. «Երդվում եմ ազատել մեր ժողովուրդը դժոխքից: Եթե չկարողանամ, ապա կմեռնեմ այնպես, որ մի ճրագի լույս դառնամ նրա ճանապարհին»<sup>7</sup>:

«Ճակատագիրն հայոց» վեպի բոլոր երեք մասերը միմյանց շաղկապված են ներքին սերտ կապով: Կոմպոզիցիոն կենտրոնը դարձնելով Բարայել Օրոն կերպարը՝ Ս.Այվազյանը նրան ներկայացնում է թեմայի զարգացման տրամաբանությամբ պայմանավորված իրադարձությունների հորձանուտում: Քայլ առ քայլ հե-

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 208:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 571-572:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 208:

դինական ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնում է իր գլխավոր նպատակի վրա՝ արտահայտելու այն գաղափարը, որ հայ ժողովրդի ճակատագիրը պետք է կապել Ռուսաստանի հետ. «Մենք մեր բախտը Ռուսաստանի հետ պիտի կապենք... Միայն ու միայն: Ե՛վ հարևան է, և՛ մեծ է, հավատով ուղղափառ»<sup>8</sup>: Եսայի Հասան-Ջալալյանի այս պատգամը վերջիվերջո հավատամք է դառնում Իսրայել Օրու համար, որը և ներկայացնում է հեղինակը դեպքերի ու իրադարձությունների զարգացման ներքին տրամադրությամբ ու համապատասխան կառուցվածքի միջոցով:

Վեպն ավարտվում է Իսրայել Օրու՝ Աստրախանում նախադեպը չունեցած հուղարկավորության խորհրդանշական պատկերով. «Դագաղի հետևից, որպես անտանելի ծանրության տակ, քայլում է Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը՝ շրջապատված հայ և ռուս հոգևորականներով: Ետևում թափորն է արհեստավորներ, բեռնակիրներ, առևտրականներ, գիր ու գրքի մարդիկ՝ զանազան ազգություններից.

- Ի՛նչ մարդ է հանգուցյալ,- հարցնում են անցորդները:

-Հայ քրիստոնյա: Չարչարվել է իր ժողովրդին օտարի ոտնատակից ետ քաշելու...

Հարցնողները գլխարկները հանելով՝ միանում են հուղարկավորողներին»<sup>9</sup>:

Իսրայել Օրուն հուղարկավորության ժամանակ լավագույնս է բնութագրում Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը. «Նա հայ էր, հայրենասեր, որ վառվում էր իր ժողովրդի ցավերով և իր կրակի լույսով լուսավորում նրա ճանապարհը: Եվ հանգավ նա ճանապարհին, կմնա նրա կրակի լույսը»<sup>10</sup>:

Թեմատիկ ու գաղափարական առումով «Ճակատագիրն հայոցի» շարունակությունն է 1976-ին լույս տեսած «Առավոտ լուստ» վեպը, որը նվիրված է Խ.Աբովյանի կյանքին ու գործունեությանը:

Կասկածից վեր է, որ Ս.Այվազյանի պատմավեպերն ունեն դաստիարակչական ու ճանաչողական մեծ նշանակություն և խիստ օգտակար կարող են լինել մատաղ սերնդի դաստիարակության համար:

**Эмма никоян - Историческая проза Сурена Айвазяна.**- В статье мы обратились к романам Сурена Айвазяна «Судьба Армянская» и «Утренний свет», которые посвящены событиям происходящих в Армении в первых десятилетиях XVIII и XIX века. В этих романах описывается биография Израеля Ори в широком контексте социальных и политических событий.

**Emma Nikoyan - Historical and literary prose of Suren Ayvazyan.** -The given article touches upon the novels “The Armenian destiny” (“Ճակատագիրն հայոց”) and “At dawn” (“Առավոտ լուստ”) by Suren Ayvazyan which are devoted to the events that took place in Armenia during the first decades of the 18<sup>th</sup> and 19<sup>th</sup> centuries. The former of these novels is the biography of Israel Ori and the latter that of Khachatur Abovyan presented within the broad framework of social and political developments.

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 416:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 159:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 160:

---

---

## ԹՎԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՄՈՍԱԿԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### ԱԼԻՄԱ ՀԱՄԱՆՅԱՆ

Ժողովրդական մտածողության մեջ թիվը դրսևորվում է որպես խորհրդանիշ՝ արտահայտելով հոգեվիճակ, բնավորություն, տրամադրություն, երկրի ճակատագիր ու պատմություն: Սահյանի քնարերգության մեջ թվի խորհուրդը ուրույն դեր ունի: Հոգվածի նպատակն է Սահյանի բանաստեղծությունների պատկերակերտման համակարգն ուսուցանելիս ներկայացնել թիվ-խորհրդանիշի ինքնատիպ ընկալումը և դրա բազմապլան քննությունը:

**Բանայի բառեր.** թիվ, քնարերգություն, պատկեր, խորհրդանիշ, յոթ, հագար, քառասուն, չորս, միլիոն, հիսուն, մեկ, երկու, առաջին, ապրում, ժողովրդական լեզվամտածողություն, չափազանցություն, բնապատկեր, իմաստավորում:

Համո Սահյանի՝ փիլիսոփայական ենթատեքստով ու բնաշխարհի գույներով հարուստ ստեղծագործությունն ասելիքի խորությամբ ու կենսասիրությամբ, գեղեցիկի ընկալման ուրույն դրսևորումներով ու պատկերակերտման բացառիկ վարպետությամբ իր հաստատուն տեղն ունի 20-րդ դարի երկրորդ կեսի հայ բազմաճ թնարերգության մեջ: Լինելով մեր դասական գրականության բազմաձև ավանդների շարունակողը՝ Սահյանը դրանց հաղորդեց նոր ու ժամանակակից բովանդակություն՝ զուգակցելով բանաստեղծական պատկերներն ու ժողովրդական մտածողության բազմաշերտ տարրերը: Նրա տաղանդն աստվածատուր է, մտորումն ու խոհը՝ փիլիսոփայորեն ընդհանրացված: Նա հրաշալի քնարերգու է, որի յուրաքանչյուր գեղարվեստական պատկեր մի հյուսվածք է՝ զարմանալիորեն տեսանելի գույներով, անզուգական ու նուրբ վրձնահարվածներով: Նրա բանաստեղծական տողերը հավերժացնում են հայրենի գեղեցիկ բնաշխարհը, հոգու անբացատրելի ելևէջները, հույզերի պոռթկումն ու սրտամաշ թախիծը: Սահյանը գեղարվեստորեն արտացոլում է դարեր շարունակ ժողովրդի մեջ ամբարված ավանդույթների, սովորույթների, կենսակերպի, իմաստնության յուրատեսակ զգացողությունը, դարձնում ապրում ու հոգեվիճակ:

Սահյանի քնարերգության պատկերակերտման համակարգն ուսուցանելիս անհրաժեշտ է կարևորել ժողովրդական ակունքներից բխող մտածողությունը: Ուշագրավ է այն, որ բանաստեղծական տողերի սահուն ընթացքը նրբորեն վարագործում է ազգային նիստուկացի, մտքի, խոսք ու գրույցի պատկերը, ասելիքի ենթաշերտում բացահայտվում է ժողովրդի խորիմաստ էությունը: Սահյանը բանաստեղծական տողերում ժողովրդական մտածողությունը բացահայտվում է ոչ միայն պատկերակերտման վարպետությամբ, այլև թվերի «լեզվով», ուրույն դեր ունի թվի խորհուրդը:

Ժողովրդի մտածողության մեջ թիվը դրսևորվում է որպես խորհրդանիշ՝ արտահայտելով մարդու հոգեվիճակ, բնավորություն, տրամադրություն երկրի ճակատագիր ու պատմություն: Սահյանին հոգեհարազատ է թիվ-խորհրդանիշի ինքնատիպ ընկալումը: Ռուս բանաստեղծ Լև Օգերովը Սահյանին գրել է. «Ձեր

գործերում կա նաև թվերի պոեզիա, թվերի կախարդանք: Դա թվահմայություն, հեքիմություն չէ, այլ թվի ժողովրդական հավատք»:

Ժողովրդական մտածողության մեջ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր հաճախականությամբ, տարբեր իմաստային փոխանցումներով ու յուրատեսակ դրսևորումներով են գործածվել թվերը: Դարերի ընթացքում սերնդեսերունդ փոխանցվելով՝ դրանք ի վերջո ստացել են խորհրդանշական կայուն իմաստավորում՝ հաճախ ունենալով նաև բազմաթիվ ենթիմաստներ:

Թվով կերտված կապակցություններն ու պատկերներն ասելիքն առաջին հայացքից դարձնում են դյուրընկալ, բայց իրապես խտացնում են ազգային ու համամարդկային շատ նրբիմաստներ, որոնք նյութի մատուցման ժամանակ շատ կարևոր է տարբերակել: Ուշադրություն պետք է դարձնել թվի գործածությանը ոչ միայն պատկերի արտաքին դրսևորումը և գեղագիտական տպավորությունը քննելիս, այլև բանաստեղծության գաղափարական հենքը բացահայտելիս: Թվի հետ իմաստային գուգորդումը կատարվում է թե՛ ներկայացվող նյութի զուտ պատկերային դաշտում, թե՛ ասելիքի ենթաշերտում: Մեր բանաստեղծներից շատերն են գործածել գեղարվեստական այդ հնարանքը՝ Թումանյան, Իսահակյան, Սևակ, բայց Սահյանի մոտ թիվն իր ուրույն ընկալումն ունի:

Սահյան-արվեստագետը հաճախ է օգտվում ժողովրդական մտածողության ճոխ շտեմարանից, ասելիքի մեջ բեկում ազգային բնավորությունն ու հոգեբանությունը, արժևորելով թվի խորհուրդը՝ ինքնատիպ դարձնում խոսքը՝ առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերելով յուրաքանչյուր բառի նկատմամբ:

«Թվային» բառակապակցություններն ու պատկերները կենտրոնացված են Սահյանի ոչ թե այս կամ այն ժողովածուում կամ շարքում, այլ կարծես համաչափորեն «մաղված են» ողջ քնարերգության մեջ: Բանասացի վարպետությամբ Սահյանը մտերմիկ գրույց է սկսում ինքն իր հետ, խոսում հեռավոր նախնիների լեզվով, պատմում հին օրերից ու անցյալից՝ բանատողերի մեջ կարևորելով տարբեր թվերի մեջ խտացված բազմաբնույթ իմաստները՝ ստեղծում ժողովրդական մտածողության գունեղ կոլորիտ: Նա դառնում է մի հետաքրքիր հեքիաթասաց, բանաստեղծության մեջ բարձրանում է պատումի ուժը, ու տողերը մտերմանում են մարդկային հոգու հետ, սերտաճում ժողովրդական տարերքին:

1700-ամյա քրիստոնեական մշակույթ ունեցող մեր ժողովրդի մտածողության մեջ կարևոր կիրառություն են ունեցել «սուրբ» թվերը, որոնց ուսումնասիրողներն անվանել են «բիբլիական թվեր»: Աստվածաշնչում այդ թվերը երեքը, յոթը և քառասունն են: Ժողովրդական ընկալման մեջ հոգևոր իմաստով ի սկզբանե երեքը գուգորդվել է Սուրբ երրորդության, յոթը՝ աստվածային Սուրբ էության, և քառասունը՝ ջրհեղեղյան մաքրության խորհրդի հետ: Հին կտակարանի Ծննդոց գրքում ներկայացվում է յոթ թվի սրբացման պատմությունը: Գործածական են նաև հարյուրը, հազարը, չորսը, հիսունը:

Հետաքրքիր է, որ Սահյանի բանաստեղծության մեջ երեքն ու քառասունը հատուկ են են գործածվում, իսկ ամենաշատ գործածվող թիվը յոթն է՝ իր բազմաբնույթ իմաստներով: Այն բանահյուսական տարրեր ունեցող գործերում հանդես է գալիս իր «աստվածաշնչյան» նշանակությամբ (յոթ օր ու գիշեր), որի շնորհիվ էլ լայն գործառություն է ունեցել: Այն կրում է նաև ժողովրդական մտածողու-

թյան ու բանավոր ընկալման մեջ հաստատված թվի սրբազան խորհուրդը: Նույն խորհուրդն է կրում նաև թումանյանական «օխտը»: Յոթը գործածվում է նաև հեքիաթներում: Սահյանը հմտորեն կերպավորում է ժողովրդական ընկալման մեջ կայունացած յոթ աշխարհը, յոթ երկինքը, յոթ օր ու գիշերը, յոթ տարին, յոթն անգամը՝ դրանով իսկ կամրջելով բանաստեղծականն ու ժողովրդականը: Ազգային մտածողության մեջ խորիմաստ բարեմաղթանք ունենք՝ «Յոթ որդով սեղան նստեք», և հայկական օջախի մասին գրելիս Սահյանը կարծես առաջնորդվում է հենց դրանով:

«Վեպ» բանաստեղծության մեջ յուրաքանչյուր տողում կրկնվող յոթ օր, յոթ գիշեր կապակցությունն արտահայտում է պահի հանդիսավորություն, բերկրանք, հրճվանք, երևույթի տևականություն.

Յոթ օր, յոթ գիշեր բերդը թնդում էր,  
Պարող ոտքի տակ հողը թնդում էր,  
Յոթ օր, յոթ գիշեր ձեր դուռը բաց էր,  
Յոթ օր, յոթ գիշեր սիրտս մեռած էր:

Յոթ օր, յոթ գիշեր կապակցությունը նաև հակադիր տրամադրություն է ստեղծում, նախ՝ հարսանեկան, ուրախության, ապա՝ կորցրած սիրտ: Այստեղ նկատելի են ժողովրդական մտածողության նրբերանգները:

Խորիմաստ և ինքնատիպ է նույն կապակցության խորհուրդը ՏՎերադարձ! բանաստեղծության մեջ: Ընդգծվում է հայկականը, ավանդականը.

Մայրս սեղան կբանա յոթ օր, յոթ գիշեր,  
...Հայրս հյուրեր կկանչի յոթ օր, յոթ գիշեր:

Պատերազմի ծանր տարիներին դարբնի ընտանիքի տառապանքի, մաքառման, անկոտրելի ոգու մասին պատմող «Չորս ամառ եկավ գնաց» վիպասքային հյուսվածքում կարևոր դեր է վերապահված ոչ միայն չորսին, այլ նաև յոթին: Հյուսվում է գյուղական գերդաստանի ծանր դրաման, ու կրկնվող յոթ թիվը ոչ միայն իմաստային, այլ նաև կառուցողական դեր է կատարում: Նույնասկիզբ տողերը հյուսվածքը դարձնում են պատումային, թվային աստիճանավորումը հետաքրքիր ընթացք է ուրվագծում, հերոսականն ու ողբերգականը համադրվում են: Դարբնի յոթ որդիները պատերազմ են մեկնում, դաշտային աշխատանքում նրանց փոխարինում է յոթ տարեկան մանուկը.

Գնացին... Յոթ տարեկան  
Մանուկը լծվեց սայլին...

Հետո յոթ նամակ է գալիս սև լուրերով, յոթ նկար կրծքին, կրծքի մեջ յոթ շիրմաքար՝ դարբինը յոթ անգամ մուրճով խփում է սալին՝ հաստատելով օջախը վառ պահելու իր վճռականությունը: Յոթը խտացնում է մեծ ողբերգություն.

Յոթ նամակ եկավ դարբնին,  
Յոթ տեղից մեջքը ծռեց...  
Յոթ նկար կրծքի վրա,  
Կրծքի մեջ յոթ շիրմաքար,  
Դարբինը ծանր մուրճով  
Յոթ անգամ խփեց սալին,  
Յոթ կաթիլ արցունք խառնած  
Մի կաթիլ իր ծիծաղին...

Անցնում են տարիներ, «յոթ մատանի - յոթ բոբիկ տղա - յոթ պատանի - յոթ գերդաստան» շրթայով ամբողջանում է դարբնի տոհմաձառը.

Ու հետո պարում էր նա՝  
Ափի մեջ յոթ մատանի,  
Շուրջը յոթ բոբիկ տղա,  
Յոթ շիվեր, յոթ պատ դնի:

Յոթը, խտացնելով բանաստեղծության հուզական ապրումն ու իմաստային նրբերանգները, դառնում է հայկական օջախի տոկունության ու կենսասպիրության խորհրդանիշ.

Ապրում է նա յոթ թռռան  
Յոթ հարուստ գերդաստանով  
Ու դեռ իր ծանր մուրճին  
Չի ասում՝ մնաս բարով:

Այս բանաստեղծության հետ զուգահեռներ ունի «Յոթ ձիավորի բալլադը» ստեղծագործությունը, որն ընդգծում է յոթ թվի որակական ու իմաստային հատկանիշներն ու կառուցված է քանակական ներգործության հոգեբանական հնարքով: Հավերժացնելով իրենց գյուղը պաշտպանող յոթ զոհված ձիավորների հիշատակը՝ հարազատները մեծացնում են նրանց յոթ մանուկներին: Քառասունինը տողում յոթ թիվը օգտագործվում է հիսունհինգ անգամ՝ յուրաքանչյուր պատկերում ստանալով նորովի մեկնություն: Թվակրկնության առումով ստեղծագործությունը բացառիկներից է մեր նորագույն շրջանի քնարերգության մեջ: Բանաստեղծը թվի ինքնանպատակ կուտակումների չի անում: Բալլադում յոթ թվի օգնությամբ ձևավորված արտահայտչաձևերը՝ նույնասկիզբը, բազմաշաղկապությունը, անշաղկապությունը, աստիճանավորումը, ընդգծում են գործողության արագությունը, հետաքրքիր պատումն ու ապրումների նրբությունը: Եթե յոթը փոխարինենք այլ թվով, կխաթարվի բանաստեղծության ձևաբովանդակային ամբողջականությունը, կիշխի բառի սոսկ թվաբանական իմաստը, կվերանա բանահյուսական շունչը:

Ուսումնասիրության ժամանակ վերլուծությունը տարվում է բազմապլան հարթության վրա: Նույն թիվը բանաստեղծական տարբեր պատկերներում իմաստային բազմաձև դրսևորումներ է ունենում: Դա պայմանավորվում է ասելիքով, պատումի ընթացքով, ներկայացվող կոլորիտով, պատկերակերտման նրբությամբ:

«Նորից կարմիր ու կանաչ» ոտանավորում յոթ սարի հետևում դարձվածքը իմաստափոխվել է, ստացել հեռավորության նշանակություն՝ ընդգծելով հավերժի խորհուրդը.

Եվ մահս յոթ անգամ յոթ լեռան հետևն է:  
«Յոթ դրախտը» երանելի երկիրն է.  
Կորած յոթ դրախտի տեղ  
Մեզ ո՞վ է մի Գողթան տալու:

«Յոթ սարի ետև» կապակցությունը խորհրդանշում է անհասանելին, հեռավորը.

Բախտը քեզ հաճախ հեռավոր մի գանձ,  
Հաճախ թռչուն է թվում ոսկեթև...

Փնտրում ես նրան յոթ սարի ետև:

Յոթը դառնում է հնարավորի և անհնարինի չափանիշը.

Ես հարուստ էի: Ես կարող էի

Իմ անհատնելի հղացումներով

Գնել յոթ հազար հավիտենություն ու տալ քեզ նվեր...

...Իմ անհատնելի տառապանքներով գնել յոթ աշխարհ,

Հայտնի և անհայտ մայրցամաքներով ու տալ քեզ նվեր:

Այն ընդգծում է անցյալի հեռավորությունը.

Քո զիրկն եմ եկել, որ արծիվների լքված բներում

Յոթ պատան մաշած իմ պատանության աճյունը փնտրեմ:

Յոթ թիվն առնչվում է ժայռի հետ՝ ընդգծելով նրա տոկունությունը.

Եվ ընկուզենու արմատը համառ

Յոթգլխանի ժայռ է շաղափում:

Յոթը խտացնում է ստվերի ծածուկ ահր.

Մի հսկայական մենավոր կաղնի

Իր հսկայական, իր յոթգլխանի

Ստվերի փեշին նստել է ամուր...

Յոթգլխանի քարափը երկյուղ ու վախ է տարածում.

Դրել է ոտքերն արտին քարափը յոթգլխանի:

Այն արտահայտում է խորհրդավորություն.

Յոթգլխանի սուտը ինչպես հերքեմ:

Այս պատկերում զուգորդումը կատարվում է երևույթի (վիշապ կամ դև) արտաքին նմանության հետ:

«Հավատացեք» բանաստեղծության մեջ սոցիալական խնդիրը բարձրանում է համամարդկային տառապանքի աստիճանի և ոգու սովը համեմատվում է յոթգլխանի դևի ազահ, ամենակուլ էության հետ.

Ասում են թե սովն է գալիս

Ախորժակով աշխարհակուլ

Հին հեքիաթի յոթգլխանի դևի նման:

Յոթը նաև երազանքի թիվ է.

Երբեմն վերից ես նայում

Յոթերորդ երկնքին անգամ...

Այն խորհրդանշում է մանկությունը, հին օրերի անդարձությունը, կարոտը.

Եվ մանկության աշխարհն արդեն

Յոթ պատան է մաշել...

Եվ մանկության աշխարհն արդեն

Յոթ պատան է մաշել:

Սահյանը հաճախակի է գործածում նս երկու թիվ՝ հազարն ու չորսը: Կարելի է ենթադրել, որ հազար թվի խորհուրդը հայ ժողովրդական խոսքի մեջ անցել է արևելյան ավանդապատումներից ու զրույցներից («Հազար ու մի գիշեր»): Հազար թիվը Սահյանը գործածում է հատկապես խոհափիլիսոփայական գործերում, ընդգծում ապրումի անորոշությունն ու անսահմանությունը.

Հազար անգամ ես մտքով քեզ մի նոր երգ ձոնեցի

Ու գալստյան տոնը քո հազար անգամ տոնեցի:

Հազարը հաճախ հանդես է գալիս ժողովրդի ընկալած «կայուն» իմաստով.

Գլխիդ վրա հազար տեր կա

Մրտիդ վրա հազար բեռ կա:

«Հայրենի գյուղ» բանաստեղծության մեջ բնաշխարհին ու հոգու դաշնությունը միաձուլվում են և արտահայտում երևույթի վիթխարի չափեր.

Եվ փրկել է իր տատի փեշերով

Հազար փորձանքից ինձ հազար անգամ:

«Հայրենական տուն» ստեղծագործության մեջ այն անցյալի ծովածավալ ու կարոտակեզ ապրումների արձագանքն է խտացնում.

Իմ հուշերի թևերով, հազար ու մի ձևերով փարվում եմ  
նրանց:

Թիվը կարծես գունավորում է բնաշխարհին իր անսահմանությունամբ.

Ինչ է ուզում ինձանից թոկից փախած քամին,

Հազար անտառ, հազար ձոր հաճախած քամին...

Հազարը բնապատկերի ազդեցիկ երանգ է տալիս.

Մով երկնքի տակ հազարաչքանի

Ինձ մի խոստանա հետմահու կյանք...

Ընդգծում է տառապանքի բազմապատիկությունը.

Եվ ախ կանչեմ հազար բերան...

Թող հազար անգամ, բյուր հազար անգամ...

Ակնառու է դառնում ցավի խորությունը.

Ինչ-որ կյանքում քեզ է տրվել, եթե տրվեր ծովին,

Հազար տեղից կպատռվեր նրա եզերքը հին...

Հազար թիվն անչափելին է.

Ոտքս տալով հազար քարի,

Տալով հազար սար ու քարի...

Հազար քարեր փշրելով ճանապարհին մեր հեռու՝

Փշրվեցինք քարերին և փշրեցինք իրարու:

Հազարը նաև ժամանակի տևականությունն է ակնարկում.

Մեկ թվում է՝ հազար անգամ հազար տարի:

Հույզերի ալեվետումն ահագնանում է, գորացնում բանաստեղծի հոգին.

Ապրեմ այսպես հազար տարի,

Բախվեմ հազար ժայռ ու քարի,

Շնչեմ հազար հողմ ու քամի...

Հազարը տառապանքի խորությունն է չափում.

Երգում էինք՝ արդեն հազար ախեր քաշած,

Հազար անգամ հազար ախով սրտեր մաշած...

Հազարը ծանր կյանքի արտահայտությունն է.

Բարակեց ծուխը գյուղի,

Հազար ցավ, հույսը մի հատ...

«Արյուն» բանաստեղծության մեջ սերունդների կանչի արձագանքը կա՝

Հազար փորձանքով փորձված իմ արյուն...

և ապրելու հավատամքը.



Մենք դեռ հազար հոգեվարք ենք մերժելու...

Մարդը մի փոքրիկ հյուլէ է տիեզերքի անսահմանության մեջ.

Թե ամեն մեկի ապրած տարիներն առնեն, գումարեն,

Կանի հինգ հազար հավիտենություն:

Անձնայինի և համամարդկայինի փոխտեղում է կատարվում, կարևորվում է սեփական ես-ի որոնումը.

Հազար մարդ է մեջս նստած, բայց ոչ մեկը ես չեմ:

Մերը դրսևորվում է բազում նրբերանգներով, միահյուսվում մարդու էությունն ալեվետող տարաբնույթ զգացմունքների հետ, հուզական լիցքեր ստանում.

Երազիս մեջ քեզ խղճացի հազար անգամ,

Հազար անգամ քեզ ներեցի երազիս մեջ...

Թիվը խորհրդանշում է ապրածի դառնության.

Անցած հազար անկումից, հազար ցավի դիմացած,

Հեռանում եմ աշխարհից՝ աշխարհից բան չիմացած:

«Կտակ» բանաստեղծության մեջ թիվը ցավոտ ապրումների չափանիշն է դառնում.

Հազար զրահ մաշած իմ մեծ համբերության

Հոգեպահուստն եմ ես թողնում այրուս:

Բանահյուսական գրույցներում ու հեքիաթներում չորս թիվը նույնանում է աշխարհի չորս ծագերի հետ: Սահյանի ոտանավորներում այդ թվի խորհուրդը փոխվում է: Նա դրանով հիմնականում խորհրդանշում է Մեծ հայրենականը: Չորս երկար տարիները տառապանքի խորհուրդն են կրում.

Չորս տարվա դաժան դժոխքն էր ծանոթ...

Չորս ամառ եկավ գնաց, չորս անգամ արտը ծլեց...

Պատկերները խտացնում են պատերազմական ծանր տարիների ողբերգության տևականությունը.

...Չորս անգամ բակում ձյունը հալվեց:

Չորս անգամ այգում ծառը ծաղկեց...

Չորսը մատնանշում է նաև մտերմիկ խորհուրդ.

Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու,

Չորս հոգով էինք, ոչ մեկը չկար,

Թե իմանար մեզ ինչից է զրկում,

Առավոտն ինքն էլ երևի չգար:

Հիսուն թիվն ընդգծում է ապրած տարիների հոլովույթը, չափակշռվում են անցյալն ու գալիքը.

Եվ իմ հիսուն աշնան մեջ մի գարուն չկա:

«Խոսքերիդ համը» բանաստեղծության մեջ քառասուն թիվը հեռավորության խորհուրդն ունի: Դրա արմատները նկատում ենք թե՛ մեր ժողովրդական էպոսում, թե՛ հեքիաթներում: Քառասունն այդտեղ կարծես փոխարինում է յոթին.

Ձեր ուզածը ձեր աչքի առջև էր,

Մերը՝ քառասուն սարի ետևն էր:

Սահյանը չափազանցություններ կերտելու մեծ վարպետ է, ու թիվն այդ պատկերներում կարևոր դեր ունի.

Դու հինգ հազար տարով  
Եվ հինգ միլիոն անգամ  
Ինձանից մեծ էիր...

Առաջին սիրո մաքրությունը, կատարելությունը, նուրբ ապրումների քնքուշ արձագանքը քնարերգու բանաստեղծի հոգում հույզերի հորդաբուխ ծփանք է բերում: Առաջին դասական թվականը դառնում է անաղարտ զգացողությունների խորհրդանիշ.

Առաջինն էիր ու վերջինն էիր  
Իմ անքուն, անքեն տարերքի մեջ...

Ձուլվում են սիրահար սրտերը, տեղի է ունենում բնության հրաշքը: Տերյանական «Ես եմ, դու ես, ես ու դու...»-ի առեղծվածը Սահյանը լուծում է թվերի լեզվով (մեկ, երկու).

Ես մեկն էի, ինչպես է, որ երկու դարձա...

Բանաստեղծությունների վերլուծության ժամանակ նկատում ենք, որ Սահյանի պատկերակերտման համակարգի ակունքը ժողովրդական լեզվամտածողությունն է, որից նա վերցնում է ոչ միայն գեղեցիկ արտահայտչամիջոցներ, այլև իմաստավորելով թիվը՝ անմիջական է դարձնում ասելիքը, ներկայացնում է ազգային մտածողությունը, նրա վարքուբարքի ճշմարիտ պատկերը: Արժևորելով թվի խորհուրդը, դիմելով ազգային մտածողությանն ու արտահայտչաձևերին՝ Սահյանը բազում երանգներով հյուսում է անհատական ու ինքնատիպ կենսագրություն՝ հավերժող հատկանիշներով ու չխամրող գեղեցկությամբ:

**Алиса - Символическое значение смысл числа в лирике Амо Сагияна.** - В народном мышлении число проявляется как символ, выражая душевное состояние, характер, настроение, судьбу и историю страны. В лирике Амо Сагияна смысл числа имеет особую роль. Цель статьи во време изучения системы: воссоздания сагиановских стихотворений представить своеобразное восприятие числа-символа и его многоплановый анализ.

**Alisa Hasanyan - The Sense of number in Hamo Sahyans Lyrics.** - In popular thought the number is manifested as a symbol expressing emotional state, character, mood, country's fate and history. In Hamo Sahyan's lyrics the symbol of number has its peculiar role. The aim of the article is to present the original perception and its multi-plan exam of the number symbol while teaching picture-creating system in Hamo Sahyan's poems.

---

---

## МЕТОДИЧЕСКИЕ ОСНОВЫ ИЗУЧЕНИЯ ТВОРЧЕСТВА И.А.БУНИНА В ВУЗЕ

АШХЕН АТАНЕСЯН

Иван Алексеевич Бунин занимает особое место в истории русской литературы. *Творчество* Бунина остаётся актуальным на протяжении вот уже многих десятилетий. В результате изучения творчества Бунина студенты должны понять, какое место занимает писатель в истории русской литературы, ознакомиться с лучшими произведениями писателя, которые продолжают традиции русской реалистической литературы. При изучении творчества Бунина в вузе преподаватель должен использовать как традиционные, так и инновационные методы обучения.

**Ключевые слова:** Бунин, литература, студенты, анализ произведения, комплексное изучение, преподаватель, методика, лекция.

Иван Алексеевич Бунин занимает особое место в истории русской литературы. Бунин - величайший поэт, прозаик, переводчик. Его произведения – это продолжение традиций русской классической литературы XIX века. Творчество Бунина остается актуальным на протяжении вот уже многих десятилетий.

В произведениях Бунина раскрывается неповторимый художественный мир писателя. Тонкие описания природы, подробный психологический анализ, богатство и изящество языка возвело писателя на высоты русской и мировой литературы. И уже к началу XX-го века Бунин стал одним из самых популярных писателей России. Говоря о таланте Бунина, Л.Н.Толстой отмечал: «Так написано, что и Тургенев не написал бы так, а уж обо мне и говорить нечего»<sup>1</sup>.

Особое место в творчестве Бунина занимает лирика. В своих лирических произведениях поэт обращается к вечным темам – любви, смерти и природы. Для лирики Бунина характерно слияние двух миров: мира природы и мира человека. «Бунинская поэзия – это не только волнение и страсть. Это особый язык внутри русского языка, это столь мастерское, столь точное и плотное расположение лучших слов в наилучшем порядке, когда замена одного из них разрушила бы всю архитектуру стиха. Каждое слово выверено на хрустальном камертоне его чувствительного ума, каждое стихотворение словно отлито из одного куска драгоценного металла»<sup>2</sup>.

Природа занимает большую часть художественных описаний Бунина и является для писателя основой гармонии бытия, а человек - частичка этой природы, центр мироздания.

И лирические, и прозаические произведения писателя живописны, в них изобилуют краски, которые автор тщательно отбирает из палитры самой природы.

---

<sup>1</sup> Михайлов О.Н. *И.А.Бунин*. Жизнь и творчество. Тула, 1981, с. 11.

<sup>2</sup> Ильинский И. М. О Буinine: статьи, интервью. М., 2009, с. 5.

In addition, it is necessary to introduce a microfinance ranking by several ways, which will give opportunity to organize comparative analysis of microfinance activities. In fact, microfinance does not provide a similar impact on indicators, such as: an increase in jobs positions, income growth entrepreneurs, poverty reduction, improvement of social conditions of micro entrepreneur, that compels the need for comprehensive assessment of the socio-economic results and presenting microfinance ranking by separate areas of the process.

---

---

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԴԻՆԱՄԻԿԱ

### ՎՈՒՈՐՑԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Աշխատանքում ցույց են տրված տնտեսական աճի դինամիկան ԱՊՀ երկրներում և Հայաստանում տնտեսական աճի առանձնահատկությունները: Աշխատանքում լուսաբանվում է տնտեսական աճի տեմպերի արագացման անհրաժեշտությունը, մասնավորապես կապիտալ ներդրումների խրախուսումը:

**Բանալի բառեր.** դինամիկա, տնտեսական աճի տեմպեր, ազատացում, կապիտալ ներդրումներ, խրախուսում, պետության տնտեսական դերը, կյուբատարություն, էներգատարություն, արդյունավետություն

Տնտեսական աճը տնտեսության և հասարակության զարգացման գլխավոր ցուցանիշն է: Այն միաժամանակ պետության տնտեսական գործունեության գնահատման ինքնատիպ, յուրահատուկ ցուցանիշ է, տնտեսության անվտանգության և անկախության ապահովման երաշխիք: Կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճը և որակական հագեցվածությունը արտահայտում է հասարակության «առողջության» վիճակը:

Տնտեսական գրականության մեջ և գործնականում նույնացվում է տնտեսական աճը և տնտեսական զարգացումը, քանի որ տնտեսական զարգացումը հիմնականում պայմանավորված է տնտեսական աճով: Սակայն տնտեսական զարգացումը ավելի լայն բնույթի հասկացություն է և ներառում է նաև բնակչության բարեկեցությունը:

Դրա հետ մեկ տեղ պետք է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ միշտ չէ որ տնտեսական աճը ուղեկցվում է տնտեսական բոլոր տեսակի ցուցանիշների բարելավումով: Օրինակ՝ 21րդ դարի առաջին տասնամյակում Ռուսաստանի Ֆեդերացիայում, չնայած տնտեսական աճը ուղեկցվեց մարդկային զարգացման ինդեքսի աճով, սակայն վատթարացավ տնտեսության ճյուղային կառուցվածքը:<sup>189</sup> Չնայած Ճապոնիայում տնտեսական աճը պայմանավորեց տնտեսական զարգացում (տնտեսական հրաշք), սակայն այն ուղեկցվեց շրջակա միջավայրի աղտոտումով: Հայաստանում տնտեսական աճը միշտ չէ, որ պայմանավորում է համարժեք բնակչության կենսամակարդակի բարձրացում: Բացի դրանից աճում է նաև աչքարությունը և ազատագաղթը: Ուստի, չնայած տնտեսական աճը և տնտեսական զարգացումը միմյանց մոտ են, սակայն նույնական չեն: Դեռ ավելին տնտեսագիտության տեսության մեջ գոյություն ունի այսպես կոչված «աճ, առանց զարգացման» հասկացությունը, երբ տնտեսական աճի բարձր տեմպերի ժամանակ որոշակի ցուցանիշներ փոքր են փոփոխվում, ինչպես նաև «աճի որակ» հասկացությունն, որը հատուկ ուշադրություն է պահանջում թե տնտեսական աճի արդյունավետությունը ինչպես է ազդում կյանքի որակի վրա:

---

<sup>189</sup> St'u *Булитов А. С.* Национальная экономика, М. Магистр. 2015 էջ 55

Տնտեսական աճը պայմանավորված է ոչ միայն լրացուցիչ ռեսուրսների օգտագործմամբ (էքստենսիվ տնտեսական աճ) այլև դրանց օգտագործման արդյունավետության բարձրացմամբ՝ բարձր տեխնոլոգիայի կիրառմամբ և աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ (ինտենսիվ տնտեսական աճ): Այս տեսակետից տնտեսական աճի արդյունավետությունը կարելի է բնորոշել, որպես երկրում տնտեսական ռեսուրսների օգտագործումից ստացված մաքսիմում տնտեսական բարիք: Կամ էլ տնտեսական ռեսուրսների այնպիսի զուգակցամ, որը տրված արտադրանքի թողարկումը կապահովի ավելի պակաս (մինիմալ) ծախսերով: Տնտեսական աճի արդյունավետության բարձրացման գործում էական նշանակություն ունի նաև կապիտալի և բնական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Դա ամենից առաջ վերաբերվում է արդյունքի կապիտալատարության, նյութատարության և էներգատարության կրճատմանը:

Ցավոք Հայաստանի վիճագրական ծառայությունը էքստենսիվ աճի գերակայության պայմաններում նման ուսումնասիրությունների չի կատարում: Ընդ որում կապիտալատարությունը մակրոտնտեսական մակարդակով որոշվում է հիմնական կապիտալի արժեքի և ՀՆԱ-ի հարաբերությամբ (հակառակ ցուցանիշը անվանվում է կապիտալահատույց): Նման հետազոտություններ կատարվել են Ռուսաստանի Դաշնությունում՝ 2007թ. հիմնական կապիտալի (61,798 տրիլիան դոլար) հարաբերությունը ՀՆԱ-ի (33111տրիլ. դոլար) կազմել է 1,87 դոլար (61,798/33111=1.87): Այն կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ, որ 1 ռուբլի ՀՆԱ-ի արտադրության համար օգտագործվել է 1,87 ռուբլու հիմնական կապիտալ կապիտալատարությունը կազմել է 0,53 կոպեկ (33111/61,798 =0.53):<sup>190</sup>

Նյութատարությունը ամբողջ երկրի մաշտաբով դժվար է հաշվարկել, որ պայմանավորված է հիմնականում նյութերի և հումքի մեծ քանակությամբ և անվանակարգով: Դրա համար գործնականում օգտագործվում է այնպիսի գնահատումներ (ցուցանիշներ) ինչպիսիք են, ասենք պողպատի, ցեմենտի, փայտանյութի միավոր ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ:

Ինչ վերաբերվում է ազգային տնտեսության էներգատարությանը, ապա այն հաշվարկվում է առաջնային էներգիայի սպառման, ֆիզիկական ծավալով՝ (արտահայտված տոննաներով) պայմանական վառելիքի կամ նավթի համարժեքի հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ: Այսպես Չինաստանում 1990 թվականի էներգահայտուցը կազմել է 2 դոլար, իսկ 2005 թվականին 3,1 դոլար: Սակայն պետք է նշել, որ էներգահայտույցի վրա ոչ այնքան ազդում է էներգիայի սպառման արդյունավետությունը, որքան էներգատար գործունեության ձևերը այլ կերպ ասած, էթե այդ ցուցանիշը Հայաստանում կազմում է 5,6 դոլար (2004 թ.)՝ իր թույլ զարգացած տրասպորտով, մետաղաձուլությամբ և քիմիական արդյունաբերությամբ դա չէր լինի 2,5 անգամ ավելին քան Ռուսաստանում կամ Ուկրաինայում՝ (2 դոլար):<sup>191</sup> Դրա համար նպատակահարմար չէ էներգիահայտույցի գնահատումը ըստ միջճյուղային համեմատությունների, որքան երկրի էներգատարության (էներգահատույցի) դինամիկան է ցույց տալիս:

<sup>190</sup> Տե՛ս *Булгатов А. С.* национальная экономика, "Магистр" 2015 էջ. 83

<sup>191</sup> Տե՛ս Содружество Независимых государств в 2008. Краткий справочник М. 2009 г. էջ 12

Չնայած տնտեսական աճի մոդելները օգնում են որոշելու տնտեսական ռեսուրսների դերը (լուսման) դրանց արդյունավետ օգտագործման համար, սակայն չեն պատասխանում այն հասցեին, թե ինչու կարճատև, միջին և երկարատև ժամանակաշրջաններում ազգային տնտեսության աճը անկայուն է դեռ, ավելին դա բացահայտ ճշմարտություն է («աքսիոմա») և այն հաճախ ուղորդվում է տնտեսական ճգնաժամերով, որը կարելի է տեսնել ներքոհիշյալ աղյուսակի տվյալներից:

**Աղյուսակ 1<sup>192</sup>**

***Հետ խորհրդային երկրներում ՀՆԱ-ի աճը տոկոսներով***

Երկրներ	1992-2000	2001-2008	2001	2005	2007	2008	2009	2010
Ռուսաստան	- 4	6,5	5,1	6,4	8,1	5,6	- 7,9	4,0
Բելառուսիա	- 1,2	8,2	4,7	7,5	3,0	7,2	- 6,5	1,5
Ուկրաինա	- 8,0	6,9	9,2	2,7	7,6	2,1	- 15,1	3,7
Ադերբեջան	- 5,6	17,0	9,9	26,4	25,0	11,6	9,3	2,7
Վրաստան	- 7,9	7,6	4,8	9,6	12,4	2,1	- 4,0	2,0
Հայաստան	- 2,9	11,9	9,6	13,9	13,8	6,8	- 14,8	2,0
Լատվիա	- 3,7	7,3	8,0	7,8	8,9	3,0	- 15,0	- 1,6
Լիտվիա	- 2,8	7,3	6,6	7,8	8,9	3,0	- 15,0	- 1,6
Էստոնիա	0,1	6,6	7,7	9,2	6,3	-3,6	- 14,1	- 0,8
Լեհաստան	4,7	4,5	1,2	3,6	6,8	4,9	+ 1,7	2,7
Չինաստան	10,5	10,3	8,3	11,6	13,0	9,0	8,7	10,0

Աղյուսակի տվյալներից երևում է, որ սկսած 1990թ. հետխորհրդային բոլոր երկրներում արձանագրվել է տնտեսական աճի տեմպերի անկում: Այն, նախ պայմանավորված է եղել նախկին ԽՍՀՄ-ում վերջին տարիներին (1980թ.-ից) տնտեսական և համակարգային ճգնաժամով և շուկայական հարաբերությունների անցման վերափոխումնային (տրանսֆորմացիոն) անկումով: Հետխորհրդային երկրները (1990թ.-ի երկրորդ կեսից) Ադերբեջանը, Հայաստանը, Բելառուսիան, Ղասախստանը, Թուրքմենիան, Ուզբեկստանը և Մեծ Բալթյան երկրները կարողացան հաղթահարել ճգնաժամը և ապահովել տնտեսական աճ: Իսկ մի շարք հետխորհրդային երկրներ՝ Մոլդովիան, Ուկրաինան, Վրաստանը, Կիրգիզիան և Տաճիկստանը նույնիսկ մինչև համաշխարհային ֆինանսատնտեսական ճնգնաժամն ՀՆԱ-ի ծավալով ունեցել են ավելի ցածր մակարդակ, քան 1990 թվականին: Ռուսաստանը կարողացավ միայն 2008 թ-ին վերականգնել ՀՆԱ-ի նախկին մակարդակը: ԱՊՀ-ը երկրների շարքում ամենամեծ տնտեսական անկումն արձանագրվեց Հայաստանում (59 %): Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանը երկրորդ տեղում էր (40 %), իսկ Ուկրաինան՝ երրորդ (37 %):

Հայաստանում տնտեսական անկման բարձր մակարդակը պայմանավորված էր նաև մի շարք առանձնահատուկ դժվարություններով: Մասնավորապես

<sup>192</sup> Տե՛ս նույն տեղ էջ 57-58

Սպիտակի ավերիչ երկրաշարժը, արցախյան պատերազմը և Ադերբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը, էներգետիկական ճգնաժամը և այլն: 1994ից մինչև 2008թթ. Հայաստանում արձանագրվեց միջին հաշվով 8 % տնտեսական աճ: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի (2008թ) ժամանակ Հայաստանում կրկին արձանագրվեց 14,8 % տնտեսական անկում, որը ԱՊՀ երկրների շարքում բարձր ցուցանիշներից մեկն է (4 –րդ տեղում): 2010 թ. Հայաստանում կրկին արձանագրվեց տնտեսական աճ՝ 1,8 %: 2015 թ. համար համաշխարհային բանկը կանխատեսում է Հայաստանում 0- ական աճ: Սակայն առատ գյուղատնտեսական տարին կարող է ապահովել տնտեսական աճ մոտ 2-2,5 %-ով:

Տնտեսագիտության տեսության մեջ առկա տնտեսական աճի մոդելները (- Կոբբա-Դուգլաս, Ռոբերտ Սոլոու և այլն) օգնում են որոշելու տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Սակայն դրանք չեն պատասխանում այն հարցին, թե ինչու ազգային տնտեսության աճը անկայուն է: Այս նկատառումով հարկ ենք համարում նշել հետևյալ երեք պատճառները: Առաջին, անցումային և զարգացող երկրները, որպեսզի հասնեն զարգացած երկրների մակարդակին դեռևս ունեն հնարավորություններ սահմանելու տնտեսական աճի բարձր տեմպեր, սակայն աստիճանաբար մոտենալով զարգացած երկրների մակարդակին այդ հնարավորությունները աստիճանաբար կրճատվում է: Օրինակ, Ճապոնիան 1980 թ. ձգտելով հասնել զարգացած երկրների մակարդակին հասավ տնտեսական աճի բարձր տեմպերի (Ճապոնական տնտեսական հրաշք), սակայն հետագայում կտրուկ կերպով նվազեց տնտեսական աճի տեմպերը: Երկրորդ, շուկայական տնտեսության բոլոր երկրներում դեռևս պահպանվում է պարբերաշրջանային (ցիկլային) զարգացումը: Երրորդ, տնտեսական աճի տեմպերը այս կամ այն երկրում պայմանավորված է նրանով, թե ինչպիսի արդյունավետությամբ է օգտագործում առկա տնտեսական ռեսուրսները: Դրա հետ մեկտեղ կարևոր նշանակություն ունի արտահանման միջազգային գների տատանումները, երկրի տնտեսական քաղաքականության արդյունավետությունը, ռազմական ծախսերը, եղանակային տարբերությունները (գյուղատնտեսության մեջ), բնական աղետները և այլն:

**Володя Овсепян - Экономический рост.** - В работе рассматривается динамика экономического роста в странах СНГ и раскрываются особенности экономического роста в Армении. В работе обосновывается необходимость ускорения экономического роста, в частности, стимулирования капитальных вложений.

Ключевые слова: динамика, темпы экономического роста, либерализация, капитальные вложения, стимулирование, экономическая роль правительства, материалоёмкость, энергоёмкость, эффективность.

**Volodya Hovsepyan - Economic growth.** - This paper considers the dynamics of economic growth in CIS countries and reveals the features of economic growth in Armenia. The paper proves the necessity of speeding up economic growth, in particular, encouraging capital investments.

Key words: dynamics, rates of economic growth, liberalization, capital investments, stimulation, economic role of the government, material consumption, energy consumption, efficiency.

# Ք Ա Ղ Ա Ք Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Վ Փ Ի Լ Ի Ս Ո Փ Ա Յ Ո Ւ Թ Ո Ւ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

### ԱՐՄԱՆ ՄԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական համակարգը լիարժեք ժողովրդավարական էր, որը սովյալ ժամանակահատվածի համար արդյունավետ չէր: Այն իր ողջ գոյության ընթացքում չէ, որ ունեցել է խորհրդարանական կառավարման համակարգ: Խորհրդարանը գործել է երկու փուլով՝ 1918թ. օգոստոսի 1 – 1919թ. փետրվարի 28 և 1919թ. օգոստոսի 1 – 1920թ. մայիսի 5, բայց այդ գործունեությունը չի եղել արդյունավետ: 1920թ. մայիսի 5 -ին ստեղծվել է կուսակցական դիկտատուրա, որը դիկտատուրա չէր դասական առումով, այլ պայմանավորված էր ներքին և արտաքին թշնամիների չեզոքացնելու հանգամանքով:

**Բանալի բառեր.** Քաղաքական համակարգ, Հայաստանի հանրապետություն, ժողովրդավարություն, դիկտատուրա, խորհուրդ, խորհրդարան, Դաշնակցություն, Բյուրո – կառավարություն:

Հայաստանի առաջին հանրապետությունը գոյություն է ունեցել այնպիսի պատմական ժամանակահատվածում, որը խորհել է տալիս, թե որքանով էր նպատակահարմար այն քաղաքական համակարգը, որը որդեգրվել էր նրա համար: Քաղաքական համակարգերի ընտրությունը անպայմանորեն պետք է պայմանավորել ոչ միայն ներքին, այլև արտաքին գործոններով: Ներքին գործոն ասելով պետք է հասկանալ, թե ինչպիսի ներքաղաքական իրավիճակ է ապրում սովյալ համակարգը որդեգրած կամ որդեգրել փորձող քաղաքական միավորը: Հայաստանի առաջին Հանրապետության համար կարելի է պնդել, որ այն քաղաքական իրավիճակը, որում գտնվում էր այն, միառժամանակ երկրորդական պետք է դարձներ ժողովրդավարական համակարգի ընտրությունը: Իսկ այդ քաղաքական իրավիճակը թելադրում էր ավելի շատ դիկտատուրական կառավարման համակարգի առժամյա ընտրություն, որովհետև ներքին դավադիր թաթար տարրը ցանկանում էր ներսից պայթեցնել այդ պետությունը: Բավական է նշել, որ հանրապետության ներսում գոյություն ունեին թվով քսաներկու թաթարական իշխանություններ, որոնք արտաքուստ որդեգրելով մեղմ և հանդուրժողական վերաբերմունք, ներքուստ դավում էին նրան և ձգտում էին պայթեցնել: Չպետք է անտեսել նաև այն թշնամական վերաբերմունքը, որն ունեին ՀՀ նկատմամբ Վրաստանն ու Ադրբեջանը: Այս պայմաններում անհրաժեշտ էր ուժերը միավորել պետության փաստացի ամրապնդման ուղղությամբ, որի հաջողության գաղտնիքը ուժեղ իշխանություն էր կամ դիկտատուրան, բայց ոչ դասական իմաստով, այսինքն՝ սեփական ժողովրդի իրավունքների և ազատության ոտնահարմամբ, որը նախատեսում է սեփական իշխանության հարատևության ապահովում, այլ՝ դիկտատուրա՝ այդ նույն ժողովրդին ընդդեմ թշնամիների միավորելու և նրա

փաստացի ու իրավական գոյությունը որոշակի սահմանների վրա հիմնավորելու համար:

Արտաքին գործոն ասելով պետք է նկատի ունենալ գերտերությունների պարտադրանքները քաղաքական համակարգերի ընտրության տեսանկյունից: Իսկ վերջիններս 1918 – 20թթ. ցանկանում էին Հայաստանը տեսնել ժողովրդավարական, որը հայության ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից միանգամայնորեն ժամանակավրեպ էր: Այս ամենի հետևանքով ՀՀ գոյության ոչ երկարատև ժամանակահատվածում մենք ականատեսն ենք դառնում երկու քաղաքական թևերի անընդհատ պայքարի՝ քաղաքական այս կամ այն համակարգի ընտրության շուրջը, որը քիչ նշանակություն չունեցավ այդ պետության 1920թ. ճաշակած պարտությունների առումով: Այդ պայքարի հետևանքով է, որ այս պետությունն ունեցավ բավական յուրահատուկ քաղաքական համակարգ, որն իր մեջ ներառում է այն ժամանակների համար և ընդունելի և դատապարտելի բաղադրամասեր:

Հայտնի է, որ Հայաստանի առաջին հանրապետությունը խորհրդարանական կառավարման տիպի պետություն էր, որը ենթադրում է լայն ժողովրդավարություն: Սակայն նման պետության որակավորումը սխալ է տարածել նրա գոյության ողջ ժամանակահատվածի վրա, որովհետև ՀՀ – ն ունեցել է զարգացման փուլեր , որոնց ընթացքում քաղաքական համակարգը լիովին փոխվել է: Խորհրդարանական կառավարմանը փոխարինել է կուսակցական կառավարումը՝ հանձին Բյուրո – կառավարության, որի գործունեության ընթացքում չի գումարվել խորհրդարանական ոչ մի նիստ և բոլոր որոշումները առանց խորհրդարանի վավերացման իրականացրել է Դաշնակցության Բյուրոն, որի նախագահն ու անդամները միաժամանակ կառավարության նախագահն ու անդամներն էին: Ահա սրանում է կայանում ՀՀ քաղաքական համակարգի յուրահատկություններից մեկը: Փաստորեն 1920թ. մայիսի 5 – ից մինչև նույն թվականի նոյեմբերի 23 – ը երկրում իշխում էր կուսակցական դիկտատուրա: Բայց այն դիկտատուրա էր պետության թշնամիների նկատմամբ և ոչ թե սեփական ժողովրդի, որով պետք է պայմանավորել հիշյալ պետության քաղաքական համակարգի մյուս յուրօրինակությունը: Դաշնակցության միանձնյա կառավարելու ձգտումը պետք է պայմանավորել երկրի առջև ծառայած վտանգներով, բոլշևիկների մայիսյան և թաթարական խռովություններով և ոչ թե ժողովրդավարական պետության նկատմամբ անհանդուրժողականությամբ: Եվ այդ դիկտատուրան տալով իր դրական արդյունքները, պետությունը փրկելով ներսից պայթեցնելու վտանգից, ի վերջո վերանալու էր: Նման դիկտատուրայի ստեղծումը միանգամայնորեն արդարացված էր, թեպետ ուշացած: Իսկ ժողովրդավարական քաղաքական համակարգը Հայաստանի Հանրապետության համար ժամանակավրեպ էր:

Այս ամենում համոզվելու համար փորձենք լուսաբանել ՀՀ կազմավորման սկզբում ձևավորված քաղաքական համակարգի էությունը, իսկ մինչև այդ, թե ինչ պետք է հասկանալ առհասարակ քաղաքական համակարգ ասելով:

Քաղաքական համակարգ հասկացողությունն իր մեջ ներառում է հետևյալ բաղադրամասերը՝ պետություն, քաղաքական իշխանություն, քաղաքական կուսակցություններ, քաղաքական վարչակարգ, զանգվածային լրատվության միջոցներ: Պետությունը քաղաքական համակարգի միջուկն է, մնայուն, բայց ոչ հավերժական կազմակերպություն, որի կառավարման ղեկն ստանձնում են իշխանությ-

յունները: Այդ իշխանությունների այլ քաղաքական կազմակերպությունների կամ կուսակցությունների և ԶԼՄ-ների նկատմամբ հանդուրժողականության չափից է կախված քաղաքական համակարգի ժողովրդավարական, ավտորիտար կամ ամբողջատիրական էությունը:

Հայաստանի առաջին հանրապետությունում այդ հանդուրժողականությամբ չափը ապահովում էր այդ պետության քաղաքական համակարգը լիարժեքորեն ժողովրդավարական համարելու հիմքերը: Փորձենք դրանում համոզվել՝ դիմելով փաստերին:

Հայտնի է, որ Հայաստանի առաջին Հանրապետությունն ունեցել է երկու օրենսդիր մարմին: Առաջինը կոչվում էր Հայաստանի խորհուրդ, որը ոչ թե ձևավորվել է պետության կազմավորմանը հաջորդած ընտրությունների հետևանքով, այլ՝ դեռևս 1917թ. Թիֆլիսում արևելահայերի գումարած համագումարում ընտրված Հայոց Ազգային խորհրդի կազմի ընդլայնմամբ: Հայոց Ազգային Խորհուրդը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ ընտրվել էր 15 հոգուց: 1918թ. մայիսի 28 – ին Հայոց Ազգային խորհուրդն իրեն հռչակում է հայկական գավառների միակ իշխանություն, որից հետո հուլիսի 20 - ին եռապատկելով իր անդամների թիվը, վերակազմվում է՝ որպես Հայաստանի Խորհուրդ՝ Ավետիք Սահակյանի նախագահությամբ: Խորհուրդ են հրավիրվում թուրքերի եզդիների և ռուսների ներկայացուցիչներ<sup>1</sup>:

Խորհրդի պաշտոնական բացումը տեղի է ունենում 1918թ. օգոստոսի 1 – ին Երևանում: Որպեսզի համոզվենք, որ Հայաստանի առաջին Հանրապետությունն իրոք ուներ ժողովրդավարական քաղաքական համակարգ, բավական է մատնանշել, թե ինչպիսին էր նրա կազմը: Այն ներառում էր 18 դաշնակցական, 6 սոցիալիստ հեղափոխական, 6 սոցիալ – դեմոկրատ, 2 անկուսակցական, 1 եզդի, 1 ռուս<sup>2</sup>:

Ինչպես համոզվում ենք՝ օրենսդիր մարմնում ընդգրկված էին բոլոր առկա քաղաքական ուժերի և այլազգիների ներկայացուցիչները, որը վկայում է որ **Հայաստանի առաջին Հանրապետությունը ձևավորվում էր որպես ժողովրդավարական պետությունների բոլոր առանձնահատկությունները ներառող պետություն:** Նույնիսկ խորհրդում ներառված էին 6 մահմեդականներ, որոնց առկայությունը ենթադրում էր վտանգ Հայաստանի ազգային անվտանգության համար, որի թուրք կամ թաթար տարրը միշտ հակված էր ներսից պայթեցնելու այդ նորանկախ պետությունը: **Եզրակացությունը մեկն է՝ անկախ ընտրված քաղաքական համակարգի նպատակահարմարությունից, այն լիարժեք ժողովրդավարական էր:**

Իսկ ժողովրդավարական քաղաքական համակարգը տվյալ իրավիճակում, ինչպես նշեցինք, ժամանակավրեպ էր, որովհետև, Հայաստանին դավում էին նրա անմիջական հարևաններ Վրաստանն ու Ադրբեջանը, որոնց հետ արդեն 1918թ. աշնանից խորացան տարածքային վեճերը: Բացի այդ, Խորհրդի կազմը խայտաբղետ էր, որը հնարավորություն չէր ընձեռում ուժերի կենտրոնացման համար այն բարդ ժամանակաշրջանում:

<sup>1</sup> Տես *Աշոտ Ներսիսյան*, Ավետիք Սահակյան/Հայր Աբրահամ/, Երևան, 2006, էջ 211:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 217, նաև՝ *Ս. Վրացեան*, Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958, էջ 184 - 190



Ինչպես նկատել է Ս. Վրացյանը՝ «< Հայաստանի խորհուրդը ներքին շահախից գուրկ, ամուր մեծամասնություն չունեցող, հակամարտություններով լի և հիվանդ մի մարմին էր և այդ հիվանդությունը հնարավոր չէրավ դարմանել<sup>3</sup>»:

ՀՀ առաջին կառավարությունը, որի վարչապետը Հովի. Քաջագունին էր, նույնպես ձևավորվում է ժողովրդավարական սկզբունքով: Ցավոք նրան չի հաջողվում կառավարության մեջ ներառել Հայ ժողովրդական կուսակցության և Էսեռների ներկայացուցիչներին և առաջին կառավարության կազմի մեջ մտնում են չորս դաշնակցականներ<sup>4</sup>, երկու անկուսակցականներ, բայց այն, որ վարչապետը ձգտում էր կառավարության մեջ ներգրավել նաև այլ քաղաքական ուժերի, վկայում է քաղաքական համակարգի ժողովրդավարական լինելու մասին:

Այդ մասին է վկայում նաև հանդուրժողական վերաբերմունքը արտախորհրդարանական քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Դրանք էին ՀՍՌԿ –ն, ՄԴՀԿ-ն և ՄԴԲՀԿ-ն/Մպեցիֆիկները/:

Ինչպես արդեն նշեցինք, նման քաղաքական համակարգը մերժելի էր շատ դաշնակցական գործիչների համար/ Արամ Մանուկյան, Ռուբեն Տեր Մինասյան, Արշակ Ջամալյան, Արտաշես Բաբայան և այլն/, որոնք ցանկանում էին հասնել կուսակցական դիկտատուրայի: Սա նշանակում է, որ պայքար էր գնում կառավարման համակարգի ընտրության շուրջը, որը պայմանավորված էր այս կամ այն քաղաքական ձգտումների հեղինակների՝ պատմական ժամանակահատվածի նկատմամբ ունեցած մոտեցումներով: Որն էր կարևորը՝ ժողովրդավարական համակարգը, որը նախատեսում էր կուտակված հրատապ խնդիրների շուտափույտ լուծում, թե դիկտատուրան, որի դեպքում ավելի արագորեն կարելի էր լուծում տալ այդ խնդիրներին: Բնականաբար երկրորդը: Եվ պատահական չէ, որ 1919թ. փետրվարի 28 – ին կուսակցական դիկտատուրայի ստեղծմանը ձգտող ուժերը փակում են խորհուրդը, որից հետո այն չի գումարվում մինչև 1920թ. օգոստոսի 1 – ը, երբ ընտրությունների արդյունքում բացվում է Հայաստանի խորհրդարանը:

Որպեսզի պարզ դառնա, որ խորհրդարանական համակարգը տվյալ իրավիճակում արդյունավետ չէր, բավական է նշել, որ կառավարության ընդդիմադիր գործիչներն այնտեղ զբաղվում էին նրա գործունեության անտեղի քննադատությամբ, այն դեպքում, երբ թաթար ընդդիմադիր տարրը Սուրմալուի գավառում կոտորում էր հայ բնակչությանը նույն փետրվար ամսին և վտանգի տակ էր պահում Էջմիածին – Իգդիր խճուղին<sup>5</sup>: Այս պայմաններում ում էր հարկավոր խորհրդարանը: Ուստի և, փետրվարի 28 – ին երբ քննարկվում էր Սուրմալուի գավառում ռազմական դրություն մտցնելու կառավարության առաջարկը և ընդդիմադիրները դեմ էին արատահայտվում դրան, ժողովրդական մի զանգված մասնավորապես Ռուբենի և Արտ. Բաբայանի դրդմամբ ցրեց խորհուրդը:

Այսպիսով, կարճատև մի ժամանակահատվածում պարզ դարձավ, որ որդեգրված քաղաքական համակարգն արդյունավետ չէր: Մակայն արդյունավետ չդարձավ հունիսին ընտրված խորհրդարանի գործունեությունը ևս, որի բացումը

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 190:

<sup>4</sup> *Արարատ Հակոբյան*, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918 – 1920, Երևան, 2005, էջ 48:

<sup>5</sup> «<Հայրենիք>> ամսագիր, թիւ 9, Յուլիս, 1922, էջ 1923:

տեղի ունեցավ 1919թ. օգոստոսի 1 – ին: Խորհրդարանն այս անգամ ուներ 80 պատգամավոր, որից 72 դաշնակցական, 4 սոցիալիստ – հեղափոխական/էսեռ/, 1 անկուսակցական, 2 թաթար և 1 եզդի<sup>6</sup>:

Ինչպես համոզվում ենք, այստեղ նույնպես բացարձակ մեծամասնություն էր կազմում Դաշնակցությունը, բայց այս խորհրդարանն էլ էր ժողովրդավարական ընտրության արդյունք, քանի որ այնտեղ տեղ էր հատկացված նաև այլազգիներին: Ինչպես էր հնարավոր թաթար պատգամավորի նվիրումը հայկական պետականության ամրապնդման գործին, երբ Հայաստանում առկա թաթարական ապստամբ տարրերը քանդում էին նրա հիմքերը: Միանգամայն ժողովրդավարական սկզբունքներով էր գործում նաև Ալ. Խատիսյանի կառավարությունը, որի օրոք Հայաստանում ազատ քարոզչություն էին տանում բոլշևիկ գործիչները, որոնք 1920թ. մայիսին նույն թաթար տարրի ապստամբ լինելու պայմաններում բարձրացրեցին մայիսյան խռովությունները:

ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարական էության վնասակար հետևանքները գիտակցվեց ուշացումով և ներքաղաքական պայքարն ավարտվեց մայիսյան խռովությունների առիթով ՀՅԴ Բյուրոյի դիկտատուրայի ստեղծմամբ 1920թ. 5 – ից մինչև նոյեմբերի 23 – ն ընկած ժամանակահատվածում, երբ Դաշնակցության Բյուրոն իր ձեռքն առավ կառավարության ղեկը և խորհրդարանի գործունեությունը դադարեցվեց, բայց արդեն բավական ուշ էր, քանի որ բոլշևիկյան քարոզչությունը կազմալուծել էր հայոց բանակը: Այնուամենայնիվ Բյուրո – կառավարությունը կարողացավ չեզոքացնել թաթար ապստամբ տարրը և հոգուտ հայոց փոխել պետության ժողովրդագրական պատկերը:

Սակայն բոլշևիկ – քեմալական դաշինքի պայմաններում այս կառավարությունը չկարողացավ պահել իր դիրքերը և վերջին, Ս. Վրացյանի կառավարությունը դեկտեմբերի 2 – համաձայնագրով գնաց ՀՀ խորհրդայնացմանը:

Շարադրվածից հիմնական եզրակացություններն հետևյալներն են.

Առաջին. Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական համակարգը լիարժեք ժողովրդավարական էր, որը տվյալ ժամանակահատվածի համար արդյունավետ չէր, քանի որ անտեղի խորհրդարանական վեճերը ձգձգում էին կենսական խնդիրների լուծումը:

Երկրորդ. Հայաստանի հանրապետությունն իր ողջ գոյության ընթացքում չէ, որ ունեցել է խորհրդարանական կառավարման համակարգ: Խորհրդարանը գործել է երկու փուլով՝ 1918թ. օգոստոսի 1 – 1919թ. փետրվարի 28 և 1919թ. օգոստոսի 1 – 1920թ. մայիսի 5, բայց այդ գործունեությունը չի եղել արդյունավետ:

Երրորդ. Երկրորդ օրենսդիր մարմինը կարող էր արդյունավետ գործել, քանի որ մեծամասամբ ընդգրկում էր դաշնակցականների, բայց վերջիններս էլ միակամ չէին դիկտատուրայի ստեղծման առումով: Բացի այդ՝ ժողովրդավարական հովերով էր տարված Ալ. Խատիսյանի կառավարությունը:

Չորրորդ. ՀՅԴ Բյուրոն ի վերջո կարողանում է հասատատել իր դիկտատուրան, բայց դա արդեն ուշացած քայլ էր, թեև արդյունավետ էր թաթար տարրի վնասազերծման առումով:

<sup>6</sup> *Արարատ Հակոբյան*, նշվ. աշխ., էջ 185:

Հինգերորդ, Այդ դիկտատուրան դիկտատուրա չէր դասական առումով, այլ պայմանավորված էր ներքին և արտաքին թշնամիներին չեզոքացնելու հանգամանքով:

**Арман Саркисян - *Своеобразие политической системы первой республики Армении*** - Политическая система первой республики Армении была полностью демократической, что для данного периода времени было неэффективным. Она не во все время своего существования имела систему парламентского правления. Парламент действовал в два этапа: с 1 августа 1918г. до 28 февраля 1919г. и с 1 августа 1919г. до 5 мая 1920г., но эта деятельность была неэффективной. 5 мая 1920г. была создана партийная диктатура, которая не была классической диктатурой. Она была создана с целью нейтрализации внутренних и внешних врагов.

**Arman Sargsyan - *The peculiarity of the political system of the First Republic of Armenia***. - The political system of the First Republic of Armenia was fully democratic which was not effective for that period of time. During its existence the governmental system was not always parliamentary. The parliament acted in two stages: from August 1, 1918 to February 28, 1919 and from August 1, 1919 to May 5, 1920, but that activity was not effective. On May 5 1920 Party Dictatorship was formed, which was not a dictatorship in classic sense. It was conditioned by neutralizing internal and external enemies.

---

---

**ՄԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՓՈԽԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՀԱՍՄԻԿ ԽԱՉՍՈՒՐՅԱԼ**

Հողվածում վերլուծվում է սերունդների փոխհարաբերությունների դրսևորման առանձնահատկությունները փոխակերպվող հասարակությունում, ինչը հանդիսանում է հասարակության գործառնության և զարգացման կարևոր գործոններից մեկը: Միջսերնդային փոխհարաբերությունների դինամիկան բնական, պատմական գործընթաց է: Իրականության ընկալումը տարբեր սերունդների մոտ տարբեր ձևերով է ընթանում: Սերունդների հարաբերություններում հակամարտությունը խորանում է հատկապես անցումային ժամանակաշրջաններում՝ փոխակերպվող հասարակություններում: Կոնֆլիկտների տևողությունը կախված է կատարվող պատմական փոփոխությունների կարևորությունից կամ բարեփոխումների արագությունից: Հասարակության մեջ կատարվող կտրուկ փոփոխություններն առաջացնում են տրավմատիկ էֆեկտ, ինչն էլ ավելի է խորացնում հակասությունները միջսերնդային հարաբերություններում:

***Բանալի բաներ.*** սերունդ, արժեք, փոխակերպվող հասարակություն, կոնֆլիկտ:

Սերունդների հակամարտությունը կամ այլ կերպ ասած «հայրեր և որդիներ» կոնֆլիկտը նույնքան հին է, որքան հին է մարդկությունը: Այդ հակամարտությունը առկա է բոլոր ժամանակաշրջաններում և կարող է ծագել տարբեր հարթություններում՝ հասարակության մեջ, սոցիալական ինստիտուտներում, ընտանիքում:

Միջսերնդային հարաբերությունների պրոբլեմները վաղուց գտնվում են համաշխարհային սոցիալական մտքի կենտրոնում: Դրան անդրադարձել են - Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը:

Սերունդների փոխհարաբերություններին անդրադարձել են նաև Ա.Քամյուն, Կ.Լորենցը, Խ.Օրտեգա-ի-Գասսետը, Ժ.Մարտրը, Է.Էրիկսոնը և այլոք, որոնք հիմնվել են Ջ.Ֆրեյդի հետազոտությունների վրա: Սերունդների փոխհարաբերությունների նկատմամբ հետաքրքրությունը վերջին ժամանակներում աճել է՝ պայմանավորված տնտեսական և քաղաքական փոփոխություններով: Ընդ որում նրանց միջև առկա կոնֆլիկտների խորությունը պայմանավորված է երիտասարդ սերնդի կողմից ընդունվող և հերքվող արժեքային համակարգի չափաբաժնից: - Հերքվող չափաբաժինը սերունդների միջև ծագող կոնֆլիկտի հիմքն է, իսկ ընդունվող չափաբաժինը՝ համաձայնության, ուրեմն նաև կայունության հիմքն է: - Սերունդների փոխհարաբերությունների յուրովի բնութագիր է տվել ամերիկացի սոցիոլոգ Մ.Միդը, ըստ որի դրանք լինում են պոստֆիզուրատիվ, կոֆիզուրատիվ և պրեֆիզուրատիվ: Պոստֆիզուրատիվ մշակույթում նշանակալից դերը պատկանում է մեծահասակների սերնդին, կոֆիզուրատիվում՝ երիտասարդ սերնդի վրա մեծանում է հասակակիցների ազդեցությունը, իսկ պրեֆիզուրատիվ մշակույթը հնարավորություն է տալիս ուսուցման պրոցեսը դարձնել փոխադարձ, այսինքն ոչ միայն երիտասարդներն են սովորում մեծահասակներից, այլ նաև մեծահասակները՝ երիտասարդներից: Ընդ որում Միդը երիտասարդությանը վե-

րագրում էր <<սոցիալական բուլդոզերի>> ֆունկցիան, որը տարածք է մաքրում նոր սոցիալական հարաբերությունների և արժեքային համակարգերի համար: Ըստ Միդի՝ սերնդե սերունդ մշակույթի, արժեքների փոխանցման գործընթացն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ գործոնների վրա.

1. սուբյեկտիվ՝ ումից և ում է կատարվում փոխանցումը,
2. օբյեկտիվ՝ այսինքն, ինչպիսի նյութական և հոգևոր արժեքներ, գիտելիքներ են ենթակա փոխանցման,
3. գործընթացային՝ ինչպիսի եղանակով է կատարվում փոխանցումը,
4. ինստիտուցիոնալ՝ ինչ սոցիալական ինստիտուտների միջոցով է կատարվում փոխանցումը,
5. իրավիճակային-պատմական՝ կոնկրետ որ հասարակության շրջանակներում է կատարվում փոխանցումը:

Մ.Միդը նշում էր, որ մշակույթի միջսերնդային փոխանցումը իր մեջ ներառում է ինֆորմացիայի հոսք ոչ միայն ծնողներից երեխաներին, այլ նաև հակառակը. երիտասարդության կողմից մշակույթի և ընդհանրապես, ներկա իրավիճակի վերլուծությունն իր հերթին ազդեցություն է թողնում մեծահասակների վրա: Մակայն, չպետք է մոռանալ, որ երիտասարդության կողմից առաջարկվող ցանկացած նորարարություն հիմնվում է նախորդ սերունդների փորձի վրա, հետևաբար, նաև որոշակի մշակութային փորձի վրա:

Սերունդների միջև կոնֆլիկտի ծագման պատճառները կարող են ամենատարբերը լինել. մասնավորապես, երտասարդների վերաբերմունքը մեծահասակների նկատմամբ. նրանց համարում են անցյալի մնացորդներ և նրանց կարծիքը կարևոր չէ, քանի որ ժամանակները փոխվում են և փոխվում են կարծրատիպերը: Բացի այդ շեշտում են այն հանգամանքը, որ ավագ սերունդն առաջնորդվում է իր ժամանակաշրջանի կանոններով, ինչը խորթ է երիտասարդների համար: Հաջորդ պատճառը, որ մատնանշվում է, այն է, որ մեծահասակներն ավելի խելացի և իմաստուն են երիտասարդներից, նրանցից յուրաքանչյուրի համար կարևոր են արժեքային որոշակի համակարգեր:

«Հայրեր և որդիներ» հակամարտությունը երկկողմանի է. որդիները մեծանալով, դառնում են հայրեր, բայց միևնույն է, խնդիրը լուծում չի ստանում: Բնական է, որ հուզող խնդիրներին արդեն մոտենում են հայրերի տեսանկյունից. այն, ինչն ընդունելի էր երտասարդ տարիքում, անընդունելի է արդեն հասուն տարիքում: Հատկապես, արդի ժամանակաշրջանում, երբ փոխվել են արժեքային համակարգերը, ժամանակակից աշխարհի ընկալումը տարբեր սերունդների մոտ տարբեր ձևով է ընթանում, ինչն էլ բնականաբար, թույլ չի տալիս միանշանակ ձևով պատասխանել տարբեր հարցերի:

Միջսերնդային փոխհարաբերությունների դինամիկան բնական, պատմական գործընթաց է, որը հասարակության զարգացման որոշիչ վեկտորն է: Այդ փոխհարաբերությունները հանդիսանում են հասարակության գործառնության և զարգացման կարևոր գործոնները մեկը: Հատկապես այն կարևորվում է ճգնաժամային իրավիճակներում՝ անցումային ժամանակաշրջաններում: Անցումային հասարակությանը բնորոշ անոմալ վիճակն ուղեկցվում է արժեքային կոնֆլիկտներով, ինչն արտահայտվում է ոչ միայն անհատական, այլ նաև շատ խորին ար-

ժեքային խզումներով, մասնավորապես, երիտասարդների և մեծահասակների սերունդների արժեքային խզումներով: Միջսերնդային կոնֆլիկտների զարգացման արագությունը կախված է նրանից, թե որքան մեծ է այն ժառանգության չափաբաժինը, որը հերքվում է, և որքան նշանակալից է այն ժառանգությունը, որի հիման վրա իրենց կենսագործունեությունն է ծավալում երիտասարդ սերունդը: - Սոցիալական փոփոխությունների ժամանակաշրջանում ավագ սերնդի ձեռք բերած փորձը և սոցիոմշակութային արժեքները նոր պայմաններում ամբողջությամբ չեն կարող կիրառվել, ինչը պայմանավորված է միջսերնդային տարաձայնությունների մեծացմամբ, որն էլ իր հերթին նպաստում է միջսերնդային փոխհարաբերությունների հակամարտության խորացմանը: Սովորաբար, երիտասարդ սերունդը հեշտությամբ է հարմարվում նոր սոցիալական պայմաններին՝ կուտակելով համապատասխան փորձ: Անցումային ժամանակաշրջանում փոխվում են կարծրատիպերը, փոփոխություն է կատարվում ոչ միայն հասարակության կառուցվածքային շերտերում, այլ նաև հասարակական գիտակցության մեջ, այլ կերպ ասած կատարվում է սոցիալական փոխակերպում: «Սոցիալական փոխակերպում» հասկացությունը սոցիոլոգիական բառարաններում բնորոշվում է որպես սոցիալական փոփոխությունների սպեցիֆիկ տեսակ, սոցիալական ինստիտուտների կառուցվածքային վերակազմավորում, վարքի ստանդարտ դրսևորումների վերակազմավորում, արժեքային կողմնորոշումների երբեմն արմատական փոփոխություններ: Սակայն, ինչպես նշում է Դ.Պանտիչը, այդ հասկացությունը վիճելի է, քանի որ այն, ըստ էության, չի ենթադրում հասարակության նոր տիպի ծագում:<sup>1</sup>

Հասարակության փոխակերպումը կարող է կատարվել այնպիսի ճանապարհով, ինչպիսին է, օրինակ վերակառուցումը, լիբերալիզմը, ազատ շուկան և այլն: Ի դեպ վերակառուցումը ամբողջական գործընթաց է, որն, անհրաժեշտաբար ենթադրում է մարդկության կուտակած քաղաքական, մշակութային, գիտական, բարոյական պոտենցիալի օգտագործում: Մարդն է ի վերջո հանդիսանում վերակառուցման գլխավոր պայմանը, միջոցը և նպատակը բոլոր բնագավառներում:

Քաղաքակրթության ամբողջ ընթացքը հնարավոր չէ պատկերացնել առանց փոփոխությունների, առանց նոր բացահայտումների: Դրանք, բնականաբար, չեն կարող իրենց ազդեցությունը չունենալ հանրային կյանքի զարգացման վրա: Ինչպես նշում է Վ.Միրզոյանը. «Տնտեսական իրական բարեփոխումների բացակայության պայմաններում կրթական համակարգի ինքնին օգտակար և հիմնավոր բարեփոխումները նույնիսկ բացասաբար կարող են անդրադառնալ տնտեսական առաջընթացի վրա, քանի որ մի կողմից՝ բարձր որակյալ մասնագետներ պատրաստելը, այդ թվում՝ միջազգային զանազան կառույցներին միանալով և ծրագրեր կատարելով, բայց, մյուս կողմից՝ նրանց համապատասխան աշխատատեղերով չապահովելը ուղիղ ճանապարհ են բացում դեպի արտագաղթ, «ուղեղների» ատահոսքի ուժեղացում»:<sup>2</sup> Անցումային ժամանակաշրջաններում արժեքների բախումը արտահայտվում է ոչ միայն անհատական, այլ նաև

<sup>1</sup> *Пантич Д.* Конфликты ценностей в странах транзисии//Социологические исследования. М.1997-№ 6, с.27

<sup>2</sup> *Վ.Միրզոյան*, Նորաստեղծական մշակույթի ձևավորման խնդիրների սոցիալ-փիլիսոփայական վերլուծություն [www.yu.am](http://www.yu.am) Բանբեր Երևանի համալսարանի փիլիսոփայություն, հոգեբանություն 142.4, 2014

հասարակական մակարդակներում՝ հաճախ պայթյունների ձևով, որոնք ժամանակակից հայ իրականության մեջ սկիզբ են առել 1989-ական թվականներից և շարունակվում են մինչ օրս: Այդ արժեքային պայթյունները դարձան փոխակերպվող հասարակության սկզբնական էտապների բովանդակությունը, ինչն ուղեկցվում էր երիտասարդ և ավագ սերունդների արժեքային կոնֆլիկտներով:

Ինչպես նշում էր Վ.Տ.Լիսովսկին, ճգնաժամը հասարակության մեջ ծնում է առանձնահատուկ, սերունդների ոչ ավանդական կոնֆլիկտ: «<<Ռուսաստանում այն վերաբերում էր փիլիսոփայական, աշխարհայացքային, հասարակության և մարդու զարգացման հոգևոր հիմքերին, տնտեսության և արտադրության հիմնական հայացքներին, հասարակության նյութական կյանքին: <<Հայրերի>> սերունդը հայտնվեց այնպիսի իրավիճակում, երբ նյութական և հոգևոր ժառանգության փոխանցումը երիտասարդ սերնդին պրակտիկորեն բացակայում էր...Ռուս հասարակության մեջ սերունդների միջև պայթյունը ակնհայտ էր, ինչն արտացոլում էր պատմական զարգացման պայթյունները>>»:<sup>3</sup>

Ավանդույթները կարող են կենսունակ լինել և ամրապնդվել միայն համապատասխան մշակութային և բարոյահոգեբանական ոլորտում: Այսօր, ցավոք գիտությանը նվիրվածությունը հանրության արժեքային սանդղակում գրավում է ստորին տեղ՝ իր տեղը զիջելով ամեն գնով հարստանալու մոլուցքին:

Ինչպես նշում է Է.Հարությունյանը. «փոխակերպվող հասարակությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ մարդկանց ընկերային-տնտեսական պայմանները և ընկերամշակութային պահանջմունքները տարբեր արագություններով են զարգանում»:<sup>4</sup> Անցումային ժամանակաշրջանում հայ հասարակությունը միաժամանակ, գտնվելով երկու տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկում, մի դեպքում ներառվում է արևմտյան քաղաքակրթության մեջ, մյուս դեպքում՝ հայ իրականությանը բնորոշ պատրանքային ընկերամշակութային իրականություն ստեղծելու հնարավորությունների մեջ: Եվ այդ «ընկերային-քաղաքական իրականության մեջ կողմնորոշվելիս մարդիկ ոչ այնքան հետևում են վարքի որոշակի տիպի, որքան այդ վարքը համապատասխանեցնում իրենց պատրանքներին»:<sup>5</sup> Արդեն ձևավորված կարգերի, ավանդույթների քայքայումը անցումային ժամանակաշրջաններում նոր թափ է ստանում և երիտասարդ սերունդը մեծ արագությամբ հրաժարվում է նախորդ սերունդների կուտակած փորձից, նրան քննադատում է, առաջարկում է կենսական նոր ձևեր, աշխարհայացքի և վարքի նոր համակարգեր: Սոցիոմշակութային աշխարհն այլևս չի ներկայանում որպես մի ամբողջականություն ժամանակի և տարածության մեջ: Այդ փոփոխությունները կատարվում են այնքան արագ, որ ժամանակի առումով կարող են տեղի ունենալ մեկ սերնդի կյանքի ընթացքում: Սերունդների արժեքային կոնֆլիկտները հասարակության դեզինտեգրացիոն գործընթացների բնական հետևանք են, որոնք ուղեկցվում են ռադիկալ կազմավորումների ստեղծումով, սոցիալական տարբեր ինստիտուտների փլուզումով, մեծահասակների համար մեկ գաղափարախոսության սպառումով, նոր սպառողական ստանդարտների տարածումով և այլն: Գլոբալ սոցիալական փոխակերպումների շրջանում, երբ

<sup>3</sup> *Лисовский В.Т.* Духовный мир и ценностные ориентации молодежи России: Учебное пособие. СПб.2000.с20

<sup>4</sup> *Հարությունյան Է.* Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ. Երևան 2004. էջ 107

<sup>5</sup> *Հարությունյան Է.* Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ. Երևան 2004. էջ 108

փլուզվում են արդեն ձևավորված արժեքային համակարգերը, խարխվում են միջսերնդային փոխհարաբերությունների մեխանիզմները, միջսերնդային արժեքային կոնֆլիկտներն անխուսափելի են: Անցումային ժամանակաշրջանում միջսերնդային հարաբերությունները բարդանում են: Միջսերնդային արժեքային կոնֆլիկտները նման դեպքերում կապված են երիտասարդ սերնդի կողմից իրենց նախորդ սերնդի սոցիոմշակութային փորձի վերազնահատման հետ: Արժեքների և վարքի նորմերի միջսերնդային փոխանցման փլուզման արդյունքում առաջին տեղում է հայտնվում անհատականության դրսևորումը՝ որպես երիտասարդության ինքնակարգավորման ձև այն պայմաններում, երբ բացակայում են սոցիալական կարգավորման ունիվերսալ ձևերը:

Միջսերնդային հակասությունների սրումը հասնում է իր գագաթնակետին ռեֆորմների ժամանակաշրջանում: Սոցիալական փոխակերպումների պայմաններում միջսերնդային արժեքային կոնֆլիկտները դրսևորվում են ինչպես միկրոմակարդակում՝ կոնկրետ ընտանիքի շրջանակներում, այնպես էլ մակրոմակարդակում՝ հասարակության շրջանակներում: Ավագ և կրտսեր սերունդների աստիճանակարգության տարբերությունը և հակամարտությունը հասարակության վրա ունենում է ապակայունացնող ազդեցություն: Մակայն, ներկա ժամանակաշրջանում մեր հասարակության մեջ իրավիճակը նկատելիորեն փոխվել է: - Սոցիալական կյանքի քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում կայունացումը իր հետևից բերում է սերունդների միջև հակասությունների նվազեցմանը: Աճող նոր սերունդը պատկերացում չունի սովետական հասարակության մասին: Ռեֆորմների ժամանակաշրջանի երիտասարդներն արդեն միջին և ավելի տարիք ունեն և դարձել են «հայրերի սերունդ»: Սովետական ժամանակաշրջանի ավագ սերունդն աստիճանաբար հեռանում է սոցիալական ակտիվ կյանքից: Սոցիալական տրամադրությունների և երիտասարդ սերնդի արժեքային կողմնորոշումների փոփոխության հարաբերակցությունը ավագ սերնդի արժեքային համակարգի կառուցվածքի հետ հանդիսանում է հասարակության սոցիոմշակութային դինամիկայի ցուցանիշը:

Սերունդների միջև կոնֆլիկտը չպետք է դիտարկել միայն բացասական առումով: Ինչպես ցանկացած պայքար, այն նույնպես հիմք է հանդիսանում զարգացման համար: Կոնֆլիկտը բացահայտում և լուծում է գոյություն ունեցող հակասությունները և դրանով իսկ նպաստում հասարակության զարգացմանը:

**Асмик Хачатурян - Особенности проявления взаимоотношений поколений в трансформационном обществе.** - В статье анализируются особенности взаимоотношений между поколениями в трансформационном обществе, что является одним из главных факторов в развитии и функционировании общества. Динамика взаимоотношений между поколениями – это естественный, исторический процесс. Восприятие реальности у разных поколений проходит по-разному. Конфликт между отношениями поколений, в трансформационном обществе, углубляется особенно в переходные периоды. Продолжительность конфликтов зависит от значимости исторических изменений или скорости реформ. Резкие изменения в обществе вызывают травматический эффект, что еще больше углубляет противоречия отношений между поколениями.



**Hasmik Khachaturyan - *Particularities of interrelations of generation in a transforming society.*** -The article analyzes the particularities of interrelations between generations in a transforming society which is one of the most important factors of the activity and development of the society. The natural dynamics of intergeneration relations is a historical process. The perception of reality is different generations. The conflict in relationships of generations is intensifying especially in transforming societies in transitional periods. The duration of the conflicts depends on the importance of historical changes and the rapidity of reforms. The sharp changes in society cause traumatic effect which intensifies contradictions in intergeneration relationships.

# Լ Լ Ր Ա Գ Ր Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ ԱՄԵՐԻԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ (2014-2015թթ.-ապրիլ)

### ՆԱՂԱՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆ

**Բանալի բառեր** - ժխտողականություն, իրավական նորմ, ամերիկյան մամուլ, նուսնալ մակարդակ, իրադարձային ներկայացում, մասնակի ներկայացում, մեդիատեքստ, պատվիրված նյութ, փաստերի կեղծում, լուսաբանում

**Ключевые слова** - отрицание, правовая норма, американская пресса, номинальный уровень, презентация событий, частичная презентация, медиатекст, заказной материал, фальсификация фактов, освещение

**Key words** - denial, legal norm, american press, nominal level, event presentation, portial presentation, mediatext, ordered material, falsification of facts, coverage

20-րդ դարում տեղի ունեցած ոճիրից անցել է մեկ դար, չնայած Թուրքիան ոչ մի կերպ չի ընդունում հայ ազգի նկատմամբ գործած իր հանցանքը: Ընդհակառակը, թուրքական իշխանությունների կողմից դեռևս 1915թ-ից հետո սկսված Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը շարունակվում է մինչ օրս: Այսօր էլ Թուրքիան ոչ միայն անտեսում է Ցեղասպանությունը<sup>1</sup>, որպես միջազգային հանցագործություն սահմանող միջազգային իրավունքի տարբեր նորմերը<sup>2</sup>, այլև իր որդեգրած ժխտողական քաղաքականությունն իրականացնում է երկու հիմնական ուղղություններով՝ արտաքին քաղաքականության և ակադեմիական շրջանակների միջոցով, որոնք անմիջականորեն ֆինանսավորվում են կառավարության կողմից:

«Արտաքին քաղաքականության բնագավառում թուրքական իշխանություններն իրենց առջև հստակ նպատակ են դրել վերափոխել պատմությունն ու վերահսկել Թուրքիայի ապագան, մինչդեռ ակադեմիական շրջանակները քաղաքագետների համար գիտական հարթակ են նախապատրաստում՝ Հայոց ցեղասպանության մերժման վերաբերյալ պնդումներն առաջ մղելու համար»<sup>3</sup> ուժեղացնելով հայատյացության երևույթը ոչ միայն սեփական երկրի

<sup>1</sup> «Ցեղասպանություն» տերմինը բառարան մտավ 1944 թվականին, այն առաջին անգամ օգտագործեց հրեա փաստաբան Ռաֆայել Լեմկինը: / Blog.Liberal.am/

<sup>2</sup> 1948թ. դեկտեմբերի 9-ին Միավորված Ազգերի Կազմակերպությունն ընդունեց «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվերցիան՝ ըստ որի Ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է, և այս կոնվերցիան ստորագրող պետությունները պարտավորվում են կանխել, ինչու չէ՛ նաև պատժել Ցեղասպանություն իրականացնողներին:

<sup>3</sup> Էդիտա Գոլյան, Ցեղասպանության ժխտումը՝ որպես ռասիզմի դրսևորում. Մոտեցումները իջազգային իրավունքում, Հոդված; <http://www.genocide-museum.am/arm/articles-Edita-Gzoyan.php#sthash.56aLcjj.dpuf>

սահմաններում, կրոնական եղբայր պետություններում, կոնկրետ՝ Ադրբեջանում, այլև Արևմուտքում, հատկապես Միացյալ Նահանգներում:

Մեզ համար հետաքրքրական էր պարզել հայկական ամենամեծ սփյուռքը ներկայացնող պետության լրատվամիջոցների անդրադարձը հայկական հարցին, ասել է, թե՛ պաշտոնական Վաշինգթոնի դիրքորոշումը ինչպե՞ս է ներկայացնում ամերիկյան մամուլը, ինչպե՞ս է արձագանքում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությանը:

Հայ ժողովրդի տարբեր հատվածների համար շարունակում է «գերխնդիր» մնալ ամեն տարի ապրիլի 24-ին ԱՄՆ տարբեր նախագահների ելույթներում «ցեղասպանություն» եզրույթի հիշատակումը, չնայած որ 40-ից ավել նահանգներ արդեն ճանաչել են Հայոց եղեռնը՝ որպես պատմական անհերքելի իրողություն: Այս համատեքստում խնդրին մեր կողմից ուսումնասիրված պարբերականներն / «Նյու-Յորք թայմս», «Լոս Անջելես թայմս», «Վաշինգթոն փոստ» / անդրադարձել են տարբեր մակարդակներով՝ գիտական, ակադեմիական, համայնքային:

Օրինակ՝ հանրահայտ և վիճահարույց ռաբբի Շնուլի Բոտիչի («Համաշխարհային արժեքներ» ցանցի հիմնադիր) և Արևելյան Ամերիկայի Հայոց ցեղասպանության հարյուրամյակի հանձնաժողովի կողմից «Նյու Յորք թայմս» պարբերականի 2015թ. ապրիլի 18-ի համարում գետեղված ամբողջ էջը զբաղեցնող վճարովի հայտարարությունը խստորեն քննադատում էր նախագահ Օբամային Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր նախընտրական խոստումը չկատարելու համար: Հողվածում պատկերված էր մի երեխա պաստառը ձեռքին, որի վրա գրված էր. «Նախագահ Օբամա, ինչո՞ւ եք մեզ ստում»: Դրան հաջորդում էր վերնագիրը. «1.5 միլիոն հայ գոհերը ճշում են իրենց գերեզմանից. Մինչև ե՞րբ եք ժխտելու մեր ցեղասպանությունը, միայն գոհացնելու համար թուրք բռնակալին»<sup>4</sup>:

Երկրորդ հայտարարությունը, որն Օբամային հիշեցնում էր Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր տված խոստումը, հայտնվեց «Լոս Անջելես թայմս»-ի 2015թ. ապրիլի 24-ի համարում: Ծավալուն այս հոդվածում, որ տեղադրվել էր Կալիֆոռնիայի Օրինջ շրջանի գործարար Էդ Մուրադյանի կողմից, շեշտվում էր. «Ժամանակն է լինել այն ղեկավարը, որ Դուք խոստացել էիք լինել: Պարոն Նախագահ, ճիշտ ժամանակն է, որ այս 100-րդ տարելիցին կատարեք Ձեր տված խոստումը»: Մուրադյանի հոդվածում պատկերված էր Օբամայի լուսանկարը, դեսպան Մորգենթաուի 1915թ. հուլիսի 16-ի հեռագիրն ուղղված Պետդեպարտամենտին և 1915թ. դեկտեմբերի 15-ի «Նյու Յորք թայմս» թերթի լրատվության վերնագիրը: Հողվածն ավարտվում էր՝ «Ժամանակն է ճանաչել Հայոց ցեղասպանությունը»<sup>5</sup> կոչով:

«Եթե այս հոդվածներից մեկը կամ երկուսը որոշ անհանգստություն են պատճառել Մալիտակ տան պաշտոնյաներին, ապա արժեք դրանց վրա այդքան գումար ծախսել...»<sup>6</sup>, - իր հերթին նկատում է «Կալիֆոռնիա կուրիերի» հայ խմբագիրը:

Նկատենք, որ ամերիկյան մամուլում Հայոց ցեղասպանության ներկայացումն առաջին հերթին կախված է տվյալ լրատվամիջոցի քաղաքականությունից:

<sup>4</sup> <http://www.Iragir.am/index/arm/0/politics/view/115047#sthash.y3jbjuTE.dpuf>

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

Հաճախ անաչառ լրատվություն մատուցելու քողի տակ Հայոց ցեղասպանությունը ներկայացնելիս զանգվածային տեղեկատվության միջոցները կիրառում են արհեստական հավասարակշիռ մոտեցում՝ հավասարեցնելով ոճի իրական փաստերը Թուրքիայի ժխտողական քաղաքականության հետ: Այդ առումով վերջին տարիներին որոշակի փոփոխություն է նկատվում «Ատշիեյթիդ պրես»-ի, «Նյու Յորք Թայմս»-ի, «Լոս Անջելես Թայմս»-ի և այլ պարբերականների գործելաոճում: Մի կողմից 1915–1923 թթ. դեպքերը վերջիններս ներկայացնում են որպես ցեղասպանություն, մյուս կողմից անմիջապես արձանագրում, թե Թուրքիան ժխտում է տեղի ունեցածը: 2015թ. ապրիլին միայն «Նյու- Յորք Թայմս»-ը Ցեղասպանության թեմայով յոթ նյութ է գրել, մինչդեռ փաստենք, որ նման ինտենսիվ ձևով խնդրին անդրադարձել է նաև «Վաշինգթոն փոստ»-ը 1915թ-ին<sup>7</sup>:

Լուսաբանման տեսանկյունից առանձնացրել ենք Հայոց ցեղասպանությանն առնչվող հրապարակումներում ամերիկյան մամուլի հիմնական հետևյալ մոտեցումները.

### **1. Թեմայի շրջանառության / կամ ներկայացման / նումինալ մակարդակ**

Պաշտոնական Վաշինգտոնի կեցվածքը հավելյալ հիմք է տալիս մամուլին Ցեղասպանության հարցը պարզապես ներկայացնել որպես լրացուցիչ թեմա՝ մեկ այլ թեմա սպասարկելու համար: Ցեղասպանության թեմայի անգամ ակտիվ հիշատակումներ տեսնելիս վաղ է դատել այդ անդրադարձի իմաստային կշռի մասին: Այդ արտաքին, բառային շերտից այն կողմ կարող է երևալ անգամ հակառակը ժխտողական դիրքորոշման գերակայությունը:

Օրինակ «Լոս Անջելես Թայմս» օրաթերթի լրագրող Նոա Բիրմանը «ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման կոչ է արել ճանաչել Հայոց ցեղասպանությունը, քանի որ 100-ամյակը մոտենում է» հոդվածում գրում է. «Սա դարձել է հայկական ծագմամբ ամերիկացիների համար հիասթափեցնող ծես: Յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին նախորդող օրերին ջատագովները ջանում էին, որ Առաջին աշխարհամարտին ուղեկցող քաղաքական ցնցումների ժամանակ օսմանյան թուրքերի ձեռքով ավելի քան 1 մլն հայերի սպանությունը նկարագրելու համար Օբաման օգտագործի «ցեղասպանություն» բառը: Եվ ամեն տարի, չնայած թեկնածության ժամանակ Օբամայի խոստմանը, վերջինս խուսափում է օգտագործել այդ բառը»<sup>8</sup>: Նկատենք, որ հոդվածագիրը, հայերի օգտին դիտարկումներ անելով, փորձում է արտահայտել նաև որոշակի քաղաքական ենթատեքստ՝ հավելելով. «Այս տարի լրանում է 100-րդ տարելիցը եւ սա ուժեղ հետաքրքրության, խորացված խորհրդանշականության տարի է: Սա նաեւ նախագահ Օբամայի այն փուլն է, երբ նախագահները հեռանալիս կարող են իրենց ավելի մեծ խիզախություն թույլ տալ»<sup>9</sup>: «Վաշինգթոն փոստ»-ի հոդվածագիրն էլ իրավացիորեն նկատում է, որ շատ տարիներ ապրիլի 24-ն անցնում է առանց ճանաչման մասնավորապես՝ հայ համայնքներից դուրս: «Բայց ոչ այս տարի: Հարյուրամյակին

<sup>7</sup> Եգիպտեթ Չուլջյան-ԱՄՆ Հայ դատի գրասենյակի մամուլի և հասարակայնության հետ կապի պատասխանատու/«Առաջին լրատվական», ապրիլ, 2015թ.:

<sup>8</sup>“Los Angeles times”, Article “Obama urged to recognize Armenian genocide as 100th anniversary nears”, april, 2015.

<sup>9</sup> Նույն տեղում:

աշխարհին ուշադրություն է դարձնում այս մռայլ եղելությանը, իսկ Թուրքիան ապացուցում է իր անհուսալի դաշնակից լինելը»<sup>10</sup>:

## **2. Թեմայի իրադարձային ներկայացում**

Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրապարակումները հիմնականում իրադարձությունների արձագանք են, այլ ոչ թե հեղինակային նախաձեռնություններ: Մամուլը հպանցիկ անդրադարձ է կատարում հիշյալ թեմային՝ առանց մանրամասների: Հերթական անգամ Հայոց ցեղասպանության մասին խոսելու առիթ է դառնում ազգությամբ թուրք, գերմանաբնակ ռեժիսորի նկարահանած ֆիլմը՝ միաժամանակ նշվում Հրանտ Դինքի, նրա սպանության և նրա մասին ռեժիսորի ֆիլմ նկարելու չիրականացված ցանկության մասին<sup>11</sup>:

Նույն թեմայի առնչությամբ հերթական անդրադարձի ժամանակ «Նյու-Յորք թայմս» պարբերականը գրում է, որ «պատմաբանները հաշվարկել են՝ 1915-ին 1.5 մլն հայ է սպանվել օսմանյան թուրքերի կողմից: Իրադարձությունները լայնորեն ուսումնասիրվում են գիտնականների կողմից, թեև Թուրքիան հերքում է այն հանգամանքը, որ սպանությունները կոչվեն ցեղասպանություն՝ ասելով, որ զոհերի թիվը ուռճացված է, եւ որ մարդիկ մահացել են երկու կողմերից էլ, դա եղել է Օսմանյան կայսրության քայքայման արդյունքում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում»<sup>12</sup>:

Գրեթե նույն բովանդակությունն ունի «Լոս Անջելես թայմս»-ի հրապարակումներից մեկը, որտեղ հեղինակը, մեջբերելով թուրքական կողմի դիրքորոշումը, գրում է, թե հայերը զոհվել են Առաջին Աշխարհամարտի ժամանակ, իսկ զոհվածների թիվն ուռճացված է:

## **3. Թեմայի խիստ մասնակի ներկայացում**

2014թ. Միրիայի Քեսաբ քաղաքում տեղի ունեցածն առիթ հանդիսացավ ամերիկյան մամուլի համար, որպեսզի հիշեցնի Հայոց ցեղասպանության մասին: «Լոս Անջելես Թայմս»-ի հրապարակումներում տեղացիների մասին խոսելիս նրանց հայկական ծագման մասին հիշատակումը պարտադիր էր, ավելին՝ հիշեցվում էր, որ նրանք Օսմանյան կայսրության տարածքում իրականացված Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգներն են. «Քեսաբը հայաբնակ քաղաքաներից մեկն է, որ փրկվել է 1915թ. ցեղասպանությունից Օսմանյան կայսրության վերջին օրերին»<sup>13</sup>:

---

<sup>10</sup> "Washington post", " Be as brave as Kim Kardashian and the pope, Mr. President: Call the Armenian Genocide a 'genocide' / « Վաշինգթոն փոստ», «Եղիր այնպես քաջ, ինչպես Քիմ Քարդաշյանն ու Հռոմի պապը, պարո՛ն Նախագահ. կոչիր Հայոց ցեղասպանությունը՝ «Ցեղասպանություն», 14-ը ապրիլի, 2015թ.:

<sup>11</sup> "New York Times", "Fatih Akin Discusses his new film 'The cut', (Ֆաթիհ Աքընի նմանակում է իր նոր ֆիլմը՝ «Սպի»-ն), 26-ը օգոստոսի, 2014թ.:

<sup>12</sup> "New York Times", "Akin's 'The cut' puts armenian massacre on screen", (Աքընի «Սպի»-ն հայկական ջարդերը էկրան բարձրացրեց), 3-ը սեպտեմբերի, 2014թ.:

<sup>13</sup> Los Angeles Times, "Ethnic Armenians tell of fight from Kesab, their town in Syria" («Էթնիկ հայերը պատմում են ՄԻրայի իրենց քաղաքից՝ Քեսաբից իրականցվող թռիչքի մասին»), 9-ը ապրիլի, 2014թ.:

Այդ ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության պատմության, զոհերի ու վերապրածների մասին հիշատակումները հաճախակիանում են<sup>14</sup>, անշուշտ Քեսաբում տեղի ունեցող իրադարձությունների համատեքստում. «Ինչ տեղի ունեցավ Քեսաբում, ցեղասպանության շարունակությունն է, որը խնամքով նախապատրաստված էր և իրականացվեց հայերի դեմ»<sup>15</sup>, -մեջբերելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի խոսքը, նշում է թերթը, նաև եզրակացնում, որ հարձակումը սիրիական քաղաքի վրա, որը Հայոց ցեղասպանությունից փրկվածների ժառանգների տունն է, «անցյալի ցավալի հիշեցումն է»<sup>16</sup>:

ԱՄՆ կառավարության ազդեցությունն ավելի մեծ է, երբ Ցեղասպանության հարցին անդրադարձ է լինում: Ավելին՝ «խմբագրականներում արտաքին քաղաքականության վերաբերյալ անդրադարձեր են հանդիպում, որտեղ հիշեցվում է, որ Թուրքիան կարևոր դաշնակից է և այլն»<sup>17</sup>: Սակայն այս համատեքստում ևս տեսակետները վիճելի են:

Հարցն իբրև արդիական խնդիր պահելու անհրաժեշտությունը հայերիս համար չափազանց կարևոր է՝ հաշվի առնելով այն, որ չպատժված ռճիրը վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ: Ասվածն ամենևին չի նշանակում ցեղասպանության փաստի տեղափոխում անվերջ ձգվող քննարկումների դաշտ, առավել ևս ցեղասպանության իրողությունը կասկածի տակ դնել: «Նյու Յորք Թայմս»-ի լրատվական քաղաքականությունը հենց այդպիսին է: Թերթի բնորոշմամբ՝ «թուրքական ինքնությունը վիրավորելու համար» Ջրանտ Դինքի սպանության, ձգձվող դատավարության, կասկածյալների ձերբակալության մասին խոսելիս պարբերականը հիշեցնում է հայ խմբագրի ծագումը, չի շրջանցվում նաև Հայոց ցեղասպանության թեման, առանց դեպքերն իրենց անուններով կոչելու. «Հայերն ասում են, որ 1.5 մլն մարդ է սպանվել, թուրքերը հակադարձում են, որ պատերազմի ընթացքում թուրքեր էլ են սպանվել»<sup>18</sup>: Ցեղասպանության մասին իբրև պատմական իրողության և դրա իրավական հիմքերի մասին թերթը խոսում է Լեմկինի բնորոշումներով՝ միաժամանակ ուրվագծում «ցեղասպանության դեմքով արդարադատության առաքելությունը»<sup>19</sup>:

Ամերիկյան մամուլը հերթական անգամ Հայոց ցեղասպանության մասին հիշատակելիս մեջբերում է ամերիկացի պրոֆեսորի գրքից՝ «Հայոց ցեղասպանությունը և Ամերիկայի արձագանքը»: Հայերն ու թուրքերը, նաև նրանց

<sup>14</sup> Los Angeles Times, "Rebel assault on Kasab, Syria, revives dark memories for Armenians", («Ռեբելի հարձակումը սիրիական Քեսաբի վրա վերակենդանացնում է հայերի անլք հիշողությունները»), 4-ը ապրիլի, 2014թ.:

<sup>15</sup> Los Angeles Times, "Ethnic Armenians tell of fight from Kesab, their town in Syria" (Էթնիկ հայերը պատմում են ՄԻրայի իրենց քաղաքից՝ Քեսաբից իրականացվող թռիչքի մասին), 9-ը ապրիլի, 2014թ.:

<sup>16</sup> Los Angeles Times, "Lawmakers, Armenians urge US to investigate attack on Syrian city", («Օրենսդիրները, Հայերը կոչ են անում ՄՆ-ին հետաքննել սիրիական քաղաքի վրա կատարած հարձակումը»), 8-ը ապրիլի, 2014թ.:

<sup>17</sup> Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ Լրագրողի համահայկական 6-րդ համաժողովի նյութեր, Մանոյան Կ., Հոդված, «Հայոց ցեղասպանության լուսաբանման արդի խնդիրները ամերիկյան ՋԼՄ-ներում», ՀՀ սիյուռքի նախարարություն:

<sup>18</sup> «New York Times», "Police Chief Detained Over Armenian Editor's 2007 Murder", («Թուրքական ոստիկանության պետը ձերբակալվեց 2007-ին հայ խմբագրի սպանության համար»), 19-ը հունվարի, 2015թ.:

<sup>19</sup> «New York Times», «A mission for Justice in the face of Genocide», («Ցեղասպանության դեմքով արդարադատության առաքելությունը»), 16-ը հոկտեմբերի, 2014թ.:

տեսակետը հարցի առնչությամբ դարձյալ կողք կողքի են, ինչն ակնհայտորեն երևում է հենց վերնագրի ընտրությունից. «Թուրքերն ու հայերը»<sup>20</sup>: Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության մերժումը ստիպում է թերթին նաև ժխտողական քաղաքականություն իրականացնել, այն է ցեղասպանությունը չակերտների մեջ ներկայացնել՝ այդ կերպ կասկածի տակ դնելով պատմական իրողությունը. «Անկարան մերժում է «ցեղասպանությունը»<sup>21</sup>: Մեկ այլ պարագայում նշում, որ «ցեղասպանություն տերմինն օգտագործվում է որոշ արևմտյան պատմաբանների և օտարերկրյա խորհրդարանանների կողմից»<sup>22</sup>:

«Թուրքիան ցավակցում է հայերին սպանությունների համար» վերտառությամբ հրապարակման մեջ առավել քան ակնհայտ է ամերիկյան մամուլի գործելաոճը. «Միաժամանակ շարունակում է իր պաշտոնական տեսակետին, այն է իրադարձությունները ցեղասպանություն չէին՝ չնայած դրանք մի քանի արևմտյան կառավարությունների և միջազգային կազմակերպությունների կողմից այդպես են կոչվում»<sup>23</sup>:

Ընդհանրացնելով փաստենք, որ ամերիկյան մամուլի համար երբեմն ցեղասպանության իրողությունը կասկածի տակ դնելը մի կողմից որոշակի նպատակ հետապնդող գործելաոճ է, իսկ մյուս կողմից՝ պաշտոնական Վաշինգտոնի կեցվածքը հավելյալ հիմք է տալիս մամուլին Ցեղասպանության հարցը ներկայացնել որպես «Հայաստանն ասում է – Թուրքիան ասում է» սցենարի տեսքով:

Այդուհանդերձ, հայերի դեմ իրագործած ցեղասպանությունը՝ պատմական փաստ լինելուց գատ, նախևառաջ ծանրագույն միջազգային հանցագործություն է, մինչդեռ ելնելով քաղաքական նպատակներից՝ ԱՄՆ-ն իր գործելաոճով նպաստում է մարդկության նկատմամբ իրականացված հանցագործության անպատժելիությանը՝ այդպիսով Թուրքիայի «ջրադացին ջուր լցնելով», որի գերինդիրը Հայոց ցեղասպանության շարունակական ժխտողական քաղաքականությունն ու պատմությունը կեղծելն է:

## АННОТАЦИЯ

На кануне 100-летия Геноцида армян интерес к историческим событиям 1915-ого года увеличился как в научных, так и в политических аренах.

В этой статье мы сосредоточились на освещении вопроса отрицания Геноцида армян в контексте американских средствах массовой информации. Провели сравнительный анализ между публикаций трех знаменитых изданий, их мотивы и особенности освещения проблемы Геноцида, а также вопросы отрицания в

<sup>20</sup> "New York Times", "Turks and Armenians", («Թուրքերն ու հայերը»), 28-ը ապրիլի, 2014թ.:

<sup>21</sup> "New York Times", "Armenian leader says Ankara Denies 'genocide', but turks not enemy", («Հայ ղեկավարն ասում է՝ Անկարան մերժում է «ցեղասպանությունը», բայց թուրքերը թշնամի չեն»), 23-ը ապրիլի, 2014թ.:

<sup>22</sup> "New York Times", "Armenia Withdraws Peace accord with Turkey from Parliament", (Հայաստանը հետ է կանչում Թուրքիայի հետ խաղաղության համաձայնագիրը պառլամենտից), փետրվարի 16, 2015թ.

<sup>23</sup> "New York Times", "Turkey offers condolences to armenians over killings" (Թուրքիան ցավակցում է հայերին սպանությունների համար), ապրիլի 23, 2014թ.

медиа-текстах. В статье рассматривается контент-анализ используемой лексики и описательных терминов в освещении действий официального Вашингтона.

Обратили особое внимание на освещении разных программ и форумов, которые финансируются Турцией за / разделив турецкие действия на внешние и внутренние аспекты / отрицание Геноцида 20-ого века и на ответные действия армянской диаспоры в Соединенных Штатах Америки.

## ANNOTATION

Towards to 100th anniversary the interests of historical events in 1915 are grown in both scientific and political arenas. In this article we focused on the issue of American media coverage of the issue in the context of genocide denial.

We made a comparative analysis between the publications of the three famous editions of American media/ "The New- York times", "The Washington post", "The Los Angeles times"/ to observe their motives and characteristics of lighting Genocide issue, as well as issues of denial in the media texts. The article deals with the content analysis of the used vocabulary and descriptive terms in the coverage actions of official Washington.

We pay particular attention to coverage of various programs and forums that have been sponsored by Turkey / Turkish dividing effect on the external and internal aspects / for denial of the Armenian Genocide of the 20th century and the retaliatory actions of the Armenian Diaspora in the connections of the States.



---

## ՀԵՌՈՒՍՏԱՍԵՐԻԱԼՆԵՐԸ ԵՎ ԴԵՌԱՀԱՍԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ

### ԱՌԴԱ ԱՆԱՍՏԱՍՅԱԼ

Հոդվածում առանցքային գծերով դիտարկվում է հեռուստատերիալն իբրև մեդիատեքստ: Քննության են առնվում հեռուստատերիալի բովանդակային, ձևային, արժեքային բնութագրիչները՝ որպես դեռահասի սոցիալականացման գործոններ: Հիմնական վարկածը սերիալներին բնորոշող բերքականությունը հայ հասարակության համար սոցիալականացնող գործոն համարելու հնարավորությունն է: Շեշտադրված է հայկական հեռուստատերիալների՝ մշակութային - սոցիալական տեսակետից նշանակալի բաղադրիչները հետազոտելու անհրաժեշտությունը: Այս համատեքստում քննության առարկա է դարձել սոցիալականացումը՝ որպես անհատի արժեքային կողմնորոշումների աղբյուր:

**Բանալի բառեր:** Հեռուստատերիալներ, օճառային օպերաներ, դեռահասի սոցիալականացում, ողբերգականություն, էկրանի լեզու, հանրային համերաշխություն

**Ключевые слова:** «Мыльные оперы» социализация подростков, жалобы.

**Key words:** Soap operas, teenager's socializing, society, lamentations

Հեռուստատերիալներն այսօր ամենաքննարկվող մեդիաարտադրանքի թվում են: Պարբերաբար հետազոտողների ուշադրությանն են արժանանում դրանց բովանդակային, արժեքային, լեզվական և մի շարք այլ կողմեր: Մեր հոդվածի նպատակն է քննել դրանց համալիրը՝ որպես **դեռահասի սոցիալականացման վրա ազդող գործոններ:**

Հեռուստատերիալների կարևոր կողմերից մեկն այն է, որ դրանք ընթանում են կարծես իրական ժամանակի մեջ, իրական վայրում: Հեռուստատերիալներում նշվում են հիշարժան օրերը, իսկ գործողությունները պարբերաբար ընդմիջվում են քաղաքի տարբեր հատվածների համապատկերով: Դրանք նպատակ ունեն սպավորություն ստեղծել, որ սերիալի հերոսներն իրական մարդիկ են, որ ապրում են հեռուստադիտողի կողքին: Այսինքն՝ սերիալներում փորձ է արվում գործողությունների առավելագույն բնականության հասնել, ինչը հեռուստադիտողի, հատկապես դեռահաս հեռուստադիտողի մոտ կարող է որոշակի հարևանության, մտերմության զգացում առաջացնել՝ դրանով իսկ դառնալով ավելի ազդեցիկ: Հետևաբար այն գործողությունները, կենսակերպերն ու գաղափարները, որոնք ներկայացվում են հեռուստատերիալներում, մեկնաբանվում են որպես իրական հանգամանքներ՝ քաղված իրական կյանքից: Հայաստանյան հեռուստատեսաբաններին, սակայն, մտահոգում է այն հանգամանքը, որ «այսօր Հայաստանում, մեծ հաշվով, գերիշխող են մնում միատիպ, ընթացքում ձևավորվող, անհետևողական սցենարով տեղական սերիալները: Իրենց հերոսների սոցիալական տիպով համապատասխանելով մեր հեռուստահանրության միայն մի մասին՝ դրանք պարտադրվում են ողջ լսարանին»<sup>1</sup>: Բացի այդ՝ տեսաբանները խնդիր են համարում նաև այն, որ սերիալները ժամանակավրեպ վարքաձևեր ու թեմաներ

---

<sup>1</sup> Գ. Գալստյան, Ս. Մանուկյան, Ա. Ժամկոչյան, Հեռուստատեսության բովանդակությունը. ծրագրային ուղղվածությունները և բովանդակության ձևավորման գործոնները, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=7147&spphrase\\_id=48770](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=7147&spphrase_id=48770) (28.09.2015):

(ինչպես նաև առանց թեմայի սյուժեներ) են շրջանառում. «Դրանք ոչ այնքան այսօրն են արտացոլում, որքան երեկը, և այն բերում են այսօր՝ նոր սերնդի առջև կրկին խաղարկելու միջոցով: Օրինակ, թեև այսօր արդեն «արագ հարստացածների», «գողականների», «հեղինակությունների» սոցիալական տիպերն այնքան արդիական չեն, որքան մոտ տասը տարի առաջ, այսօր սերիալների «լավ ապրող լավ տղաներն» արհեստականորեն հետ են տանում այդ ժամանակաշրջան՝ ստիպելով ցուցադրվածն ընկալել որպես հիմնական պատկեր»<sup>2</sup>: Դեռահասն այսպիսով ձեռք է բերում պատկերացում էկրանից ներկայացվող երևանյան ինչ - որ ընտանիքների մասին, որոնց կյանքը կարելի է քննարկել, ինչպես հարևանների կյանքը: **Բամբասանքը՝ որպես հանրային համերաշխության կարևոր միջոց**, այստեղ էլ առկա է: Իսկ որպեսզի սերիալն իր մասին խոսելու հնարավորություն տա, անհրաժեշտ է, որ գործողությունները լինեն բավական հավաստի և բավական անսովոր միաժամանակ: Այս հանգամանքը թույլ է տալիս պնդել, որ սերիալներում շրջանառվում են հասարակության կարծրատիպերը, որոնք շատ բան կարող են պատմել տվյալ հասարակության արժեքների և ինքնապատկերացումների մասին՝ միաժամանակ վերարտադրելով դրանք:

Ըստ տեսաբանների՝ սերիալների հերոսների կարգավիճակը բնութագրվում է հիմնականում նրանց սեռով, տարիքով, ընտանիքի ատկայությամբ, դասակարգով և աշխատանքով<sup>3</sup>: Ուրեմն սերիալները **վերարտադրում են հասարակության կազմն ըստ սերիայի ստեղծագործական կազմի պատկերացման՝ բնութագրելով հասարակության դրությունն ու դրա փոփոխությունները**:

Այսպես «Արմենիա» հեռուստաընկերության «Հարազատ թշնամի» հեռուստասերիայի գլխավոր հերոսներից մեկը, որ ապօրինի երեխա ունի, այդ երեխայի մոր մասին ասում է. «Սյուզինները շարվեշարան գուքան ու կերթան, բայց ինձ իմ ընտանիքից ոչ մեկ չի կարա կտրի»<sup>4</sup>: Չամուսնացած, բայց երեխա ունեցած խաբված աղջկան նույն հեռուստասերիալում ծնողները չեն ընդունում: Հերոսներից մեկը դիպուկ կերպով բնութագրվում է սերիալում ներկայացվող իրավիճակը. «Ով ամուսնացած էր, բաժանվեց, ով առողջ էր, հիվանդացավ»<sup>5</sup>:

Ինչպես ս կարող են ազդել այս պատկերացումները դեռահասի վրա: Մեդիայի տեսաբանները պնդում են, որ հեռուստատեսության դարում երեխաները սոցիալականանում են և սկսում են հասուն դերեր կատարել շատ ավելի վաղ, քան անգամ մի քանի տասնամյակ առաջ: Ընդ որում՝ նրանք իրական են համարում հեռուստակրանին տեսածը: Այդպիսով մեդիան և հատկապես հեռուստատեսությունը ազգային և մշակութային սոցիալականացման շատ կարևոր աղբյուր են դառնում<sup>6</sup>: Ստացվում է՝ մեր ներկայացրած օրինակը կարող է դեռահասին մտքեր հուշել իր ապագա սոցիալական վարքի մասին՝ նրա մոտ ձևավորելով պատկերացումներ այն հասարակության մասին, որտեղ ինքն ապրում է:

Ամերիկյան «Սանտա Բարբարա» հեռուստասերիալը վերլուծելիս հետազոտողներն ուշադրություն են դարձրել այն հազամանքին, որ սերիալում մշտապես այս կամ այն կերպ ներկա է ամերիկյան հասարակության **«սոցիալականաց-**

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս **Л. Саффили**, Подростки-зрители мыльных опер, <http://culturca.narod.ru/Soap1.htm> (27.04.15).

<sup>4</sup> «Հարազատ թշնամի», 24.11.14 եթեր:

<sup>5</sup> «Հարազատ թշնամի», 24.11.14 եթեր:

<sup>6</sup> Տե՛ս **А. Черных**, Мир современных медиа, Москва, Территория будущего, 2007, с. 104.

**նող եռամիությունը»**՝ հաշիվ բանկում, անձնական բժիշկ և փաստաբանի ծառայություններ<sup>7</sup>: Հետաքրքիր է ուսումնասիրել՝ կա՞ն արդյոք նման ընդհանրական գործոններ հայկական հեռուստասերիալներում: Կարծում ենք՝ բոլոր հեռուստաալիքների հայկական հեռուստասերիալների ամենաբնորոշ գծերից մեկը ձգձգված **ողբերգականությունն** է: Այդ տպավորությունը ստեղծվում է ոչ միայն սյուժեով, լացող կերպարներով, այլև իրադարձությունների ներկայացման դինամիկայի բացակայությամբ: Տեսարանների անինքնաբավությունը, պակասավորությունը փորձ է արվում լրացնել երաժշտությամբ, որը հաճախ հերոսների ձայնից բարձր է հնչում: Այնինչ հայտնի է, որ երաժշտությունը ռեժիսորական պրոֆեսիոնալ աշխատանքի դեպքում կարևոր արտահայտչական և անգամ իմաստային գործառույթներ է կատարում: Հանրահայտ կինոռեժիսոր Ա. Փելեշյանը երաժշտության կիրառման իր մեթոդի մասին ասում էր. «Ինձ դուր է գալիս, երբ ֆիլմի մեջ երաժշտությունն ու պատկերը փոխվում են տեղերով, եւ երաժշտությունը «ներխուժում» է պատկերի տարածքը, իսկ պատկերը «մտնում» է երաժշտության մեջ: Առանց դրա չի կարելի սպասված էֆեկտը ստանալ: Պարզվում է, որ կարելի է «տեսնել» ձայնն ու «լսել» պատկերը, քանի որ այդ երկու բաղադրիչները փոխում են իրենց նշանակությունն ու տարածքը»<sup>8</sup>: Մերիալներն, անշուշտ, արտադրվում են ոչ իբրև գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործություններ<sup>9</sup>, սակայն լինելով էկրանային ստեղծագործություններ՝ դրանք, այդուամենայնիվ, քննարկելի են **էկրանի լեզվի** շրջանակներում: Մտահոգիչ է, որ դրանցում չեն պահպանվում գեղարվեստական արժեքավորության անգամ տարրական սկզբունքները: Սակայն միարժեք պատասխան դժվար է գտնել այն հարցին՝ արդյոք միայն գեղարվեստական թերացում է նշված հանգամանքը, թե՞ նաև բովանդակային-արժեքային որոշակի նշանակություն ունի: Մեզ հետաքրքրող հարցն այն է՝ **կարելի՞ է արդյոք այդ ողբերգականությունը սոցիալականացնող գործոն համարել հայ հասարակության համար**: Կարծում ենք՝ սա կարևոր և խորքային հարցադրում է, որ պահանջում է որոնել և գտնել **հայկական հեռուստասերիալների՝ մշակութային - սոցիալական տեսակետից նշանակալի բաղադրիչները**: Այստեղ չենք հավակնում լիարժեք և ապացուցելի պատասխան տալ այս հարցին, սակայն կարծում ենք, որ միայն հարցադրման մասին մտորումն արդեն կարևոր բացահայտումներ կարող է անել:

Հայկական հեռուստասերիալներ դիտելիս տպավորություն է ստեղծվում, որ գլխավոր հերոսների նկատմամբ համակրական վերաբերմունք առաջացնելու գրեթե միակ միջոցը նրանց տառապանքը ներկայացնելն է, ընդ որում՝ այնպես, որ այդ տառապանքը մշտապես լալահառաչ լինի: Հայկական հեռուստասերիալներին նախորդած լատինամերիկյան հեռուստասերիալներում ևս գլխավոր հերոսներն ամենաաներևակայելի փորձությունների են ենթարկվում և տառապում են, սակայն այդ **տառապանքը ներկայացվում է որպես շարժում, որպես գործո-**

<sup>7</sup> St' u Санта-Барбара» как универсальный хронотоп, <http://kinoart.ru/archive/1997/02/n2-article3>.

<sup>8</sup> Ա. Փելեշյանի խոսքը,

URL://[http://www.anunner.com/name/biography/%D4%B1%D5%90%D5%8F%D4%B1%D5%8E%D4%B1%D4%B6%D4%B4\\_%D5%93%D4%B5%D4%BC%D4%B5%D5%87%D5%85%D4%B1%D5%86\\_%D4%B1%D5%87%D5%88%D5%8F%D4%BB?lang=en](http://www.anunner.com/name/biography/%D4%B1%D5%90%D5%8F%D4%B1%D5%8E%D4%B1%D4%B6%D4%B4_%D5%93%D4%B5%D4%BC%D4%B5%D5%87%D5%85%D4%B1%D5%86_%D4%B1%D5%87%D5%88%D5%8F%D4%BB?lang=en) (24.07.15):

<sup>9</sup> St' u Charlotte Brunson, "Writing about Soap Opera", Television Mythologies: Stars, shows & sings, edited by Len Masterman, Taylor & Francis e-Library, 2005, p. 77.

**դություն, առնվազն որպես կենդանի խոսք:** Հայկական հեռուստասերիալներում, ընդհակառակն, տառապանքը ներկայացվում է որպես էկրանին գրեթե քարացած դեմք՝ հոգեվիճակն ընդգծել փորձող անվերջանալի երաժշտությամբ: Նման տպավորություն է ստեղծվում, օրինակ, «Արմենիա» հեռուստաընկերության «Բախտաբեր» հեռուստասերիալի հերոսուհու տառապանքը ներկայացնող տեսարաններում: Հայկական հեռուստասերիալների ամենաակնառու ընդհանրությունը, թերևս, առաքինի հերոսի, հիմնականում հերոսուհու նմանաբնույթ տառապանքն է:

Ինչպես նշում են տեսաբանները, սերիալներում կերպարները ներկայացվում են այնպես, որ հասկանալի լինեն անզամ պատահական հեռուստադիտողին: Ըստ հագուստի, ըստ ձայնի կարելի է պատկերացնել, թե ով է նա և ինչպիսի դեր է խաղում<sup>10</sup>: Կարելի է եզրակացնել, որ լավի ու վատի այս որոշակիությունը հիմնվում է լավի ու վատի պարզ հակադրության վրա: Այսինքն՝ սերիալը հիմնվում է հեռուստադիտողի կարծրացած արժեքային պատկերացումների վրա: Այստեղ է, որ հարց է առաջանում հայկական հեռուստասերիալներում նման ողբերգականության սոցիալ - մշակութային պայմանավորվածության և, որ այստեղ առավել կարևոր է, **անհրաժեշտության** մասին: Որքանով է նշված միտումները բնութագրական արդի հայաստանյան մշակութային տարածության համար: Մշակութային տարածության, որ բնութագրվում է որպես սոցիալական կյանքի տարածություն, որտեղ մարդկանց հարաբերությունների հիմքում ընկած է այն ընդհանուր փորձը, որ կուտակել է մշակույթը, և սոցիալական կյանքի այն տարածությունը, որտեղ մշակույթը փոխանցում է այդ ընդհանուր փորձը<sup>11</sup>:

Ըստ համաշխարհային վիճակագրության՝ աղջիկներն ավելի են հակված սերիալներ դիտելու, քան տղաները<sup>12</sup>: Բացի այդ՝ «օճառային օպերաների» ստեղծման պատմությունը կապված է կանանց հետ, ուստի դրանք հաճախ համարում են կանանց ժանր: Սերիալներում իրադարձությունները զարգանում են ասեկոսենների, խոստովանությունների, թաքուն մտադրությունների և գաղտնիքների բացահայտման ճանապարհով: Իսկ այդ ամենն ավանդաբար կապվում է առավելապես կանանց հետ: Ենթադրվում է, որ խնդիրների հաղթահարումը և հարաբերությունների քննարկումը կանանց կյանքի անբաժանելի մասն են, և հենց այդ հատկանիշներն էլ դրդում են կանանց հեռուստասերիալներ դիտել<sup>13</sup>: Կարծում ենք՝ այս վիճակագրությունը համապատասխանում է նաև հայաստանյան իրականությանը, ուստի հիմնվելով դրա վրա՝ թերևս սխալված չենք լինի՝ ասելով, որ լացող հերոսուհիների կերպարներն առավելապես ազդեցիկ կարող են լինել հենց աղջիկների համար: Ըստ տեսաբանների՝ սոցիալականացումն անհատի արժեքային կողմնորոշումների աղբյուրն է<sup>14</sup>, «անհատի կողմից տվյալ հասարակության մեջ ընդունված սոցիալական դերերի յուրացման գործընթացն

<sup>10</sup> Տե՛ս **Л. Сафхил**, Подрасткы-зрителы мыльных опер, <http://culturca.narod.ru/Soap1.htm> (27.04.15).

<sup>11</sup> Տե՛ս **Г.Н. Бровченко, М.А. Найден**, Роль телевещания в формировании единого культурного пространства России: ценностный аспект проблемы, <http://www.ipk.ru/index.php?id=1926> (30.11.15).

<sup>12</sup> Տե՛ս "Мыльные оперы": причины популярности, <http://edportal.net/referaty/zhurnalistika/91311/> (30.11.15).

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>14</sup> Տե՛ս **Г.Н. Бровченко, М.А. Найден**, Роль телевещания в формировании единого культурного пространства России: ценностный аспект проблемы, указ. соч..

ինչպես սեփական, ահնպես էլ «օտար» ակտիվության միջոցով»<sup>15</sup>: Ուրեմն կարելի է ասել, որ ըստ մեր առաջադրած վարկածի՝ եթերից տեսնելով հերոսների կայացման, սոցիալական ինքնահաստատման, արդարացիության ապացուցման ընթացք որոշակիորեն ընդգծված ողբերգականության մթնոլորտում՝ դեռահաս աղջիկը կարող է ազդվել հենց այդ մթնոլորտից՝ որպես չձևակերպված արժեք յուրացնելով նաև այդ ողբերգականությունը: Կարելի է նկատել, որ **բավական նուրբ առնչություն կա առաքինության և այդ ողբերգականության միջև, որ վերարտադրում է առաքինի հայ աղջկա ավանդական ընկալումը:**

Անշուշտ, սա միարժեք և ինքնակա գործընթաց չէ: Իրականում սոցիալականացումը տեղի է ունենում բազմաթիվ գործոնների փոխազդեցության պայմաններում, ուստի հեռուստասերիալների նշված հնարավոր ազդեցությունը սոցիալականացման գործոններից ընդամենը մեկն է: Սակայն կարծում ենք, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նման նուրբ խնդիրների վրա, որոնք աննկատելի կերպով մասնակցում են դեռահասների սոցիալականացման ընթացքին և կարող են բազմաթիվ անցանկալի հետևանքներ ունենալ:

#### **Аннотация**

В статье рассматриваются «мыльные оперы» как медиатекст, где раскрывается их содержание, оценка ценностей которых является предметом социализации подростков.

В статье акцентируется внимание на язык «мыльных опер» (телесериалов), представленные ценности, а также культурные ориентиры.

В данном контексте, предметом исследования стала социализация как источник ценностной ориентации личности.

#### **Annotation**

The article outlines the soap operas as media texts.

Then it reveals the content, the value examination of soap operas as teenager's socializing issue.

The article focuses on soap opera's language, presented values as well as cultural positions.

In this context the subject of examination has been the socialization as a source of orientation.

---

<sup>15</sup> Социология. Основы общей теории / Под ред. академика РАН Г.В. Осипова. М., 2003, с. 214.

---

## ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ԴԵՌԱՀԱՍԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ

### ԱՌԴԱ ԱՆԱՍՏԱՍՅԱԼ

Հոդվածի քննության առարկան մեդիահետազոտությունների փաստական տվյալներն են՝ կապված զանգվածային հաղորդակցության լեզվական պրակտիկաների սոցիալապես նշանակալի ոլորտի հետ:

Զանգվածային տեղեկատվական տեքստերը ժամանակակից աշխարհում լեզվի շրջանառման ամենատարածված ձևերից են: Այս տեսանկյունից հոդվածում ներկայացված են մասնավորապես հեռուստատեսիալների և հումորային հաղորդումների լեզուն, դրա կապն անցանկալի արժեքների և վարքային դրսևորումների հետ: Շեշտադրված է գրական հայերենի նկատմամբ մտահոգիչ վերաբերմունքի խնդիրը:

**Բանալի բառեր:** Մեդիատեքստ, հեռուստատարտադրանք, գրական լեզու, գոեհկարանություն, հասարակական համերաշխություն:

**Ключевые слова:** Медиатексты, телевизионный продукт, литературный язык, вульгарная речь

**Key words:** Media texts, TV product, literary language, vulgar speech

Ժամանակակից մեդիահետազոտությունները փաստում են՝ զանգվածային հաղորդակցությունը հանրային - լեզվական պրակտիկաների սոցիալապես նշանակալի ոլորտ է<sup>1</sup>: Աշխարհում այսօր լեզվի կիրառման ծավալի հիմնական մասը բաժին է ընկնում զանգվածային հաղորդակցությանը: Զանգվածային տեղեկատվության տեքստերը՝ մեդիատեքստերը, լեզվի ժամանակակից շրջանառման ամենատարածված ձևերից են: Դրանց ընդհանուր ծավալը շատ անգամ գերազանցում է մարդկային գործունեության այլ ոլորտներում խոսքի ընդհանուր ծավալը:

Մեդիատեքստերի ողջ բազմազանության մեջ իրենց կարևոր դերով առանձնանում են հեռուստատեքստերը<sup>2</sup>: Մասնավորապես ակնհայտ է, որ հեռուստատեսությունն ազդեցություն է ունենում երեխայի լեզվի վրա՝ զարգացնելով և հարստացնելով խոսքը նոր բառերով և լեզվական կառույցներով: Այս հանգամանքը, սակայն, դրական կողմից գատ կարող է խիստ բացասական հետևանքներ ունենալ, քանի որ հայկական հեռուստատեսիայից հնչող խոսքը խիստ մտահոգիչ է: Այս առումով կարևոր մի հանգամանք կարելի է նկատել, օրինակ, տեղական արտադրության և արտասահմանյան հեռուստատեսիալները համեմատելիս. արտասահմանյան հեռուստատեսիալները թարգմանվում են հիմնականում գրական հայերենով, և սերիալներում հնչող գրական հայերենը խորթության, անբնականության տպավորություն չի թողնում: Պատկերն այլ է տեղա-

---

<sup>1</sup> Տե՛ս Գ. Գ. Добросклонная, Медиалингвистика: системный подход к изучению языка СМИ, <http://www.ffl.msu.ru/research/publications/dobrosklonskaya/dobrosklonskaya-medialingvistika.pdf> (30.11.15).

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

կան արտադրության հեռուստասերիալների դեպքում: Ըստ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի մի խումբ դասախոսների անցկացրած հետազոտության՝ «Շանթ» հեռուստաընկերության «Բանակում» հեռուստասերիալի նախընտրողների 71.68 % -ը կարծում է, որ պետք է խոսել ըստ իրավիճակների, իսկ 35.84% -ը՝ որ պետք է խոսել գրական հայերենով<sup>3</sup>: Կարծում ենք՝ այս խնդրի հանգամանակի քննությունը կարող է կարևոր բացահայտումներ անել՝ կապված ժամանակակից հայերենի կիրառության և մասնավորապես մեդիակիրառության հետ կապված:

Այսօրվա գլոբալացող աշխարհում կարելի է մեդիատեքստերի որոշակի կլիշեացում-միօրինակացում նկատել, երբ, ինչպես վկայում են տեսաբանները, կիրառվում և տարածվում են հեռարձակման որոշակի կայուն ոճեր: Մասնագետները խոսում են **գլոբալ կլիշեավորվածության** մասին<sup>4</sup>: Կարծում ենք՝ հեռուստասերիալները՝ որպես հեռուստաարտադրանք, կարելի է դասել մեդիատեքստերի թվին և ուսումնասիրել նշված մոտեցման օգնությամբ:

Հայկական իրականությունն սերիալները ներթափանցեցին 1990 - ական թվականներին լատինամերիկյան միջավայրից: Դրանց պատկանելությունն օտար մշակույթի, դրանով իսկ որոշ հեռավորությունը հայկական միջավայրից կարծես թույլ է տալիս թարգմանության համապատասխան, ընդ որում՝ բավական միօրինակ լեզու գտնել առանց դժվարությունների: **Գրական հայերենը, փաստորեն, հարմար է ներկայացվող մշակութային իրականության այդ հեռավորության առկայության պայմաններում:** Պատկերն այլ է տեղական արտադրության հեռուստասերիալների դեպքում: 2003 թվականից ի վեր արտադրվող տեղական արտադրության հեռուստասերիալները բազմաթիվ առումներով ընդօրինակում են լատինամերիկյան հեռուստասերիալներին: Մակայն ըստ լեզվամշակութաբանական ուսումնասիրության սկզբունքների՝ անխզելի կապ, օրգանական միասնություն և ամբողջականություն կա ազգային լեզվի և մշակույթի միջև: Իսկ մեդիատեքստերը հազեցած են մշակույթի տեսակետից նշանակալի տեղեկատվությամբ, քանի որ դրանցում ամրագրվում և արտացոլվում են ազգային լեզուների և մշակույթների ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնահատուկ կողմերը: Հենց ՋԼՄ-ների լեզվում են առաջին հերթին արտացոլվում հասարակության ներսում տեղի ունեցող սոցիալ – գաղափարաբանական փոփոխությունները, ամրագրվում են նոր հասկացություններն ու կառույցները<sup>5</sup>: Հետևաբար հայկական արտադրության հեռուստասերիալները՝ հազեցած փողոցային ժարգոնով, գոեհկաբանությամբ, պարզունակ լեզվական կառույցներով, ժամանակակից հայոց լեզվի և դրանով իսկ մշակույթի մասին մտահոգիչ վկայություններ են պարունակում: **Այն իրականությունը, որը մեզ օտար չէ, որը շրջապատում է մեզ և բնական է մեզ համար, կարճ ասած՝ մեր իրականությունը, փոխանցելի չէ մեր գրական լեզվով:**

<sup>3</sup> Տե՛ս **Ա. Մենևճյան, Ջ. Մարգարյան, Վ. Ստեփանյան**, Հայ դեռահասի արժեհամակարգի փոխակերպումները էլեկտրոնային լրատվամիջոցների ազդեցությամբ, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 19:

<sup>4</sup> Տե՛ս **Т. Г. Добросклонная**, Медиалингвистика: системный подход к изучению языка СМИ, <http://www.ffl.msu.ru/research/publications/dobrosklonskaya/dobrosklonskaya-medialingvistika.pdf> (30.11.15).

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում:

Իհարկէ, այստեղ դեր ունի և այն հանգամանքը, որ, ինչպես նշում են լեզվաբանները, բավական մեծ տարբերություններ կան հայոց լեզվի տարբեր՝ գրական և խոսակցական շերտերի միջև: Մակայն ևս մեկ անգամ պետք է շեշտել այն հանգամանքը, որ ոչ հայկական հեռուստասերիալներ կրկնօրինակելիս որոշակիորեն հնարավոր է լինում գտնել գրական խոսակցական լեզու, որ անբնականության տպավորություն չի գործում, այնինչ հայկական արտադրության հեռուստասերիալներում հաճախ հանդիպում ենք ծայրահեղ գոեհիկ լեզվի: Հետևաբար փողոցային հայերենի ընտրությունը խոսում է նաև գրական հայերենի հետ կապված բովանդակությունների խորթացման մասին: Իսկ դեռահասը, որ ծնողների միջնորդությամբ դառնում է ոչ իր համար ստեղծված այս մեդիաարտադրանքի սպառող, լեզվի նման դրսևորումների յուրացման միջոցով յուրացնում է ոչ միայն անմաքուր, հաճախ փողոցային հայերեն, այլև համապատասխան կենսաձևեր, և որ ավելի վտանգավոր է, **նրա համար օտարանում է գրական մայրենի լեզուն:**

Ուստի ևս մեկ անգամ պետք է շեշտել, որ Էկրանից ներկայացված բովանդակությունները և լեզուն փոխկապակցված և փոխապայմանավորված են: Սա է պատճառը, որ հայաստանյան հեռուստատեսաբանները քննարկում են անցանկալի արժեքային և վարքային ազդեցության հարցեր՝ «շեշտադրելով մերթ նպատակային, մերթ ոչ պրոֆեսիոնալիզմից բխող «ինքնահոս» գործոններ: Տեղական արտադրության սերիալները մտահոգում են աննպաստ գաղափարներ, բառապաշար և խոսելաճ տարածելու, ներընտանեկան ու միջանձնային հարաբերությունների վնասակար մոդելներ և հերոսների աղքատիկ կերպարներ մատուցելու, հանրությանը հանցավորին և արատավորին «ընտելացնելու» պատճառով»<sup>6</sup>:

Հատկապես մտահոգիչ է հումորային հաղորդումների և ֆիլմերի լեզուն. ծիծաղելիության հասնելու համար հեռուստաարտադրողներն աշխատում են ոչ միայն զավեշտալի իրավիճակներ ստեղծել, այլև զավեշտալի լեզու: Իսկ որպես այդպիսին՝ կիրառվում են գրեթե բացառապես գոեհկաբանություններն ու փողոցային ժարգոնը: Հեռուստասերիալներում գրական հայերեն են խոսում հիմնականում ծիծաղելի կերպարները, ուստի գրական խոսելը ներկայացվում է իբրև **ծիծաղելիության գործոն:** Այս հանգամանքն ուղղակիորեն կարող է ազդել դեռահասների լեզվական նախապատվությունների վրա՝ ձևավորելով զգուշավորություն գրական լեզվի և դրա հետ կապված վարքային առանձնահատկությունների նկատմամբ:

Մտահոգիչ են հեռուստահաղորդումների օտարալեզու վերնագրերը (օրինակ՝ «Ֆուլ հաուս» («Արմենիա»), «Քոմենթս» («Արմենիա»), «Արմ քոմեդի» («ATV»)), ինչպես նաև զովագղներում հաճախ հնչող օտար բառերը (օրինակ՝ Իդեալ համակարգի արտադրանքը գովազդող հոլովակներից մեկում, որտեղ յուրաքանչյուր նախադասության կեսն անգլերենով է ասվում): Դրանցով սրախոսությունը, զվարճալիքը, հարմարավետությունը, ժամանակակից լինելը կապվում են օտար լեզվի, հետևաբար նաև օտար մշակույթի հետ՝ ենթատեքստ-

<sup>6</sup> Գ. Գալստյան, Ս. Մանուչյան, Ա. Ժամկոչյան, Հեռուստատեսության բովանդակությունը. ծրագրային ուղղվածությունները և բովանդակության ձևավորման գործոնները, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=7147&sphrase\\_id=48770](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=7147&sphrase_id=48770) (28.09.2015):



տում վերարտադրելով և ձևավորելով այն պատկերացումը, որ նշված որակները հայկական չեն: Ոչ ակնհայտ, հաճախ անգիտակցաբար կատարվող այս քայլերը որոշակի արժեքային մթնոլորտ են ստեղծում, որ չի կարող բացասաբար չազդել դեռահասների ազգային ինքնագիտակցության վրա:

Կարծում ենք՝ այստեղ խնդիրն ավելի խորքային է, քան կարող է թվալ առաջին հայացքից: Դպրոցում ձեռք բերելով ազգային - հայրենասիրական հաճախ պաթետիկ ինքնապատկերացումներ՝ դեռահասը միանգամայն այլ շեշտադրմամբ տեղեկատվություն է ստանում հեռուստատեսներից: Նկատելի խզում է առաջանում դպրոցում և կրթվելու ոչ ֆորմալ միջավայրերում ձեռք բերած գիտելիքների և տպավորությունների միջև: Արդյունքում առավելությունը հաճախ տրվում է երկրորդին՝ համապատասխան արժեքային կողմնորոշումներ յուրացնելուն գուզահեռ կասկածի տակ դնելով ֆորմալ կրթության փոխանցած տեղեկատվությունը:

Այս միտումները կարող են բավական խորքային վտանգների մասին վկայել, վտանգների, որոնք առաջին հայացքից տեսանելի չեն: Այսպես՝ ըստ մշակութաբան Չ. Բայադյանի՝ «Ներկա հասարակական համերաշխության սկզբունքի խորքում, եթե նույնիսկ այդպիսի սկզբունք երբեք բացահայտ ձևով չի ձևակերպվել, կարելի է տեսնել գրական արևելահայերենի և նրա հետ սերտորեն առնչված արժեքների, հաստատությունների և այլնի հասարակական իրավասության առկախումը, եթե ոչ՝ մերժումը, դրանց խորհրդանշանային ուժի անտեսումը»<sup>7</sup>:

Այս մտավախությունը հաստատվում է մեդիայի տեսության բազմաթիվ կարևոր վկայություններով, ըստ որոնց՝ զանգվածային հաղորդակցության տեքստերն ավելի ու ավելի հաճախ են հիմք ծառայում լեզվի ժամանակակից վիճակի քննարկման համար: Պատկերավոր կերպով ասած՝ եթե գեղարվեստական գրականության լեզուն իրականության արտացոլման «գեղանկարչական» եղանակ է, ապա զանգվածային տեղեկատվության լեզուն, որ ակնթարթորեն դրոշմում է ցանկացած իրադարձություն, ցանկացած տեղաշարժ կյանքում, ավելի շուտ լուսանկարչական եղանակ է<sup>8</sup>: Կամ ըստ մեկ այլ բնութագրման՝ «Ունենալով մեծ հեղինակություն և տարածման ամենաժամանակակից միջոցները՝ ՋԼՄ - ների լեզուն տեղեկատվական հասարակության մեջ կատարում է ազգային լեզվի յուրատեսակ մոդելի դեր: Այն մեծ չափով ձևավորում է գրականության նորմեր, լեզվական ճաշակներ և նախընտրություններ, ազդեցություն է ունենում քաղաքականության, գաղափարաբանության, արվեստի և գրականության ընկալման վրա»<sup>9</sup>:

Այսպիսով՝ խիստ մտահոգիչ է հեռուստատեսներում հնչող հայերենը: Մտահոգիչ է մի կողմից որպես հասարակական վերաբերմունքի դրսևորում սեփական լեզվի նկատմամբ, մյուս կողմից՝ որպես նման վերաբերմունքի ամրագրում և

<sup>7</sup> Չ. Բայադյան, Սոցիալական նոր կարգ և փոխակերպվող տեղեկատվամիջոցներ, Հանրային ոլորտ. Վիճարկման և վերլուծման միջև (խմբ. Վ. Ազատյան), Երևան, Անկյունաքար, 2007, էջ 123-124:

<sup>8</sup> Տե՛ս **Т. Г. Добросклонная**, Медиалингвистика: системный подход к изучению языка СМИ, <http://www.ffl.msu.ru/research/publications/dobrosklonskaya/dobrosklonskaya-medialingvistika.pdf> (30.11.15).

<sup>9</sup> Язык СМИ как объект междисциплинарного исследования, МГУ, 2004, стр.5.

զանգվածայնացում: Հեռուստատեկրանից հնչող լեզուն դեռահասներին ոչ միայն աղավաղված լեզու, այլև դրա հետ կապված արժեքների աղավաղված պատկեր է փոխանցում:

### **Аннотация**

В статье рассматриваются фактические данные исследования СМИ, связанные с социально значимой сферой общественных и языковых практик масс-медиа. Массовые информационные тексты являются наиболее распространенными формами современного обращения. С этой точки зрения, в статье рассматривается язык «мыльных опер» его стиль, наблюдения телевизионных обозревателей о нежелательных ценностях и поведенческих проявлениях, которые обусловлены различными факторами. Показательным является то, что языковые практики непосредственно влияют на ценностную систему подростков, что приводит к формированию нежелательного поведения.

### **Annotation**

The article examines the factual data of media studies connected with socially significant sphere of mass media's public, linguistic practices. Mass informational texts are the most common forms of modern circulation. From this point the article examines the language of soap operas, the style ,the observations of TV reviewers about unwanted values and behavioral manifestations, which are caused by various factors.

It is significant that linguistic practices directly influence on the value systems of teenagers forming undesirable behavior.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

#### *ВАЛЕРИ ТУНЯН*

100-летие геноцида армян: истоки, мифы и последствия..... 3

#### *ՔՐԻՍՏԻՆԵ ՅԱԽՇՅԱՆ*

Մերձավոր եվ միջին արեվելքի երկրների հայկական համայնքների պատմության ուսումնասիրությունը 1960-ական թվականներին ..... 21

#### *ՄԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Գիտակրթական կյանքը Արցախում 1639-1700թթ (համառոտ ակնարկ) ..... 32

### Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

#### *ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ*

Վահան Տերյանի մի քանի նամակների ուսումնասիրման անհրաժեշտությունը ..... 41

#### *ԷՄՄԱ ՆԻԿՈՅԱՆ*

Սուրեն Այվազյանի պատմագեղարվեստական արձակը ..... 46

#### *ԱԼԻՍԱ ՀԱՍՍՆՅԱՆ*

Թվի խորհուրդը Համո Սահյանի քնարերգության մեջ ..... 50

#### *ԱՄԻՔԵՆ ԱՏԱՆԵՍՅԱՆ*

Методические основы изучения творчества И.А.Бунина в вузе ..... 58

### Լ Ե Զ Վ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

#### *ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ*

Անգլերենի բժշկական բառապաշարի ուսուցման տրամախոսական հայեցակերպը ..... 64

#### *ՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

Comment rédiger une composition? ..... 71

#### *SVÉTA OHANIAN*

Acte d'expression d'excuse dans la langue française ..... 75

#### *ԱԲԴԱ ՄԱՐԶՅԱՆ*

Միակազմ նախադասություններին ուսուցումը ..... 78

#### *ЮЛЯ ХОДЖОЯН*

Опыт анализа художественно-документальной прозы на уроках русского языка для гуманитарных факультетов (на материале повести с.алексеевич “у войны не женское лицо”) ..... 89

#### *AÏDA MARDANIAN*

La maîtrise des règles de l'accord du français pour les apprenants arméniens..... 96

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*ARMEN TSHUGURYAN, NUNE SRAPYAN*

Issues of doctorial education methodology .....	100
<i>ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏԻՅԱՆ, ԱՐՏԱԿ ՅԱՐԱԶՅԱՆ</i>	
Միկրոֆինանսավորման համակարգային կառավարման բարելավումը ՀՀ-ում.....	114
<i>ՎՈԼՈՂՅԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ</i>	
Տնտեսական աճի դինամիկա .....	121

## ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

*ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*

Հայաստանի Առաջին Հանրապետության քաղաքական համակարգի յուրահատկությունը.....	125
<i>ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ</i>	
Սերունդների փոխահարաբերությունների դրսևորման առանձնահատկությունները փոխակերպվող հասարակությունում .....	131

## ԼՐԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*ՆԱՂԱՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ՎԱՐԴՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ,*

*ԱՆՆԱ ՄԿՐՏԻՉՅԱՆ*

Հայոց ցեղասպանության ժխտողականության հարցն ամերիկյան մամուլում (2014-2015թթ.-ապրիլ).....	137
<i>ԱԲԴԱ ԱՆԱՍՏԱՍՅԱՆ</i>	
Հեռուստատերիալները և դեռահասի սոցիալականացումը.....	144
<i>ԱԲԴԱ ԱՆԱՍՏԱՍՅԱՆ</i>	
Հեռուստատերերի լեզուն և դեռահասի արժեհամակարգը.....	149

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱԿՈՒՆՔ»-Ի ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:
- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):
- Հոդվածի վերջում գրել հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում, և բանալի - բառերը:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով
  - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Բնական գիտությունների ֆակուլտետի մասնաշենք՝ Մելինե Մելիքյանին, կամ
  - ուղարկել [akunq.ysuib@gmail.com](mailto:akunq.ysuib@gmail.com) և [banber\\_ib@ysu.am](mailto:banber_ib@ysu.am) էլեկտրոնային հասցեներով:



# Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ  
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 2 (12)

Համարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Մ.Կ. ՄԵԼԻՔՅԱՆԻ

Չափսը՝ 70x100<sup>1</sup>/<sub>16</sub> : Տպ. մամուլը՝ 9,875:  
Տպաքանակ՝ 100:

---

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1:

